



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ԴԱՏԱՊԱՐԵԱՆՆԵՐԻ ԱՆՁԻ ՈՒԽՈՒՄԱԽԻՌՈՒԹՅՈՒՆ**  
Հետազոտություն
- **ԱՇՏ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**
- **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԾՈՒՐԳ**  
Պատմատեսական վերլուծություն
- **ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**
- **ՎԱՆԴԱԼԻՇՄ**  
Սահմանագատումը այլ իանցակագմերից

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ  
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ  
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է



2013 թվականից  
ապրիլի 9-ին  
ՀՀ Ազգային ժողովի  
հատուկ նիստում,  
հանդիսավոր  
պայմաններում  
կայացավ  
ՀՀ Նախագահի  
պաշտոնում  
վերընտրված  
Նախագահ  
Սերժ Սարգսյանի  
երդմնակալության  
արարողությունը:

ՀՀ Սահմանադրության և Վեհանոր Ավետարանի վրա երդմելուց հետո,  
Նախագահ **Սերժ Սարգսյանը** հանդես եկավ ելույթով, որում նաև նաև նախագահական պատճենները նշեց.

«Առաջիկա հինգ տարներին մեր պետության և ժողովրդի առաջնահերթ խնդիրներն են համարում տնտեսական առաջընթացը: Հայաստանի հիմնախնդիրների մի ողջ փաթեթ այս հարթությունում է: Կառանձնացնեն երեք հիմնականը՝ արտագաղթ, գործազրկություն, աղքատություն: Դրանց լուծումները նույնպես այս հարթությունում են: Արդունավետ և վերելքի ճանապարհը բնած տնտեսություն. ահա հաջողության մեր բանաձևը:

Երկրորդ առաջնահերթությունը իրավունքի գերակայության ապահովումն է: Բոլորի հավասարությունը օրենքի առջև պարտադիր պայման է մեր թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական զարգացման համար:

# №76

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՇԴԵՄ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 թՎԱԿԱՆԻՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

ԱՐՄԵՆ ԴԱՏԻԵԼՅԱՆ - նախագահ  
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ԴԱՏԻԵԼՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՅԱՆ  
ՎԱՐԴԱՄ ՇԱՐԻՆՅԱՆ  
ԳԱՈՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՅՈՎՐԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## Գլխավոր Խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.  
375010, ք. Երևան, Յանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72  
[www.genproc.am](http://www.genproc.am)

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝  
06.05.2013 թ.  
Ֆորմատ՝ 70 X 100 1/16  
Տպաքանակ՝ 500  
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2013 թ.

# 2013

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՅ)  
կողմից ընդգրկված է թենածառական (1999թ.)  
և դրսորուական (2002թ.) ասենախտությունների  
հիմնադրույթների հրապարակման համար բույլատրելի  
գիտական պարբերականների ցանկում:

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է

(շարունակություն)

Երրորդ առաջնահերթությունը, որն ամենաուղղակի կերպով կապված է նախորդի, այսինքն՝ իրավունքի գերակայության հետ, ժողովրդավարության խորացումն է: Համեմատե՛ք ինձ տարի առաջվա Հայաստանը այսօրվա Հայաստանի հետ և կտեսնեք տարբերությունը: Համեմատե՛ք խոսքի, մամուլի, հավաքների ազատության մակարդակները: Համեմատե՛ք հասարակական կազմակերպությունների և ընդհարնապես քաղաքացիական հասարակության կայացածության մակարդակները: Խոստանում եմ, որ եղածով չենք բավարար-վելու, կանգ չենք առնելու: Չինզ տարի հետո մենք ունենալու ենք ժողովրդա-վարության բոլորովին նոր՝ անհամեմատ բարձր մակարդակ: Դա ես միայնակ չեմ անելու, դա անելու ենք միասին, սիրելի հայրենակիցներ»:



ՀՀ Նախագահի պաշտոնն ստանձնելու հանդիսավոր արարողությունից հետո 2008 թվականին ծևավորված ավանդույթի համաձայն, **ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ**, այցելել է «Եռամբուր» պանթեոն և հարգանքի տուրք մատուցել իրենց կյանքը հայրենիքի անկախության համար զոհաբերած հերոսների հիշատակին:

Հայաստանի Հանրապետության Նախագահ, ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար **ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ** նույն օրը նախագահական նստավայրում մասնակցել է ՀՀ Նախագահի պաշտոնի ստանձնման կապակցությամբ կազմակերպված զորահանդեսին:

# Ի ԿԱՏՈՎՈՒՄՆ 2012-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԳՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ՝ Մշակվել Են օրինագծեր

Ի Կատուրումն ՀՀ Նախագահի՝ 2012 թ. հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի»՝ ՀՀ դատախազությունում մշակվել են «Դատախազության մասին» և ՀՀ քրեական օրենագրում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր:

Մշակված նախագծերին կարող եք ծանոթանալ ՀՀ դատախազության ինտերնետային էջի Քննարկումներ բաժնում: [www.genproc.am](http://www.genproc.am)

- Մշակվել է դատախազների վերադասության հարաբերությունները կարգավորող նորմերը հստակեցնող օրինագիծ
- Մշակվել են դատախազի կողմից իր լիազորությունների շրջանակում տրված օրինական պահանջների պարտադիր կատարումն ապահովող օրինագծեր
- Մշակվել է հանցավորության դեմ պայքարում իրավապահական մարմինների գործողությունների համակարգման կազմակերպահավական կառուցակարգերը սահմանող օրինագիծ
- Ուսումնասիրվել է պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրածման օրինականության նկատմամբ հսկողության դատախազական գործառությունների միջազգային փորձը:

## ՄԻԶԱԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

# ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԱՄ արդարադատության դեպարտամենտի ներկայացուցիչներին

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2013թ. ապրիլի 10-ին ընդունել է ԱՄ արդարադատության դեպարտամենտի պաշտոնյաներ Քերոբին Նյութոնբին և Ժաստին Ֆրիդմանն: Հանդիպմանը ներկա են եղել նաև Հայաստանում ԱՄ արտակարգ եւ լիազոր դեսպան Զոն Յեֆթերնը, դեսպանատան իրավախորհրդատու Զոն Լուլեջյանը:

Կողմերը քննարկել են ընթացիկ տարվա քետրվարի 18-ին կայացած ՀՀ նախագահական ընտրությունների ընթացքում ընտրախախտումների վերաբերյալ ահազանգերը, հաղորդումներն ստուգելու ուղղությամբ Հայաստանի իրավապահ նարմինների ձեռնարկած քայլերի և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծին վերաբերող հարցեր:

ՀՀ գլխավոր դատախազը հյուրերին տեղեկացրել է ընտրախախտումների վերաբերյալ



ահազանգերին արձագանքելու ուղղությամբ դատախազությունում ծեւավորված կառուցակարգերի մասին՝ նշելով, որ հնարավոր ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների պատշաճ գրանցումն ու դրանց համարժեք քրեականական գնահատական տակ ապահովելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որն իրականացրել է դատախազական հսկողությունը: Խնդրում ընդգրկվել է 12 դատախազ: Աշխատանքային խնդրի գործունեության համակարգումն կիրականացնի ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արամ Թամազյանը:

**Ա. Յովսեփյանն** արձանագրել է, որ գրանցվել է 266 հաղորդում, որոնցից 192-ը՝ ԶԼՍ-ների հրապարակումների հիման վրա: Դրանց քննարկման արդյունքներով հարուցվել է 13 քրեական գործ, որոնցից 5-ը՝ 7 անձի վերաբերյալ ուղարկվել է դատարան: Արձանագրելով ընտրախախտումների վերա-

բերյալ քրեական գործերի քննության առանձնահատկություններն ու դժվարությունները՝ կողմերը կարևորել են դրանց պատշաճ և համարժեք քրեականական գնահատական տակ ու մեղավորներին քրեական պատախանատվության ենթարկելը, ընդգծել, որ միայն համարժեք պատժողական քաղաքականությունը կարող է ունենալ կանխարգելիչ նշանակություն:

Անդրադասնալով քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման աշխատանքներին՝ զրուցակիցները շեշտել են նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը: Հյուրերը բարձր են գնահատել այդ ուղղությամբ դատախազության ձեռնարկած քայլերն ու դերակատարությունը և հավաստել իրենց պատրաստակամությունը աջակցելու իրականացվող բարեփոխումներին՝ ուղղված Հայաստանում օրենքի գերակայության ամրապնդմանն ու ժողովրդավարության զարգացմանը:

## Հանդիպում Եվրոպական կոմիտեի պատվիրակության հետ

**2013թ. Ապրիլի 4-ին << գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել հանդիպում Եվրոպայի խորհրդի խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (ԽԿ) պատվիրակության հետ:**

Պատվիրակությանը ընդունել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Ա. Թամազյանը**:

Հանդիպման ընթացքում, պատվիրակության ղեկավար պարուն **Ռեստելինին** ներկայացրել է հանձնաժողովի կատարած ուսումնասիրությունները և նշել, որ կան դրական տեղաշարժեր, սակայն իրենք ցանկանում են ուշադրություն հրավիրել այն խնդիրների վրա, որոնք բարելավման կարիք ունեն: Պատվիրակության անդամները անդրադառնալով զգատագրի կամ ծերակալվածների ժամանակավոր պահնամ վայրերում գտնվող անձանց նկատմանք վատ վերաբերմունքի դեպքերին, առանձնացրել են վատ վերաբերմունքի դեպքերի կամխարգելման, դրանց բացահայտման և պատժողական քաղաքականության հարցերը: Բանախոսները նշել են, որ այս ոլորտներում առկա են մի շարք բացքորումներ, որոնք շտկման և բարելավման կարիք ունեն:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ **Ա. Թամազյանը** նշել է, որ համամիտ է բարձրացված խնդիրների հետ, որ դեռևս կան բարեփոխման ենթակա հարցեր, և շեշտել, որ

ՀՀ դատախազությունը, օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պայքարում է հանցավոր այդ երևույթների դեմ: Պարուն **Ա. Թամազյանը** միաժամանակ ընդգծել է նաև, որ ՀՀ դատախազությունը պատրաստակամ է լսելու հանձնաժողովի առաջարկները, քննարկելու և օրենսդրության սահմաններում դրանք կիրարկելու:

Հանդիպումը անփոփել է ՀՀ գլխավոր դատախազ **Ա. Յովսեփյանը՝** շնորհակալություն հայտնելով հանձնաժողովի անդամներին, մանրակրկիտ աշխատանքների, խնդիրները հանգամանալից ուսումնասիրելու և վերհանելու համար, և հավաստիացրել, որ ՀՀ դատախազության ղեկավարությունը պատրաստակամ է և վճռական, իրականացնելու այն բոլոր բարեփոխումները, որոնք կարող են նպաստել հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Հյուրերը շնորհակալություն են հայտնել ՀՀ գլխավոր դատախազին ջերմ և կառուցողական հանդիպման համար:

# ՆՈՐ ՈՐՍԿ՝ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Համագործակցության փաստաթուղթը Հայաստանի և Իրանի  
դատախազությունների միջև



«Հյանավոր դատախազագ Աղվան ՀռովսեֆՅանի հրավերով 2013 թվականի ապրիլի 29-ից մայիսի 2-ը աշխատանքային այցով Հայաստանում էր գտնվում Իրանի Խալամական Հանրապետության գյխավոր դատախազագ ԴՈԼԱՍՀՈՍԵՅՑ ՍՈՀՍԵՆԻ Էժեհի գյխավորած պատվիրակությունը»:

2013 թվականի ապրիլի 30-ին ՀՀ գլխավոր դատախազությունում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աղվան Հռովսեփյանը և Իրանի Խալամական Հանրապետության գլխավոր դատախազ Ղուլամհոսեյն Սոհսենի Էժեհի ստորագրել են երկու երկրների միջև հրավական համագործակցության մասին փաստաթուղթը, որին կիաջորդի հետագա համագործակցության կոնկրետ ծրագրերի մշակումը: «Իրանի հետ մենք հարևաններ ենք: Ամեն տարի ավելանում են ապրանքաշրջանառության, գրոսաշրջության մասշտաբները, և, բնականաբար, իրավական կարգավորման հարցերը պիտի կարողանան ապահովել այս հարաբերությունները: Յուրաքանչյուր տարի մենք Իրանի դատախազության հետ շուրջ քսան հարցում ենք ունենում: Այսօրվա դրությամբ Իրանի տասը-տասներկու քաղաքացի մեր քրեակատարողական հիմնարկ-

ներում պատիժ են կրում տարբեր հանցագործություններ կատարելու համար: Անցած տարի և այս տարվա ընթացքում պատիժը կրելու համար ԻԻՇ-ին ենք հանձնել քանինգ դատապարտյալ: Այս ամենն առայսօր մենք արել ենք դիվանագիտական հարաբերությունների շնորհիվ: Բոլոր նման հարցերով մենք առնչել ենք ԻԻՇ դեսպանատան աշխատակիցների հետ: Եվ այդ հարաբերությունները դրական արդյունք են տվել, նպաստել են իրավական լուծումներին: Շնորհակալություն դեսպանատանը: Այս պայմանագիրը ստորագրելուց հետո հնարավորություն կունենանք իրավական հարցերով անմիջապես համագործակցել Իրանի դատախազության հետ: Եվ, բնականաբար, բոլոր ծագած հարցերն ավելի օպերատիվ և արդյունավետ կլուծվեն», - նշել է Աղվան Հռովսեփյանը:

## ՄԻՋԱՉՎԱՅԻՆ ԿԱՊԵՐ

«Այսօր Իրանի և Հայաստանի հարաբերությունները բարեկամական և մտերմիկ են: Տարբեր ոլորտներում մեր երկրների հարաբերությունները զարգանում և ընդլայնվում են: Փորձը ցույց է տվել, որ երկրների քաղաքական և տնտեսական հարաբերություններն առանց դատարիավական համագործակցության ամբողջական չեն: Ուստի Հայաստանի Հանրապետության և Իրանի Խոլամական Հանրապետության դատական իշխանությունները ևս ցանկանում են ընդլայնել իրավական ոլորտում հետագա համագործակցությունը... և այսօրվա փաստաթուղթը հիմք կիանդիսանա, որպեսզի համագործակցությունն այդ ոլորտում ավելի զարգանաև ընդլայնվի», — պատասխան խոսքում ասել է Ղուլամհոսեյն Սոհիսենի էժեին:

Փաստաթորի ստորագրումից հետո երկու երկրների գլխավոր դատախազները պատասխանել են լրագրողների հարցերին:

«Ստորագրված համագործակցության փաստաթուղթը դրական ազդեցություն կունենա», արդյոք, թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ երկու երկրներում տարկող պայքարին», -հարցին Իրանի գլխավոր դատախազը դրական պատասխան տվեց: Նշեց, որ այսօր թմրանութերի շրջանառությունը աշխարհի բոլոր երկրներում համարվում է մեծագույն չարիք: Ասաց նաև, որ տարածաշրջանում թմրանութերի տարածումը կտրուկ մեծացել է: Իի՞ն-ն ներկայումս իրոք բախվում է մեծ խնդրի հետ՝ կապված թմրանութերի շրջանառության հետ: Աֆղանստանից այդ թմրամիջոցների արտահանման համար օգտագործվում է Իրանի տարածքը: Իրենք դրա դեմ պայքարելու համար մեծ ռեսուրսներ են ծախսում և շատ խիստ պատճեներ են կիրառում: «Մենք մեր բոլոր հարևաններին հայտարարել ենք, որ պատրաստ ենք համագործակցել թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում, և կարծում ենք այս փաստաթուղթն էլ հիմք կիանդիսանա, որ ավելի լուրջ պայքար մնվի հանցագործության այդ տեսակի դեմ: Առաջին հերթին պետք է բացահայտվեն այն խմբավորումները, որ իրականացնում են թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, պետք է կանխարգելիչ միջոցներ կիրառվեն նրանց նկատմամբ, և պիտի կարողանանք հասնել նրան, որ միջազգային ասպարեզում այդ երևույթի դեմ պայքարողներն իրենց պարտականությունը լիարժեք կատարեն», - ասաց Իրանի գլխավոր դատախազը:

Ի լրացումն գործընկերոց պատասխանի, ՀՀ գլխավոր դատախազն ընդգծեց, որ վերջին տարիներին Հայաստանում ավելի հաճախ բացահայտվում և դատապարտվում են թմրամիջոց իրացնողները: «Որեւէ քրեական գործ, եթե խոսքը թմրամիջոցի մասին է, չի կատեցվում, մինչև չքացահայտվեն իրացման աղյուրները: Տավոք, վերջին տարիներին մի շաբթ դեպքեր ունենք, որ թմրամիջոցներ Հայաստան են ներմուծվում մեր հարևանների՝ Իրանի և Թուրքիայի սահմաններով: Ունենք գործեր, որ հայտնաբերել և դատի ենք տվել համապատասխան մարդկանց: Նշեմ նաև, որ Իրանի Խոլամական Հանրապետությունում լուրջ պայքար է մղվում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ: Պայքարը ոչ թե թղթով ու գրչով է, այլ իրավապահ մարմինները ստիպված նաև զենքը ծեռքին են պայքարում այդ բանդաների դեմ: Մեր համագործակցությունը կնապատի նրան, որ Հայաստանը նույնպես վաղը, մյուս օրը չի դառնա թմրամիջոցների ապօրինի շրջանառության տարանցիկ երկիր, որովհետև Հայաստանը երեք չի եղել նման երկիր», - ասաց Աղվան Հովսեփյանը:

Դարցին, թե Իրանում, արդյոք, կա՞ն Հայաստանի քաղաքացիներ, որ պատիժ են կրում տեղի ազատազրկման վայրերում, Իրանի գլխավոր դատախազը ժխտական պատասխան տվեց: Իսկ Հայաստանի գլխավոր դատախազը հավաստիացրեց, որ մեր հարևաններից Իրանի իրավապահ ոլորտի հետ համագործակցության «եզրերն առավել են, քան որեւէ այլ երկրի հետ»:

Ի պատասխան մեկ այլ հարցի՝ Ղուլամհոսեյն Սոհիսենի էժեին ասաց, որ հաշվի առնելով թմրամիջոցների տարածման և օգտագործման խիստ վնասնգավոր բնույթը՝ Իի՞ն համարժեք պատիժներ է կիրառում: Այսօր երկրում առկա դատապարտյալների քառասունչորս տոկոսը դատապարտված են թմրանութերի ապօրինի շրջանառություն իրականացնելու համար: Իսկ երկրում այդ հանցանքի համար սահմանված են մահապատճեն՝ ցման բանտարկություն, երկարաժամկետ պատագրկում և մեծ չափի դրանկան տուգանքներ:

Հուշագրի ստորագրումից առաջ ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը առանձնագրույց է ունեցել Իի՞ն գլխավոր դատախազի հետ, որի ընթացքում քննարկվել են երկողմ հարաբերությունները էլ ավելի սերտացնելու և գործնական դարձնելու խնդիրներին վերաբերող հրատապ հարցեր:

**«Հախազահ Սերժ Սարգսյանը 2013թ. ապրիլի  
30-ին ընդունել է աշխատանքային այցով  
Հայաստան ժամանած Իրանի Էկամական  
Հանրապետության գլխավոր դատախազ  
Դոլամհոսեյն Սոհենի Էժեին»**



Ողջումելով Իրանի գլխավոր դատախազին մեր երկրում՝ հանրապետության նախագահը հոյս է հայտնել, որ հայ-իրանական հարաբերություններին նոր ռորակ կիաղորիի Իրանի գլխավոր դատախազի այցի ընթացքում երկու երկրների գլխավոր դատախազը միջև ստորագր-

ված հուշագիրը՝ խթանելով դատադրավական ոլորտում երկու պետությունների արդյունավետ համագործակցությունն ու գործնական հարաբերությունները:

Հանրապետության նախագահը նշել է, որ երկու երկրների բարձրաստիճան պաշտոնատար անձանց փոխայցելությունները վկայում են երկկողմ հարաբերություններն էլ ավելի ամրապնդելու հայաստանի և Իրանի իշխանությունների վճռականության մասին և ընդգծել, որ Հայաստանը կարևորում է բարեկամ Իրանի հետ համագործակցության հետագա խորացումը ոչ միայն քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում, այլ նաև դատադրավական ոլորտում:

**2013 թվականի մայիսի 2-ին Իրանի Էկամական  
Հանրապետության գլխավոր դատախազ Դոլամհոսեյն  
Սոհենի Էժեին գլխավորած պատվիրակությանը ընդունել է  
նաև «ԱԺ նախազահ Հովհիկ Աբրահամյանը»**

Ողջումելով հյուրերին՝ ՀՀ ԱԺ նախազահ Հովհիկ Աբրահամյանը համոզնում է հայտնել, որ ԻԻԴ գլխավոր դատախազի պաշտոնական այցը Հայաստան կիսթանի փոխադրակցությունը:

**Հովհիկ Աբրահամյանի խոսքով՝** հայ-իրանական համագործակցությունը նպաստում է տարածաշրջանային խաղաղության և կայունության ամրապնդմանը: Նա կարևորել է երկկողմ կապերի զարգացումը բոլոր բնագավառներում՝ նշելով, որ ձեռք բերված պայմանավորվածությունները հիմնականում կյանքի են կոչվում, ինչը վկայում է երկու երկրների միջև առկա բարեկամական և գործնական կապերն էլ ավելի խորացնելու երկուստք հաստատականության մասին:

ԻԻԴ գլխավոր դատախազը Դոլամհոսեյն Սոհենի Էժեին շնորհակալություն է հայտնել ընդունելության համար՝ բարձր գնահատելով հայ-իրանական քաղաքական և տնտեսական հարաբերությունների ներկա մակարդակը: Նրա համոզմամբ՝ կան բազմաթիվ բնագավառներ, որտեղ կարելի է համագործակցությունը ակտիվացնել և զարգացնել: ԻԻԴ գլխավոր դատախազը կարևորել է նաև համագործակցությունը խորհրդարանների միջև և փոխադրակցությունը միջազգային կառույցներում:

Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են տարածաշրջանային խնդիրներին, քննարկել երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

## ՀՀ Նախագահը Հատուկ քննչական ծառայության աշխատակազմին ներկայացրել է նոր պետին

«Հայագահ Սերժ Սարգսյանը 2013թ. մայիսի 6-ին այցելել է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայություն։ Հանրապետության նախագահը ծառայության աշխատակազմին ներկայացրել է օրերս իր հրամանագրով նշանակված «ՀՀ հատուկ քննչական ծառայության նոր պետ» ՎԱՀՐՄԱՄ ԾԱՀԵՑԱԸՆԵԲ։ Նախագահը խոսել է նաև նախկին պետ Անդրանիկ Միրզոյանի ազատման պատճառների ու ծառայության առջև դրված խնդիրների մասին։



«Միրզոյանի ազատման առիթը եղել է ապօրինությունը կոնկրետ քրեական գործով, բայց պատճառն այլ էր։ Պատճառն այն էր, որ Անդրանիկ Միրզոյանը չկարողացավ լուծել իր առջև դրված խնդիրը. իսկ ես խնդիր էի դրել պարոն Միրզոյանի առջև, որպեսզի մեծ ջանքեր գործադրի Հատուկ քննչական ծառայության կայացման հժվարին գործում։ Հատուկ քննչական ծառայությունը պետք է կայանար որպես ինստիտուցիոնալ անկախ և քրեական արդարադատության իրականացման գործում ինքնուրույն մասնակից։ Ցավոք, մինչև հիմա այդպես չէ։ Սա այն ծառայությունն է, որտեղ պետք է աշխատեն բացառապես գործին նվիրված ինքնուրույն, պրոֆեսիոնալ և հենարավորինս օբյեկտիվ մտածողություն ունեցող մարդիկ։ Այս ծառայությունը չի կարող լինել կամակատար», - ընդգծել է Հանրապետության նախագահը։

**Սերժ Սարգսյանը** նշել է, որ իրավապահ մարմինների մասին խոսելիս շատ լավ գիտակցում է, որ անենադժվար վիճակում թերևս Հատուկ քննչական ծառայության աշխատողներն են, որովհետև շատ դեպքերում նրանք ստիպված են լինում վարել քրեական գործեր, որոնցով անցնում են իրենց գործընկերները։ Բայց նյութ կողմից էլ, ըստ նախագահի, նրանք պետք է

հասկանան, որ դա իրենց կոչումն է, և ով պատրաստ չէ դրան, ուրեմն չպետք է այս համակարգում աշխատի։ «Այստեղ պետք են մարդիկ, մասնագետներ, ովքեր պատրաստ են ծշմարտության ուղղի նայել և եթե տեսնեն, որ իրենց գործընկերները, բարեկամները, ընկերներն իրենց գործունեությամբ խարարում են մեր երկրի, մեր պետական կառույցների ընթացքը, ապա պարտավոր են միջոցներ ձեռնարկել»,- ասել է նախագահը։

Հանրապետության ղեկավարը, անդրադառնալով նաև ավելի քան 5 տարվա ընթացքում ՀՀ ՀՔԾ աշխատանքում եղած որոշակի ձեռքբերումներին, կարողութ է նախաքննական մարմնի աշխատակիցների աշխատանքային ունակությունների և մասնագիտական գիտելիքների հետևողական կատարելագործման անհրաժեշտությունը։

**Սերժ Սարգսյանը** վստահություն է հայտնել, որ ՀՀ ՀՔԾ նորանշանակ պետ Վահրամ Շահինյանի գլխավորությամբ ծառայությունը շատ կարծ ժամկետում վերջնականապես կվայանա և վստահեցնել է, որ այդ ընթացքում և պարոն Շահինյանը, և ծառայության յուրաքանչյուր աշխատակից, ով գիտակցում է իր կոչումը, կարող է ակնկալել իր և ՀՀ կառավարության աջակցությունը։

**Լրացավ դատախազության համակարգի հնագոյն աշխատակից-վետերաններից, արդարադատության առաջին դասի խորհրդական Թեմուր Լեշոյի Բրոյանի ծննդյան 90-ամյակը, ինչի առիթով ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը նրան հղել է ուղղերձ, որում մասնավորապես ասված է.**

«...Ավելի քան չորսուկես տասնամյակ աշխատելով դատախազության մարմիններում, շրջանի դատախազից հասնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության քննչական վարչության պետի պաշտոնին և հանդիսանալով Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի անդամ, Զեղ դրսնորել եք որպես հմուտ ու սկզբունքային դատախազ, հարուստ գիտելիքների ու նեցող իրավաբան, լավ ընկեր ու բարեկամ, հմայիչ մարդ ու ազնիվ քաղաքացի:

Ձեր հարուստ աշխատանքային գործունեության ընթացքում Դուք նշանակալից հետք եք թողել Հայաստանի դատախազության տարեգործության մեջ, մեծ ավանդ բերել դատախազության երիտասարդ աշխատակիցների դաստիարակության և մասնագիտական հմտությունների ծևավորման գործին...

Ձեր բացառիկ աշխատասիրությամբ, մարդկային բարձր որակներով Դուք վայելել ու վայելում եք դատախազության դեկավարության, գործընկերների և շրջապատի հարգանքն ու համակրանքը...», - ասված է ուղերձում:

**«Օրինականություն» գիտագործնական հանդեսի խմբագրական խորհրդ սիրով միանում է շնորհավորանքներին, հորեցարին մողթելով առողջություն և երկար տարիների կյանք:**

## ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ




## ՀԱՍԻԴԻՊՈՒՄ ԳԵՂԵՑԻԿԻ ՀԵՏ

**Դատախազության աշխատակազմի կազմակերպած հանդիպում-մեծարումը նվիրված էր Հայաստանի և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի ավագագոյն դրասանուի Վարդուիի Վարդերեսյանի հորեցարին:**

Ա. Բարաջանյան համերգարահում անցկացված մեծարման երեկոն վարում էր ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր Աղաս Գասպարյանը:

Հայ բեմի մեծագույն վարպետներից մեկի կյանքի ու բեմական-կիննեմատոգրաֆիկ գործունեության ուղղենիշները ներկայացրեց բատերագետ Ավետիլյան Ավագյանը: Այսուհետև դահլիճում հավաքվածները վայելեցին հայ բեմի մեծ տիկնոց հուշերը արվեստում ապրած իր հարուստ կյանքի, հանճարեղ գործընկերների մասին, լսեցին հատվածներ նրա խաղացած անգույքական դերերից:

Ձերմ ու անմիջական մքնողորտում անցած երեկոյի վերջում ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը իր և դատախազության բոլոր աշխատակիցների անունից շնորհակալություն հայտնելով սիրված դերասանուհուն բարձր արվեստի հետ հաղորդակցվելու հնարավորություն պարզեցվելու համար և ընդգծելով, որ ցանկացած պարագայում դասական արվեստը և վարպետությունը անհարթահարելի հմայք ու ուժ ունեն, իր հորեցանը նշող Վարդուիի Վարդերեսյանին նվիրեց ծերմակ վարդերի գեղեցիկ ծաղկեփունջ, ավելացնելով, որ մշակութային նման միջոցառումները, լարված աշխատանքային օդիքնով ապրող դատախազության աշխատողների համար լիցքաբախվելու լավ հնարավորություն են և կարող են դառնալ ավանդական:



# Ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների անձի ուսումնասիրությունն ու դատապարտյալների ուղղումը

**Դավիթ ԹՈՒՍԱՅՅԱՆ**

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի դասախոս,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**Անազատության մեջ գտնվող անձինք հոգեբանական աշակերտության և հոգեբերապևտիկ աշխատանքների կարիք ունեն: Սա պայմանավորված է քրեակատարողական հիմնարկների<sup>1</sup> սոցիալ-հոգեբանական մթնոլորտով: Մարդու ապրում է, ընկալում է աշխարհը և երևոյթներին վերաբերվում է իրեն շրջապատող սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ազդեցությամբ: Մարդուց չի կարելի ակնկալել իրավաչափ վարք՝ առանց փոխելու այլ մթնոլորտը, որը սնուցում է նրա զգացմունքները, համոզմունքները, մտադրությունները, այդ իսկ պատճառով կարևոր է դատապարտյալների նկատմամբ գուգորդել իրավական և հոգեբանական ներգործության միջոցները<sup>2</sup>: Դատապարտյալի անձն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել, որ նա արդեն իսկ կատարել է հանցագործություն կամ հանցագործություններ իր կարիքների բավարարման նպատակով՝ անձնական հոգեբանական առանձնահատկություններից ենելով, ինչի արդյունքում դատապարվել է ազատազրկման:**

Դատապարտյալի անձն իր մեջ ներառված է սոցիալ-ժողովրդավարական, քրեակալական, քրեակատարողական, սոցիալ-հոգեբանական և այլ հատկանիշների փոխկապակցված համակցություն, որն ուղղակի կամ անուղղակի պայմանավորում է անհատի հանցավոր վարքագիծը, բնութագրում է նրա՝ հասարակության համար վտանգավորությունը: Դատապարտյալի անձի հասկացությունն ունի պայմանական ու ձևական բնույթը, քանի որ որոշակի արարքների քրեորեն պատճելի լինելը պայամանվորված է օրենսդրի դիրքորոշմանը<sup>3</sup>:

Նման համայիր մոտեցման մասին խոսվել է դեռ խորհրդային տարիներին: Մասնավորապես՝ Ֆ. Ռ. Սունդուրովն արդարացիորեն նկատում էր, որ «դատապարտյալը, ինչպես ցանկացած մարդ, բնության մասնիկ է, որն բազմաթիվ թելերով կապված է շրջակա միջավայրի հետ, որի փոփոխությունները կամ առանձնահատկությունները կարող են ազդել ոչ միայն մարդու մարմնի, այլև նրա հոգեբանության ու վարքի վրա: Մասնավորապես, ուշագրավ է կլիմայական, աշխարհագրական և այլ պայմանների ազդեցությունը հանցագործ-

<sup>1</sup> Այսուհետ՝ ՔՎՀ:

<sup>2</sup> Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գեկույցը: Երևան, 2009, էջ 30:

<sup>3</sup> Բօվին Բ. Գ., Կոկурին Ա. Վ., Մօքրեցօվ Ա. Ա. Պсихологические аспекты изучения личности осужденного / Преступление и наказание, 2004, №9, էջ 1:

ների ուղղման գործընթացի վրա»<sup>4</sup>:

Քրեակատրողական պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ դատապարտյալի ուղղման գործընթացի կազմակերպումն առանց նրա սոցիալ-ժողովրդավարական ու սոցիալ-հոգեբանական հատկանիշները հաշվի առնելու հանգեցրել է կոնֆլիկտային իրավիճակների, «ձևական» խմբերի կազմակերպման ու հոգեծնչող մթնոլորտի ձևավորման:

Դարձի է նշել, որ, որպես կանոն, անազատության մեջ գտնվող անձինք խուսափում են ՔԿ-ների վարչակազմների դեմ ուղղակի բողոքներից՝ վախենալով՝ դրանց հետևանքներից: Դրա հետ միասին, նկատվում է վարչկազմների և դատապարտյալների միջև հարաբերությունների անխուսափելի բներացում, ինչը պայմանավորված է քրեակատարողական ծառայողների նկատմամբ վստահության ցածր նակարողակով, ինչպես նաև ՔԿ-ներում գործող վարքի «ներքին կանոններով», որոնց համաձայն «չի խրախուսվում» վարչակազմի հետ որևէ համագործակցությունը<sup>5</sup>:

Դատապարտյալների ուղղման հարցում արտաքին գործնները, մասնավորապես՝ ՔԿ-ի պայմանները, վճռորոշ դեր ունեն: «Դատապարտյալների մեջ պետք է ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ մարդկային հատկանիշներ արբանացնելու համար: Որքան խիստ ու անհմաստ են կանոնները, այնքան բարձր է դրանք խախտելու հավանականությունը: Դրա համար հասարակությունը հույսը չպետք է դնի միայն ազատազրկման վայրերի պայմաններն առավել խստացնելու վրա: Պակաս կարևոր չեն նաև հասարակության խնամակալական գործունեությունը տվյալ բնագավառում, քանի որ չարին չարությամբ հաղթել անհնարին են»<sup>6</sup>: Այստեղ հարկավոր է մանրամասնել այն հանգանքներն ու նորմերը, որոնք ազդում են դատապարտյալների և առհասարակ նրանց ենթամշակույթի ձևավորման վրա:

**Ըստ Յ. Մ. Խաչիկյանի՝ տվյալ նորմերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ:**

**1. ուղղակի ազդեցությունը սահմանափակող կամ զապող նորմեր, որոնք ուղղված են խմբի կառուցվածքի պահպանման ու այլ խմբերի հետ հակադրմանը,**

**2. խրախուսող կամ շարժառիթային նորմեր, որոնք ուղղված են համերաշխության, համախմբվածության ամրապնդմանը, ինչպես նաև այլ խմբերի անդամների միջև ընդդիմադիր հարաբերությունների զարգացմանը,**

**3. գույքային նորմեր, որոնք հիմնականում ուղղված են ՔԿ-ները օրինական և ապօրինի ծանապարհներով ներմուծվող նյութական բարիքների բաշխման հետ,**

**4. դատապարական նորմեր, որոնք ուղղված են համաձայնեցնելու դատապարտյալների պահվածքն առաջացած բախումային իրավիճակները լուծելու դեպքում,**

**5. արարողակարգային բնույթի հատուկ նորմեր, որոնց շնորհիվ առաջին հերթին սահմանվում է նոր անդամներ ընդունելու (<«գրանցելու») ընթացակարգը, սահմանվում են վիճահարուց հարցերի լուծման համար անհրաժեշտ սցենարները, իսկ երկրորդ հերթին՝ պատշաճ մակարդակի վրա խիստ պահպանվում են էլիտար անդամների անձնանական հեղինակությունն ու զբաղեցրած կարգավիճակը<sup>7</sup>:**

Տրամաբանական է, որ այս նորմերն իրենց ուղղակի ազդեցությունն են ունենում նաև դատապարտյալի ուղղման գործընթացի և նրա հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման վրա:

ՔԿ-ի վարչակազմը, ընկալվելով որպես «անարդար օրենքի» ներկայացուցիչ, որը միևնույն ժամանակ օժտված է հարկադրանք կիրառելու հնարավորությամբ, շատ

<sup>4</sup> Сундурян Ф.Р. Социально-психологические и правовые аспекты исправления и перевоспитания правонарушителей, Казань, 1976, էջ 30:

<sup>5</sup> Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատրողական իիմնարկներում: ՀՀ նարդու իրավունքների պաշտպանի գեկույցը: Երևան, 2009, էջ 31:

<sup>6</sup> Արզումանյան Ս., Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն: Երևան, Զանգակ-97, 2004, էջեր 410-411:

<sup>7</sup> Խաչիկյան Ա.Մ. Լишление свободы: криминологические и уголовно-исполнительные проблемы, Ереван, 2008, էջեր 104-106:

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Իեպքերում չի կարողանում կատարել դաստիարակչական գործառությունը, ինչի հետևանքով նվազում է անազատության մեջ գտնվող անձանց ուղղումը և նրանց՝ իիմնարկներում կրկին հայտնվելու հավանականության հնարավոր բացառումը<sup>8</sup>:

«Ազատագրկման վայրերում հինգից յոթ տարի անընդմեջ գտնվելուց հետո, – նշում է Գ. Ֆ. Խոխրյակովը, – առաջանում են հոգեկան անդառնայի փոփոխություններ: Ազատվածներից 30-35% կարիք ունեն հատուկ հոգեբանական կամ հոգեբուժական միջամտության, որպեսզի կարողանան վերականգնել թուլացած կամ վերացած հարմարվողականության մեխանիզմները: Ցավալի է, բայց փաստ՝ ռեցիտիվն ունի քրեակատարողական բնույթ»<sup>9</sup>:

Ազատագրկման՝ որպես ամենախիստ պատժատեսակի կատարման ընթացքում լուրջ խնդիր է նրա կամխարգելիք նպատակներին հասնելը, այսինքն՝ այդ գործընթացի այնպիսի կազմակերպումը, որ պատժի բովանդակություն կազմող պատժից գործոնները հանգեցնեն դատապարտությալի մեջ դրական վարքագիծ ծևավորելուն<sup>10</sup>, իսկ դա հնարավոր է նպատակարդված աշխատանքներ հրականացնելով, երբ դատապարտությալի անձը չի գիտակցվի մեկուսի, այլ պայմանավորված կլինի իր իսկ սոցիալ-ժողովրդավարական ու սոցիալ-հոգեբանական հատկանիշները հաշվի առնելով:

Ուստինասիրությունները ցույց են տվել, որ անազատության մեջ գտնվող անձինք ունեն ադապտացիոն որոշակի խնդիրներ (հատկապես առաջին դատվածության դեպքերում), ինչի հետ կապված առաջարկվել է ավելացնել նրանց հետ կատարվող հոգեբանական աշխատանքների հաճախականությունը և մշակել մեթոդաբանական նոր մոտեցումներ, որոնք կբարձարցնեն աշխա-

տանքի արդյունավետությունը և կմասաւեն հոգեբանական ռեարդիտացիայի խնդիրի լուծմանը<sup>11</sup>:

ՀՀ արդարադատության նախարարի 2008թ.-ի մայիսի 30-ի N 44-Ն հրամանով<sup>12</sup> հաստատված «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգի 3-րդ կետի համաձայն՝ քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների<sup>13</sup> նպատակը ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԴ-ներում դատապարտյալների սոցիալական վերականգնմանը ու դատապարտյալների ուղղմանը նպաստելն է:

Քրամանի 4-րդ կետի համաձայն ստորաբաժանումների կողմից իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների խնդիրներն են.

**1) դատապարտյալների՝ արտաքին աշխարհի հետ սոցիալապես օգտակար կապեր և շփումներ ստեղծելը, պահպանելը և զարգացնելը,**

**2) դատապարտյալների հոգեկան առողջությունը պահպանելը և ամրապնդելը,**

**3) դատապարտյալների սոցիալական, հոգեբանական և իրավական պաշտպանվածությանը նպաստելը,**

**4) դատապարտյալների աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական, ստեղծագործական գործունեության զարգացմանը նպաստելը,**

**5) դատապարտյալների հոգևոր պահճմունքների բավարարմանը նպաստելը,**

**6) դատապարտյալների օրինապահ**

<sup>8</sup> Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական իիմնարկներում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գեկույցը: Երևան, 2009, էջ 31:

<sup>9</sup> Խօրյակ Գ. Փ. Պարածու տյուրմա, Մ., Юридическая литература, 1991, էջ 210:

<sup>10</sup> Ֆեդորես Պ. Ռ. Օտրածու խարկության պայմանագիրը մշակում է այս բանական դրական պահանջմանը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գեկույցը: Երևան, 2006, էջ 35:

<sup>11</sup> Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական իիմնարկներում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գեկույցը: Երևան, 2009, էջ 31:

<sup>12</sup> Այսուհետ՝ Քրաման:

<sup>13</sup> Այսուհետ՝ ստորաբաժանումներ:

Վարչագծի դրսկորմանը, իրավագիտակցության բարձրացմանը նպաստելը,

7) դատապարտյալների մոտ, հասարակության համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ճնշվորմանը նպաստելը,

8) դատապարտյալների սոցիալական վերականգնման և պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համար պայմաններ ստեղծելը,

9) դատապարտյալների հասարակություն վերահստեղվելուն նպաստելը:

Դատապարտյալների և նրանց ուղղմանը վերաբերող հիմնահարցերն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց անձնը, ինչը հնարավոր է հետևյալ մեթոդներով՝

**1. դիտարկել գործունեության տարբեր ոլորտներում և շիման տարրեր իրավիճակներում,**

**2. վերլուծել դատապարտյալի անձնական գործն ու այլ փաստարդերը,**

**3. վարել անհատական և խմբակային հարցագրույցներ:**

Սակայն այս մեթոդները միշտ չեն, որ հնարավորություն են ընձեռնաւ ստանալու օրյեկտիվ պատկերացում անձի և նրա վարչագծի մասին, չեն ապահովում ամբողջական ներքափանում նարդու ներաշխարհը: Եթե օգտագործվեն տեղեկություններ ստանալու այս ավանդական մեթոդները, ապա կոնկրետ դատապարտյալի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններն ազատազրկման պայմաններում կարելի է ստանալ՝ միշտն հաշվով 6-10 ամիս աշխատելով նրա հետ:

Հաստ դեպքերում անձին մանրամասն ուսումնասիրելու ու ներազդելու ցանկալի միջոցներ գտնելու գործընթացը լինում է չափազանց երկարատև՝ պատճառելով ուղղման գործընթացին անդառնալի վնաս, հիմնականում բարդացնելով ցանկալի արդյունքին հասնելը<sup>14</sup>:

Հոգեբանական առումով առանձնահատուվ է կին դատապարտյալների ուղղումը, ովքեր բայց ուղղագրված ճնշված պատիժը կրում են «Արովյան» թԿ-ի մասին:

Ըստ Յու. Մ. Անտոնյանի՝ կանանց թԿ-ներում խնդիրը բարդանում է նրանով, որ ընդիանուլ առնամք այդ թԿ-ների աշխատակիցները կանանց հոգեբանության և կանանց հետ աշխատելու հնտությունների մասին չունեն պատշաճ գիտելիքներ: Այդ պատճառով գործնականում ծագել է դատապարտյալ կանանց անձն ուսումնասիրելու, հատկապես արագ ուսումնասիրելու մեթոդներ կիրառելու խնդիրը, ինչը կապահովեր ստացված տեղեկությունների օրյեկտիվությունը ու ամբողջականությունը՝ դրանք ծեղոք բերելու համար նվազագույն ծախսեր կատարելով: Անձին ճանանչելու գիտական առկա մեթոդներից առավել նախնորդելի են հոգեբանական ախտորոշման մեթոդները: Այս մեթոդները հիմնված են ժամանակակից հոգեբանության և հատկապես նրա ճյուղի հանդիսացող անձի հոգեբանության տեսական և փորձարարական դրույթների վրա: Բացի այդ, կան մի քանի ինստիտուցիոնալ, գիտամեթոդական, հասարակական նախադրյալներ, որոնք վկայում են թԿ-ի առջև ծառացած տարբեր խնդիրների լուծման մեջ հոգեբանության նվաճումները

<sup>14</sup> Քրամանի 54-րդ կետի համաձայն, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներում արգելվում է՝

- 1) դատապարտյալների անձնական կյանքին վերաբերող տեղեկատվություն տարածելը, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը պարունակում է տվյալներ հաստատապես նախապատրաստվող հանցագործության մասին,
- 2) դատապարտյալի հետ փոխհարաբերություններում մասնագիտական հնտությունների օգտագործումն անձնական նպատակներից և շահերից ելնելով,
- 3) որևէ խորականության կիրառումը,
- 4) դատապարտյալների հետ աշխատանքում վերջիններիս հուսադրելու նպատակով ապատեղեկատվություն տրամադրելը,
- 5) մասնագիտական այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք բացասական ազդեցություն կունենան դատապարտյալների հոգեկան առողջության վրա,
- 6) դատապարտյալների նկատմամբ հիպնոսի մեթոդների կիրառումը,
- 7) դատապարտյալներին բժշկական, գիտական կամ այլ փորձերի ենթարկելը՝ անկախ նրանց համաձայնությունից,
- 8) դատապարտյալների նկատմամբ հոգեբանական բռնության կիրառումը և խոշտանգումները:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

կիրառելու նպատակահարմարության և օպերատիվության մասին առաջին հերթին այն իմանարկներում, որտեղ պատիժ են կրում անշափահաներն ու կանայք<sup>15</sup>:

Խոսումնալից է կանանց ՔԿԴ-ներում անձի ուսումնասիրության հարցաբերավորման մեթոդի կիրառումը: Անհրաժեշտ տեղեկություններ կարելի է ստանալ արդեն փորձարկված հետևյալ հարցաբերի մերով՝ անձի ուսումնասիրության բազմակողմանի մեթոդով<sup>16</sup> և Քերելի 16-գործոնային հարցաշարույթով<sup>17</sup>:

Դատապարտյալի անձն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է վերլուծել նրա գործողությունները տարբեր իրավիճակներում՝ աշխատելիս, զանգվածային միջոցառումների ժամանակ, խրախուսելու կամ տույժի ենթարկելու դեպքում, օրակարգը կատարելու, ինչպես նաև ընտանիքի անդամների հետ տեսակցությունների ժամանակ:

Կին դատապարտյալների ուղղման ընթացքում լայնորեն պետք է կիրառել նրա կապն արտաքին աշխարհի՝ մասնավորապես երեխայի հետ, որպես ուղղմանը նպաստող լավագույն միջոցներից մեկը:

Ցույց առնելով իրենց որոշակի հետաքրքրություն է ներկայացնում «Վարդաշեն» ՔԿԴ-ը, որտեղ անազատության մեջ գտնվող անձանց զգալի նաև ունի բարձրագույն կրթություն, համեմատաբար բարձր իրավագիտական կարություն: Այս առումով այն զգալիորեն տարբերվում է մյուս ՔԿԴ-ներից: Այստեղ չի նկատվում վարչակազմ-դատապարտյալ հարաբերության ժայրաստիճան բնեօացում, գրեթե

դրսւորում չեն ստանում այսպես կոչված «օրենքից դուրս վարքային կանոնները»: Այստեղ ավելի բարդ են ադապտացիոն խնդիրները՝ կապված «դերերի փոփոխության» հետ: Սակայն պետք է նշել, որ նոյն նիսկ ազատությունից զրկված անձանց այս խումբը չունի իրենց իրավունքների վերաբերյալ բավարար տեղեկացվածություն: Այստեղ տարածված են այնպիսի բողոքներ, որոնք կապված են նախկինում ունեցած պաշտոնական դիրքի, պետության հանդեպ ունեցած վաստակի և ամենակարևորը՝ պետության կողմից «գնահատված չլինելու հետո»: Սա առաջացնում է որոշակի հոգեբանական լարվածություն: Շատ հաճախ դատարանի դատավճիռն ընկալվում է որպես «բարի համբավի պիտակավորում»<sup>18</sup>:

Ազատությունից զրկելը, որը գորգորդվում է այլ իրավունքների սահմանափակմանը, անորոշության ֆոնի վրա, Կանոնակարգով սահմանված հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորության մշտական գիտակցումը՝ ուժեղացնում են տագնապային վիճակը և բացասաբար ազդում նրանց հոգեբանության վրա: Դան գումարվում է նաև իմանարկների «զգրված» վարքի կանոնների պահանջները, որոնք շատ տեղերում հակասության մեջ են մտնում իրավական կարգավորիչների հետ: Մասնավորապես, ՔԿԴ-ներում նոյն նիսկ անգեն աշքով նկատելի են, այսպես կոչված, «քրեական հեղինակություններին» տրված արտոնությունները: Օրինակ՝ «Արթիկ» ՔԿԴ-ում արձանագրվել է մի դեպք, երբ դատապարտյալներից մեկի («քրեական հեղինակության») խոյնության մեջ ուղարկելու ժամանակամատական գործառություն:

<sup>15</sup> Անտոնյան Յ.Մ. Պреступность среди женщин, М., Российской право, 1992, №231-232:

<sup>16</sup> Անձի ուսումնասիրության բազմակողմանի մեթոդը Մինեստուայի անձի բազմագործոն հարցաշարի ծնափոխված և կանոնակարգված ռուսակենալ տարբերակն է: Այն լայնորեն օգտագործվում է արտասահմանյան երկրներում տարբեր կատեգորիաների մարդկանց, այդ թվում՝ դատապարտյալների ուսումնասիրության համար: Այդ մեթոդիկան թույլ է տալիս պատշաճ կերպով ուսումնասիրելու անձի և նրա հոգեբանական արդի խնդիրների տարբեր ոլորտները:

<sup>17</sup> Քերելի 16-գործոնային հարցաշարը հնարավլություն է տալիս ստանալու հոգեբանական նշանակություն ունեցող տեղեկություն, որը կիրառելը ՔԿԴ-ում անցկացվող հոգեբանական աշխատանքում դառնում է առարկայական ու նախակայական: Այս մեթոդով հայտնաբերված անձի հոգեբանական հատկանիշները կարող են կիրավել նաև կյանքի որոշ իրավիճակներում դատապարտյալի վարքը կանխորոշելու, ինչպես նաև նրա մասնագիտական պիտանելիության և մասնագիտական կողմնորոշման հարցերում: Նպատակահարմար չէ Քերելի հարցաշարը օգտագործել որպես անձի ուսումնասիրության միակ տարբերակ:

<sup>18</sup> Անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական իմանարկներում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գեկույցը: Երևան, 2009, էջ 33:

և այդ խցում գտնվող դատապարտյալներին տրված էր ազատ տեղաշարժվելու իրավունքը: Նրանք ունեին նաև արտօնյալ սննդի, կենցաղային պայմանների, հագուստի և այլնի իրավունք, արտօնյալ շփումներ իհմնարկի վարչակազմի հետ: Ոչ պաշտոնապես սա բացատրվում է նրանով, որ նման մեխանիզմը նպաստում է ՔԿԴ-ի ներքին կառավարելիության ապահովմանը: Սակայն կարող ենք փաստել, որ այսպիսի երևոյթները հոգեբանական տեսանկյունից լուրջ վտանգ են ներկայացնում ընդհանուր հանձնարարի համար և նպաստում են «քրեական» հասկացությունների ու վարքի խորացմանը<sup>19</sup>:

Մեր կարծիքով, նման իրավիճակն անթույլատրելի է և ոչ միայն հակասում է միջազգային նորմերին<sup>20</sup>, այլ նաև հանգեցնում է դատապարտյալների չուղվելուն:

Թիզ չեն դեպքերը, երբ ազատազրկման դատապարտված անձնները պատիժ կրելու ընթացքում կատարում են նոր հանցագործություններ, ինչը վկայում է ոչ միայն չուղվելու, այլ ավելին՝ նրա մոտ հանցավոր նպատակների ու շարժառիթների ուժեղացման նասին՝ ինչին կարող են նպաստել նաև ոչ կանոնակարգային հարաբերությունները, դատապարտյալների «արտոնյալ» խմբերի արկայությունը և այլն: Դանձաձայն Օ.Վ. Ստարկովի՝ մեկուսացման պայմաններում հանցագործություններ կատարելու առավել նպաստող ներքին պայմանների բարեկարգ դասել՝

**1) Դատապարտյալների գգալի մասի մեջ որոշակի նյարդային շեղումների (մեծ մասմբ իիստերիա, նկրող) և հոգեկան խախտումների առկայությունը (և՝ հոգեկան հիվանդություններ, և՝ անչափահաների մեջ որոշակի փսխխոպարհաներ): Տարբեր տվյալներով ուղղի իհմնարկներում հանցագործություն կատարած դատապարտյալների 10-80% ունեն հոգեկան շեղումներ: Այդ շեղումները դժվարացնում են դատապարտյալին լիովին գիտակցել իր գործողությունները,**

ուկավարել դրանք, և հաճախ դա էլ նպաստում է նրանց կողմից հանցագործություն կատարելուն:

**2) Ուղղի իհմնարկներում հանցագործություն կատարած անձանց մոտավորապես կեսը մինչև 25 տարեկան էին, որոնք, ունենալով որոշակի կենսափորձ և երկու կամ երեք դատվածություն, ձևավորել են բացասական արժեքային կողմնորոշում, բայց միևնույն ժամանակ՝ պահպանել մանկամտության տարրեր, հոգեկան ներաշխարիի հակասություն, ինչն ակնհայտ նշմարվում էր նրանց կատարած հանցագործությունների էության մեջ:**

**3) Այս անձինք, մեծ մասամբ, ունեն ցածր կրթական մակարդակ (օրինակ՝ մարդասպանները իհմնականում պարտել են 5-7 դասարան) և, հետևաբար, պահանջնմունքները պրիմիտիվ են: Բռնի հանցագործությունների կատարման դեպքում դրապատճառ է հանդիսանում տուժողի նկատմամբ տևականորեն ձևավորվող բացասական-հուզական վերաբերմունքը, որը հնարավորինս մթացնում է նրա գիտակցությունը:**

**4) Դատապարտյալների ինտրավերտությունը, այսինքն՝ իր մտքերի մեջ, իր «Ես»-ի մեջ պարփակվելը: Այստեղից էլ առաջանում են չշփելը, վատատեսությունը, գաղտնապահությունը և այլ հատկանիշներ, որոնք երկարատև լիցքաբինան բացակայության դեպքում հնարավոր են, որ վերածվեն հուզական պայքանի՝ խուլգանության, բռնության, փախուստի կամ պարզապես կանոնակարգ չարամտորեն խախտելուն:**

**5) Վախի դրսերմամբ բարձր տագնապայնությունը, զգուշավորությունը, շփումները նկատեցնելու ձգտումը, մտածնմունքներով անընդհատ ապրելը ի վերջո հանգեցնում է նյարդային կամ հոգեկան հիվանդությունների: Չլիցքաթափելու դեպքում, այդ թվում, մարմնի ակտիվ շարժումներով, այն վերածվում է**

<sup>19</sup> Նույն տեղը, էջ 34-35:

<sup>20</sup> Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիրը (1948թ.), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման նախին կոնվենցիան (1979թ.), Մարդու իրավունքների ու իհմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (1998թ.), Բանտարկյալների հետ վարչեցողության նվազագույն ստանդարտ կանոններ (1955թ.), Որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության ակզրունքների ժողովածու (1988թ.) և այլ փաստարդեր:

# ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

բռնության, սեռական ոտնձգությունների և այլ հանցագործությունների:

6) Բարձր ինքնահավանությունը, համառությունը, իսկ ազատազրկման վայրերում ավելի վլտանգավոր հանցագործների մեջ՝ բարձր ինքնավերահսկումը, կազմակերպչական հմտությունների հետ մեկտեղ նպաստում են առաջնորդի հատկանշների ձևավորմանը և, որպես կանոն, ժամանակադիմությամբ առաջնական նախապատրաստման ու կազմակերպմանը, որոնց բացահայտումը նույնպես դժվար է: Բացի դրանից, առանձնահատուկ դեր են կատարում ինչպես դատապարտյալների հոգեկան տարբեր վիճակները (ընկճվածություն, թափիծ, դեպրեսիվ և այլն), այնպես էլ ընդհանուր վիճակները, օրինակ՝ սթրեսային, ֆրուստրացիոն, աֆեկտիվ, հարբածության և այլն, որոնք ընթացքով կարծածամկետ են, դրսևորվում են անմիջապես հանցագործության կատարման ժամանակ՝ ուժեղացնելով համեմատաբար կայուն հատկությունների դրսևորումը<sup>21</sup>:

Բացի այդ, **Օ. Վ. Ստարկովն** առանձնահատուկ ուսումնասիրել է հանցագործ վարքի ներքին դրդապատճառները, որոնք ուղղված են քրեակատարողական համակարգի դեմ<sup>22</sup>:

Այս հանցագործությունները կատարած դատապարտյալների արժեքային կողմնորոշման առումով առանձնացվել են հետևյալ բնորոշ հատկանշները՝

1) ցուցադրական նիկիլիզմ, որն իր մեջ ներառում է ոչ միայն նշանակած պատիժն անարդար ժանանչնելը, անմեղությունը, այլ նաև իրավական նիկիլիզմը, որը ստվորաբար նշանակում է գիտելիքների, իսկ տվյալ հանցագործների համար բավական լավ գիտելիքների առկայությունը գործող քրեական իրավունքի սկզբունքների և նորմերի մասին, ու համոզվածությունը դրանց սխալ լինելու մեջ, ինչը ծևավորում է ընդդիմանալու կայուն կարծրատիպ,

2) բազմաբնույթ ագրեսիվությունը՝

որպես ցանկացած տեսակի վնաս պատճառելու կայուն ձգտում՝ միայն ավելի ցավոտ, ավելի ազդեցիկ, անկախ նրանից՝ ինչին և ում է պատճառվում վնասը՝ սեփականությանը, մարդուն, թէշ-ներին, թե աշխատակիցների հեղինակությանը,

3) հանցագործ միջավայրի սովորույթները և ավանդույթները ոչ միայն հետևողականորեն պահպանելը, այլև նորերը ստեղծելը, որոնք հարմարեցվում են պատժի կատարման անընդհատ փոփոխությանը՝ պայմաններին՝ սկսած, օրինակ՝ թէշ-ի աշխատակիցներին ճանաչելուց ու նրանց հետ համագործակցելուց մինչև վերջիններիս ակնհայտ ու դաժան դիմադրելը՝ անգամ ֆիզիկապես ոչնչացնելը,

4) պատժի կատարման կանոնակարգի պարբերաբար և չարամիտ ակնհայտ խախտումները,

5) դատիքական իսկական նաև ուսուցողական գործընթացների նկատմամբ բացասական վերաբերմունքը, դատիքական իսկական միջոցառումների ձախողումը կամ զանգվածային եղանակով բացահայտ չներկայանալը,

6) աշխատանքից ակնհայտ կամ գաղտնի հրաժարվելը,

7) կարչակազմի վրա հարձակումը որպես պատժի կատարման համակարգի և հասարակության դեմ սոցիալական բռնության, «ահարեկչական» վարքագիծը որպես որոշ դատապարտյալների կենսակերպ,

8) միջավայրի ընկալումը որպես խորը և թշնամական, որն ամենից առաջ անձնավորվում է թէշ-ի աշխատակիցների հետ<sup>23</sup>:

Վերը նշված դասակարգված հատկանշների իմացությունը կիանգեցնի ուղղման արդյունավետության բարձրացմանը: Հարկ է նշել, որ նման երևույթների վերաբերյալ տեղեկությունները հնարավոր են պարզել դատապարտյալի գնահատման միջոցով:

Դրամանի 46-րդ կետի համաձայն՝ դատապարտյալի գնահատումը սոցիալական,

<sup>21</sup> Старков О.В. Криминопенология, М., Экзамен, 2004, էջեր 156-157:

<sup>22</sup> Նույն տեղը, էջեր 292-293:

<sup>23</sup> Тимошенко С.Э. Предупреждение посягательств на жизнь и здоровье представителей администрации ИТК: Автoreферат диссертации на соискание ученой степени канд. юрид. наук, М., ВНИИ МВД СССР, 2002, էջեր 10-11:

իոգերանական և իրավական աշխատանքներ իրականացնելու ընթացքում տարբեր մասնագետների կողմից կազմակերպվող խմբային աշխատանք է։ Գնահատումները կատարվում են դատապարտյալի ՔԿ՝ ընդունումից հետո յուրաքանչյուր եռամսյակ՝ մեկ տարվա համար նախատեսված «Վարքի գնահատման թերթիկում», որը լրացվելուց հետո հաստատվում է ՔԿ-ի պետի կողմից և կցվում դատապարտյալի անձնական գործին։ Գնահատումները ներառում են տեղեկություններ դատապարտյալի հետ կատարված աշխատանքների ընթացքի, դատապարտյալի վարքի փոփոխության մասին, մասնավորապես՝

**1) դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ գնահատվում է հետևյալ չափանիշներով՝**

ա. բարձր, եթե օգտվում է օրենքով սահմանված տեսակցության իրավունքից, նրա նկատմամբ կիրառվել է խրախուսանիք միջոց լրացուցիչ կարճատև կամ երկարատև տեսակցության տրամադրման միջոցով, հաճախ ունենում է հեռախոսագրույց,

բ. միջին, եթե պարբերաբար օգտվում է կարճատև տեսակցության իրավունքից, երբեմն ունենում է հեռախոսագրույց,

գ. ցածր, եթե ընտանիքի հետ կապեր չունի, չի օգտվում կարճատև և երկարատև տեսակցությունների իրավունքից և հեռախոսակապից,

**2) դատապարտյալի ռիսկայնության աստիճանը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝**

ա. բարձր, եթե հաշվառման է վերցված որպես ռիսկային դատապարտյալ,

բ. միջին, եթե առկա է ստորև ներկայացված հատկանիշներից առնվազն երկուսը.

- ունի ագրեսիվության միջին ցուցանիշ,

- պատժի կրման վերջին մեկ տարվա ընթացքում չի կատարել ուրիշին կամ իրեն վնասելու փորձ,

- իր նախաձեռնությամբ մասնակցում է սոցիալական, հոգերանական և իրավական մասնագիտական և այլ աշխատանքներին,

- պատժի կրման վերջին մեկ տարվա ընթացքում թույլ չի տվել չարամիտ խախտում,

գ. ցածր, եթե առկա է ստորև ներկայացված հատկանիշներից առնվազն երեքը.

- ունի ագրեսիվության ցածր ցուցանիշ,

- խրախուսվել է,

- իր նախաձեռնությամբ մասնակցում է սոցիալական, հոգերանական և իրավական մասնագիտական և այլ աշխատանքներին,

- ՔԿ-ում գտնվելու ընթացքում չի կատարել ուրիշին կամ իրեն վնասելու փորձ,

- ՔԿ-ում գտնվելու ընթացքում թույլ չի տվել չարամիտ խախտում,

- պատժից ազատվելուց հետո ցանկություն ունի աշխատանք գտնել,

**3) ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝**

ա. բարձր, եթե ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված գործողությունները անբողջությամբ կատարվել են,

բ. միջին, եթե ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված միջոցառումները և գործողությունները հիմնականում իրականացվել են, սակայն կան որոշ բացբողուններ,

գ. ցածր, եթե ուղղման գործընթացի ծրագրով նախատեսված միջոցառումները և գործողությունները չեն իրականացվել՝ դատապարտյալի կողմից կամք, հետևողականություն և համապատասխան վարքագիծ չցուցաբերելու պատճառով,

**4) դատապարտյալի կարգապահությունը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝**

ա. բարձր, եթե պատիճը կրելու ընթացքում կարգապահական տույժի չի ենթարկվել և նրա նկատմամբ կիրառվել է խրախուսանիք միջոց,

բ. միջին, եթե ենթարկվել է կարգապահական տույժի, սակայն տույժը կրելուց հետո նվազագույնը մեկ տարվա ընթացքում նոր կարգապահական խախտումներ թույլ չի տվել,

գ. ցածր, եթե գնահատման ժամանակահատվածում ենթարկվել է կարգապահական տույժի, կամ ունի գործող տույժ,

**5) դատապարտյալի մասնակցությունը կրթական, մշակութային և այլ ծրագրերին և ներգրավվածությունը աշխատանքին գնահատվում է հետևյալ չափանիշներով՝**

ա. բարձր, եթե ակտիվորեն մասնակցել է ՔԿ-ում իրականացվող կրթական

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ժրագրերին, մշակութային, լուսավորչական և մարզական միջոցառումներին, կամ ներգրավված է որևէ Վարձատրվող կամ հիմնարկում իրականացվող բարեկարգման աշխատանքներին, նախաձեռնություն է ցուցաբերել լուսավորչական միջոցառումների կազմակերպման գործում,

բ. միջին, երբ հազվադեպ է մասնակցել ՔԿ-ում իրականացվող միջոցառումներին և վարձատրվող կամ հիմնարկում իրականացվող բարեկարգման աշխատանքներին,

գ. ցածր, երբ հրաժարվում է ընդգրկվել ՔԿ-ում իրականացվող միջոցառումներին և աշխատանքներին:

Ելենով վերագրյալից և գնահատման արդյունքների հիմնան վրա դատապարտյալի ուղղման աստիճանը որոշվում է.

1. դրական, երբ պատժի կրման ընթացքում դատապարտյալի կարգապահությունը և ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են բարձր կամ միջին, իսկ ոչսկայանության աստիճանը՝ ցածր,

2. բացասական, երբ դատապարտյալի կարգապահության կամ ուղղման գործընթացի ծրագրի կատարման արդյունքները գնահատվել են ցածր, իսկ ոչսկայանության աստիճանը՝ բարձր կամ միջին:

Այս ընթացակարգն անթերի չէ, քանի որ կամ որոշ չափանիշներ, որոնք վերանայման կարիք ունեն:

Օրինակ՝ դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ գնահատվում է բարձր, եթե դատապարտյալն օգտվում է օրենքով սահմանված տեսակցության իրավունքից, նրա նկատմամբ կիրառվել է խրախուսանքի միջոց լրացուցիչ կարճատև կամ երկարատև տեսակցության տրամադրման միջոցով, հաճախ ունենում է հեռախոսագրույց: Բայց տեսակցությունների և հեռախոսագրույցի բովանդակությանը կամ դրանցից հետո դատապարտյալի վարքագիր վերաբերյալ որևէ գնահատական չի տրվում: Գործնականում լինում են դեպքեր, երբ դատապարտյալը տեսակցությունից

հետո ընկճված է, ինքնամփուփ, մտանոլոր, ինչը կարող է պայմանավորված լինել ընտանեկան անախորժություններով, ամուսնալությանը և այլ պատճառներով: Բայց դատապարտյալը, գիտակցելով, որ երեխայի հետ տեսակցելու միակ տարրերակն ամուսնուն համոզելն է, շարունակարար տեսակցություն է նրա հետ՝ փորձելով հարթել ստեղծված իրավիճակը:

Սեկ այլ օրինակ՝ դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ գնահատվում է ցածր, եթե դատապարտյալն ընտանիքի հետ կապեր չունի, չի օգտվում կարճատև և երկարատև տեսակցությունների իրավունքից և հեռախոսակապից: Այստեղ որևէ նշում չկա այն դեպքերի մասին, եթե դատապարտյալն առհասարակ չունի ընտանիք (օրինակ՝ մանկատան շրջանավարտ է), և քանի որ նորմն ունի իմագերատիկ բնույթ, դատապարտյալի կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կգնահատվի որպես ցածր:

Կկաման ստացվում է, որ Յրամանով նախատեսված որոշ դրույթներ առավել մեծ ուշադրություն են դարձնում հարցի ձևական կողմին, քան բովանդակությանը, ինչն անրդունելի է:

Ամփոփելով վերօդյալը, կարել է նշել, որ ստեղծված իրավիճակում ուղղված դատապարտյալների տոկոսը չնշին է և տրամաբանական է, որ չնշին կլիմի: Ուղղման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ոչ միայն ստեղծել և լրամշակել այս ոլորտը կարգավորություն առկա իրավական դաշտը, այլ նաև ՔԿ-ները համարել համապատասխան վերապարտրաստում անցած հոգեբաններով ու սոցիոլոգներով, որոնց քանակական ցուցանիշը հնարավորություն կընծերի դատապարտյալների հետ տանել անհատական աշխատանք, ինչպես նաև բարելավել դատապարտյալների նյութակենցաղային պայմանները, որպիսի վերջիններս ոչ թե մտածեն կենցաղային հիմնահարցերի մասին, այլ վերանայեն իրենց արժեքային համակարգը և նորովի գնահատեն իրենց կատարած արարթները:

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԳ ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Յուրի ԴՈՒԿԱՅԱՆ

Ասպիրանտ

*Գիտության մեջ իրավունք հասկացությունը օգտագործվում է խիստ լայնորեն. թե՛ իրավագիտության, թե՛ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և անտրոպոլոգիայի մեջ<sup>1</sup>: Ըստ գիտնականներ այն օգտագործում են հասարակության մեջ դոմինանտ հանդիսացող ցանկացած նորմատիվային համակարգի բնորոշման համար: Դա հատկապես դրսևորվում է համեմատական իրավագիտության մեջ, որը հիմնականում ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին՝ իրավաբանական պողիտիվիզմի և մասամբ իրավունքի պողիտիվիտական սոցիոլագիայի շրջանակներում:*

Դրանց մերուաբանությունը բավականին արդյունավետ է եվրոպական քաղաքակրթության երկրների զարգացած իրավական համակարգերն ուսումնասիրելիս, սակայն հանգեցնում է միանգանայն վիճելի եզրակացությունների այլ քաղաքակրթությունների նորմատիվային համակարգերի դեպքում: **Ո. Դավիթը** դրան ուշադրություն է դարձնում, սակայն, ինչպես ինքն է գրում, նախընտրում է չբանավիճել պողիտիվիզմի և բնական իրավունքների կողմնակիցների հետ<sup>2</sup>: Դիրավի, նման բանավեճը հին արմատներ ունի եվրոպական իրավագիտության մեջ և դրա շրջանակներում ձեռք է բերում ճանաչողական իմաստ: Սակայն եվրոպացիներին բնորոշ եվրոպակենտրոնությունը հանգեցնում է նրան, որ նրանք հակված են սովորական հասկացություններն օգտագործել այլ մշակույթներ ուսումնասիրելիս: Այդ պատճառով մենք գրում և կարում ենք հին Չինաստանում իրավական պողիտիվիզմի մասին<sup>3</sup> և հեշ-

տությամբ գտնում բնական իրավական հայեցակարգեր, ուսումնասիրում ենք իսլամի, ինդուիզմի իրավունք, **Յ. Մեյնի** օրինակով՝ իին իրավունք<sup>4</sup> և այլն: Ընդհանուր առնամբ նման բառապաշտի օգտագործման մեջ ոչ մի բացասական բան չկա, եթե գրողն ու կարդացողը հասկանում են նման համատեքստում իրավունք տերմինի օգտագործման պայմանականության աստիճանը: Եթե նման ընթացում չկա, ապա վլուանգ է առաջանում իրավագիտությունը դարձնել նորոնության, այսինքն՝ նորմերի մասին գիտությունը:

Նորմատիվային պյուրալիզմը բնորոշ է ցանկացած հասարակության: Ընդ որում, դրանում գոյություն ունեցող նորմատիվային համակարգերը կարող են կրել թե՝ կոմայեմնետար, թե՝ մրցակցային բնույթ: Բայց, որպես կանոն, եթե հասարակությունը չի գտնվում քաոսի կամ անոնհայի վիճակում, նրանցից մեկը «առաջնորդում է» մյուսին, որն ապահովում է սոցիալական

<sup>1</sup> Մանրամասն տես Զօրկին Ա.Լ. Փիլոսոփիա իրավականության մասին. Մ., 2012; Ռոբերտ Ալեքսի. Պոնդար և դեյտվություն իրավականության մասին. Մ., 2011.

<sup>2</sup> Տես Ռենե Դավիդ, Կամիլլա Ջօֆֆրե-Սպինոզի. Օգուստուս կայսերական իրավունքը և անտառապահությունը. Մ., 2009, ս. 24-25.

<sup>3</sup> Տես Ներսեսյանց Վ. Ս. Իրավագիտության պատճենական համակարգը. Մ., 2005, ս. 43-48.

<sup>4</sup> Մեյն Գ. Դրենի օրենքը և անոնհայի վիճակը. Առաջնորդում է մասնակիցների մասին. Մ., 2010.

համերաշխություն, այսինքն՝ իրավանացնում է ինտեգրատիվ գործառույթ: Այդպիսին կարող է լինել ոչ միայն իրավական համակարգը, այլև ավանդական, բարյական, կրոնական, գաղափարաբանական համակարգը և այլն: Իսկ իրավական համակարգի դոմինանտուրյունը բնորոշ է արևմտյան քաղաքակրթության հասարակություններին: Ասվածը չի նշանակում, որ իրավունքը զուտ է վերոպական երևոյթ է, այլ նշանակում է, որ իրավունքի պահանջն առաջանում է այնուղիւ, որտեղ ձևավորվում են այս կամ այն չափանիշներով իրար նման սոցիալական և մշակութային պայմաններ:

### «...Եռմատիվային պյուրալիզմը բնորոշ է ցանկացած հասարակության...»

Եվրոպական քաղաքակրթության մեջ իրավունքը՝ որպես գաղափար և սկզբունքների ու նորմերի համակարգ, ձևավորվել է պատմական երկար ժամանակահատվածում՝ անտիկ ժամանակներից մինչև մեր օրերը<sup>5</sup>: Ու թեև այդ գործընթացը դժվար է համարել ավարտված, ինչքեր կան ամփոփելու որոշակի արդյունքներ և ցույց տալու հենց իրավական համակարգի յուրատիպությունը: Դրա ակունքները գտնվում են անտիկ Հունաստանում, որը աշխարհին տվել է իրավունքի փիլիսոփայություն և Հռոմում, որը ստեղծել է մասնավոր իրավունքի մշակված համակարգ: Ծիշտ ասած, այդ ժամանակների Արևելքի ու Արևմտացի միջև կարելի է գտնել բազմաթիվ գուգակերներ, որոնք կապված են նրա հետ, որ պետությունն ու հասարակությունը դեռ չեն առանձնացել և գոյություն ուներ համընդհանուր բնական օրենքի (Դառ՝ Չինաստանում, Լոգոս՝ Հունաստանում) առկայության մասին համոզմունք: Բայց արդեն այն ժամանակ նկատվում էր սոցիալական կազմակերպման սկզբունքների նկատմամբ մոտեցումների տարբերություն: Արևելքում առաջատար սկզբունքը է պատերանալիզմը, որը կարգավորում է անհավասարների վարքը, քանի որ չեն կարող

հավասար լինել մեծերն ու փոքրերը, բարձրերն ու ցածրերը: Ուստի պետությունը հայրական գործ է՝ res pater: Նման պետության մեջ գնահատվում են ենթականությունը և իշխողների հոգատարությունը: Անտիկ հասարակության մեջ ուժեղ էր նաև կոլեկտիվիզմի ոգին: Սակայն անտիկ կոլեկտիվը, հունական պոլիսն ու հօռոմեական սիվիտասը բոլորի համար ընդհանուր չափանիշի հիման վրա հավասարների շփում էր: Ուստի հունականությունը ժողովրդի գործն՝՝ res publics: Նման պետության մեջ գնահատվում է քաղաքացիական անձնվիրությունը, որը ներառում է նաև օրենքների նկատմամբ հարգանքը:

Այս առումով տարբեր կերպ էր ընկալվում բարոյականության (բնական իրավունք) և պողիտիվ իրավունքի հարաբերակցությունը:

Արևելյան մշակույթին բնորոշ է դրանց հակադրումը որպես բարի և չար: Օրենքն ընկալվում էր որպես արտաքին ինչո՞ր բան, որը պարտադրվում է մարդկանց: Ուստի այն կամ վճառակար է, ինչպես Կոնֆուցիոնիստ նոտ է, քանի որ մարդը իր եռթյամբ բարի է, կամ ինչպես Սյուն Յանի նոտ է, ամիրաժեշտ է իրենց եռթյամբ չար մարդկանց արատները սանձելու համար: «Եթե կառավարես օրենքի օգնությամբ և կարգ պահպանես պատիժների միջոցով, մարդիք կփորձեն խուսափել (պատիժներից) և ամոր չեն զգա...», - սովորեցնում է Կոնֆուցիոնիստը: Սյուն Յանը հակադրում էր. «Եթե մարդկանց կառավարես պատիժների միջոցով, կդանան վախսկոտ, չեն համարձակվի չարագործություն անել... Եթե կարգի իրավիրես արդարության օգնությամբ, ապա երես կառնեն, իսկ երբ մարդիք երես առած են, կարգուվանոնք խախտվուն ե...»<sup>6</sup>: Մենք տեսնում ենք, որ երկու դեպքում էր իրավունքը նույնացվում է օրենքի հետ, իսկ օրենքը բռնության և պատժի հետ:

Իսկ անտիկ ավանդությներում բարոյականությունն ու պողիտիվ իրավունքը միա-

<sup>5</sup> Տե՛ս. Цարյկով Ի. Ի. Развитие правопонимания в европейской традиции права. СПБ., 2006.

<sup>6</sup> Տե՛ս Үдарцев С. Ф. История политических и правовых учений (Древний восток). Академический курс. СПБ., 2007, с. 382-383.

Վորվում են ընդհանուր արդարությամբ: Նրանց միջև կոնֆլիկտը հնարավոր է, բայց ոչ կանոնորշված: Առանձին անարդար օրենքներ հնարավոր են, բայց օրենքի վրա հիմնված կարգը եռւթյամբ, արդար է: Օրենքով ապրել նշանակում է արդար ապրել: Ահա թե այդ մասին ինչ է գրում **Սոլիքատեսը**. «Պետությունը, որտեղ քաղաքացիներն առավելագույնս ենթարկվում են օրենքին, խաղաղ ժամանակ բարգավաճում է, իսկ պատերազմի դեպքում անպարտելի է... Դիմենք մասնավոր կյանքի, ո՞վ է պետության կողմից առավել քիչ ենթարկվում պատժի, ո՞վ է առավել հաճախ պարզեատրվում: Նա, ով է ենթարկվում օրենքներին: Ո՞վ է դատարանում ավելի քիչ պարտփում, ո՞վ է ավելի հաճախ հաղթում: Ո՞ւմ է ավելի լավ վստահել ունեցվածքի, որդիմերի, դստրերի պաշտպանությունը: Ո՞ւմ է պետությունը ճանաչում վստահության ավելի արժանի եթե ոչ նրան, ով պահպանում է օրենքները»: Ուստի **Սոլիքատեսը** եղանակացնում է, որ «օրինականն» ու «արդարը», նույն բանն են: Խստաբարության պակաս չափաբնով, բայց նույն գաղափարն արտահայտում է նաև **Արիստոտելը**.<sup>7</sup> «Արդարություն հասկացությունը կապված է պետության մասին պատկերացումի հետ, քանի որ արդարության չափանիշ չհանդիսացող իրավունքը քաղաքական շիման կարգավորող նորմ է»: Այսպիսով, թե՛ պողիտիվ, թե՛ բնական իրավունքները իրենցից ներկայացնում են բարոյագիտական արժեք՝ ապահովելով հավասարություն, ազատություն, կարգ և արդարություն: Իրավունքը չի դիտվում որպես մարդուն պարտադրված արտաքին ինչ-որ բան, այլ դիտվում է որպես բանական եակին ներունակ մի բան: Այս տեղից էլ՝ իրավունքին ենթարկվելը, օրենքը կատարելը համարվում է բարոյական պարտ:

Հավասարության սկզբունքը թերևս հիմնական է անտիկ իրավահասկացության մեջ: Բայց հավասարությունը ճանաչվում է միայն կոլեկտիվի, ազատ և հավասար:

մարդկանց համրույթի շրջանակներում: Եվ հենց կոլեկտիվն է հանդիսանում իրավունքի կրող և ոչ թե առանձին մարդն է, ով դեռ չի գիտակցվել որպես ինքնավար անհատ: Անհատական ազատության և համապատասխանաբար սուբյեկտիվ իրավունքի գաղափարը անտիկ դարաշրջանում չեր կարող ձևավորվել: Սարդը դառնում էր իրավունքի լիարժեք սուբյեկտ միայն քաղաքացու կարգավիճակ ստանալուց հետո: Հավասարության սկզբունքի գործողությունը բոլոր մարդկանց վրա տարածել կարողացան միայն ստոյիկները, բայց դրա համար նրանք ստիպված էին բոլոր մարդկանց ճանաչել ունիվերսալ օրենքով կա-

**«... Իրավունքի պահանջնառաջանում է այնտեղ, որտեղ ձևավորվում են այս կամ այն չափանիշներով իրար նման սոցիալական և մշակութային պայմաններ...»**

ռավարվող միասնական կոսմոպոլիսի քաղաքացիներ: Այս մասով ստոյիկությունը դարձավ հռոմեական իրավունքի փիլիսոփայական հիմքը: «... Հռոմեական իրավունքը ստոյիկությանն է պարտական ցանկացած մարդու պաշտպանելու, հավասարության սկիզբերն իրականացնելու միտունմի համար»: Իսկ եթե անտիկ մտածողները դիմում էին անհատին, կամ հանգում էին իրավունքի արժեքի մերժմանը, ինչպես, օրինակ, կրտսեր սովետները, կամ էլ հասարակությունից հեռանալու գաղափարներին, ինչպես, ասենք, էպիկուրականները:

Հավասարության սկզբունքը լրացվեց անհատի ազատության սկզբունքով և համապատասխանաբար սուբյեկտիվ իրավունքի սկզբունքով միայն նոր ժամանակներում: Բայց դրա սոցիալական ու մշակութային նախադրյալներն ստեղծվել են անբողջ միջանադարի ընթացքում: Իրավունքը շարունակվում էր ընկալվել ոչ այնքան որպես իշխանությունների իրաման, որքան կյանքի բացարձակ բարոյական կենսաձև:

<sup>7</sup> Սոլիքատեսի իրավաքաղաքական հայացքների մասին մանրամասն տես Ներսեսյանց Վ. Ս. Սոլիքատես. Երևան, 1980, էջ 43-49:

## ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Քրիստոնեությունը որդեգրեց անտիկ շատ գաղափարներ, այդ թվում՝ բնական իրավունքի և պողիտիվ իրավունքի միասնության գաղափարը: Արևմտյան քրիստոնեության մեջ չկա երկակի չափում՝ բարոյական և իրավական, որոնք հակադրվում են իրար: **Աքվինացին** միացրեց աստվածային (հավերժական), բնական և մարդկային պողիտիվ օրենքները՝ սահմանելով դրանց ընդհանուր աղյուրը և ընդհանուր նպատակը: Ընդ որում պետք է հաշվի առնել, որ չնայած այն հաճամամաքին, որը վաղ ֆեոդալական եվրոպայում իրավունքի գործողության ոլորտը էապես սահմանափակ էր, մի շաբթ գործոններ խթանել են արևմտաեվրոպական իրավական մշակույթի զարգացումը:

### «...Օրենքով ապրել նշանակում է արդար ապրել...»

**Առաջին**, եկեղեցին և աշխարհիկ իշխանությունը երեք չեն միաձուվել: «Երկու սրբերի» դոկտորինան խորը արմատներ է ձգել Եվրոպացիների գիտակցության մեջ: «Աստված երկու սուր է տվել երկրային թագավորությանը՝ քրիստոնեությունը պաշտպանելու համար: Պապին վերապահված է հոգևորը, կայսերը՝ աշխարհիկը», - այս խոսքերով է սկսվում Սաքսոնյան հայելին, որը կազմվել է 13-րդ դարում:

Ուստի նույնիսկ պապական հղորության ժամանակներում, որը թեպետ միանգամայն հարաբերական էր, թենկրատիկ կառավարումը հեռանկար չուներ:

**Երկրորդ**, կարևոր դեր է խաղացել Եվրոպայում ձևավորված վասալության համակարգը, որը միայն որպես անձնական կախվածության համակարգ բնորոշելը այնքան է ծիշտ չել լինի: Արևմտաեվրոպական վասալությունը տարբերվում էր անձնական կախվածության մյուս բոլոր ձևերից նրանով, որ ուներ պայմանագրային բնույթ, հանդես էր գալիս որպես իրավական հարաբերություն, որն արձանագրում էր վասալի և սյուզերենի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Նվիրվածության բարոյական սկզբունքն ստանում էր պայմանագրային ձև: Դրանով այն տարբերվում էր, ասենք, ճապոնական վասալությունից, որը վասալին ստիպում էր ցուցաբերել սյուզերենի կամքին ենթարկվելու և բացարձակորեն նվիրվելու բարոյական

պարտականություն: Հատկանշական է, որ Եվրոպայում վասալային հարաբերությունները կառուցվում էին վասալի անձնական արժանապատվությունը հարգելու վրա: Նա ոչ թե ծառա է կամ ստրուկ, այլ ավելի շատ ռազմիկ, ասպետ, ով ճանաչում է իր իրամանատարի հեղինակությունը: Պայմանագրային պարտականությունների կատարումը դիմում էր և որպես բարոյական պարտք, և որպես կողմերի իրավաբանական պարտականություն:

**Երրորդ**, իրավունքի և պարտականության փոխկապակցվածությունը որոշակի չափով առկա է նաև մոնորիալ իրավունքում, ֆեոդալների և գյուղացիների հարաբերությունների մեջ: Բայց «ի տարբերություն սենյորի և վասալի միջև հարաբերությունների՝ կալվածատերենով ու գյուղացիների իրավունքների ու պարտականությունների փոխադարձությունը ձեռք էր բերվուն

ոչ ի շնորհիվ ծառայության անհատական երդումների կամ պայմանագրային հարաբերությունների այլ ձևերի: Այնուամենայնիվ ենթադրվում էր, որ գյուղացիների հավատառմությունը պատասխան էր կալվածատիրոջ կողմից որոշակի գիշումների գնալու պատրաստականության, որոնք ավելի վաղ նա կամ նրա նախնիները շնորհել էին, ինչպես նաև գյուղացիների խնդրանքով նոր գիշումների գնալու և ընդհանրապես գյուղացիների հետ արդար վարվելու պատրաստականության»: Ինչպես վասալները, գյուղացիները նույնպես ունեն դատական պաշտպանության իրավունք, սակայն այդ իրավունքի իրացման հնարավորությունը սահմանափակ էր:

**Չորրորդ**, քաղաքների ընդայնմանը և ապրանքաշրջանառության մեծացմանը գործահեր ձևավորվել են քաղաքային և առևտորային իրավունքները: Վերջինս իր եւթյամբ ենթադրում էր կողմների հավասարության և փոխադարձության սկիզբ: Ինչ վերաբերում է քաղաքային իրավունքին, ապա միջնադարյան քաղաքն ընկալվում էր որպես անտիկ պոլիսի նմանակ, որպես իրավունքի հիմնա վրա քաղաքացիների հանրույթ, թեև իրավունքների և պարտականությունների այս կամ այն համակարգով «շնորհված» լինելը կապված էր այն հանրույթից կամ խափից, որին պատկանում էր քաղաքացին:

**Քինգերորդ**, խավերի միջև հարաբերու-

թյունները և չեն կրել միակողմանի բնույթ: Նրանցից յուրաքանչյուրին տրվում էն համապատասխան իրավունքներ և պարտականություններ իշխանության և մյուս խմբերի նկատմամբ և յուրաքանչյուրը հանդես էր գալիս որպես քվազինքնավար հանրություն, որն ուներ փոխադարձության և հավասարության սկզբունքների վրա կառուցված սեփական նորմատիվային համակարգ:

Եվ այսպես, մի կողմից, իշխանության և ենթակայի ուղղահայաց հարաբերություններում գործում է կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանող պայմանագիրը, մյուս կողմից՝ յուրաքանչյուր խմբի ներում հարաբերությունները կառուցվում են փոխադարձության և հավասարության սկզբունքով: Այսպիսով, միջնադարյան հասարակությունը բավականաչափ դիֆերենցված էր, աշխարհիկ իշխանությունը սահմանափակվում էր եկեղեցով, խավերով և վերջապես բուն ժողովրդով՝ որպես իշխանության աղբյուր: Արդեն 1089 թ. Հռոմի պապ Գրիգորիս VII-ը պնդում էր, որ կառավարողն իր ժողովով հետ կապված է ինքնատիպ պայմանագրով: Դետագայում այդ գաղափարը զարգացրեցին գլուսատորները, ովքեր համարում էին, որ թագավորը ժողովրդի quasi procurator-ն է (Օերկայացուցիչն է): Քրիստոնյա կառավարչին առաջադրվում էն թարոյա-իրավական պահանջներ՝ պահպանել խաղաղություն, արդարություն, համընդհանուր բարեկեցություն: Դրանք խախտողը դաշնում էր բռնակալ և զրկվում էր ենթակաների նկատմամբ իշխանություն իրացնելու բարոյական և իրավաբանական իրավունքից:

Պետական ինքնիշխանության տեսաբանները **Ժ. Բոդենի, Ի. Գրոցիուսի, նոյնիսկ Թ. Հռոմի** մոտ պետության ինքնիշխանության սկզբունքը պաշտպանելու չեր նշանակում ձգտել ճնշելու թաղաքացիական հասարակությունը: Ավելին, պետությունը նախատեսվում էր հասարակության կյանքում իրավունքի գործողությունն ապահովելու համար: Այսպես, Հռոմը, ով՝

բացարձակ միավետության առավել հետևողական կողմնակից էր, անընդհատ ընդգծել է պետության իշխանության անսահմանափակության նշանակությունը, բայց միաժամանակ որպես աքսիոն էր ընդունում այն պնդումը, որ նրա համընդգրկունությունը շատ հարաբերությունների վրա չի կարող տարածվել: Օրինակ, «գնելու կամ վաճառելու ազատությունը կամ միջյանց հետ այլ ձևով պայմանագիր կնքելը, բնակության վայր, սնունդ, կենսակերպ ընտրելը, երեխաներին սեփական հայցողությամբ դաստիարակելը և այլն»: Հռոմի մտքով անգամ չէր անցնում, որ սուվերենը կարող է ցանկանալ միջանտել իր ենթակաների անձնական կյանքին<sup>8</sup>:

Աստիճանաբար ծևավորվում է արևատյան իրավական միասնական մշակույթ, որը տարածվում էր Եվրոպայի թե՛ մայրցամաքային, թե՛ կղզային մասերի վրա: Չնայած ռոմանոգերմանական իրավական համակարգի և ընդհանուր իրավունքի համակարգի միջև եղած հայտնի տարբերություննե-

### «... Իրավունքին ենթարկվելը, օրենքը կատարելը համարվում է բարոյական պարտը...»

որին նրանք իիմնվում էն սոցիալ-քաղաքական, տնտեսական և համապատասխանաբար նաև աշխարհայացքային միասնական հիմքերի վրա: Իրավունքը շատ բանով դիտվում էր որպես կյանքի ավանդական կարգ, որպես «բնական» մի բան, բայց միաժամանակ կարևորվում էր «պատրաստված» իրավունքի անհրաժեշտությունը՝ որպես սուվերենի կամքի արտահայտում: Այս առումով Եվրոպական գիտակցության մեջ արդեն դրված էր իրավաբանական այողի տիվիզմի առաջացնան հնարավիրությունը: Մրա զուգահեռ ճանաչվում էր նաև որոշակի ունիվերսալ էկումենիկ իրավունքի առկայությունը, որը վեր էր կանգնած տեղական ավանդույթներից և օրենքներից, այսինքն՝ հռոմեական իրավունքը, որը հանդես էր գալիս որպես վերազգային իդեալական իրավունք: Ուստի Արևատյան Եվրո-

<sup>8</sup> Հռոմի իրավական հայացքների մասին մանրամասն տե՛ս. Կոզլիխ Ի. Յ. Իстория политических и правовых учений. Новое время: от Макиавелли до Канта. СПБ., 2002, с. 180-202.

պան իրեն ընկալում էր որպես յուս community, որպես իրավական միասնական տարածություն: Այս պայմաններում է սկսվում Եվրոպական իրավաբանական գիտության կայացումը: Այդ գործընթացի մեջնարկը կարելի է հաշվել Բոլոնյան ինստիտուտի հիմնադրումը՝ 1087 թվականից, որտեղ իրավունքի առաջին դասախոսը հօռմեական իրավունքի հայտնի գիտակ Իրներարիոսն էր:

**Գլուխտորների** (հօռմեական իրավունքի մեջնարանները) գործութեության շնորհիվ իրավագիտությունը վերածվում է գաղափարների և սկզբունքների համակարգի, համակարգային գիտության, որը իրավաբաններին տալիս է համապատասխան գործիքակազմ, ինչը թույլ է տալիս վերլուծել իրավաբանական խնդիրները: Դա վերաբերում է թե՛ մայրցամաքային Եվրոպային, թե՛ Անգլիային: Այսպես, **Յ. Բրակտոնը** «Անգլիայի օրենքների և սովորությունների մասին» իր տրակտակը կազմել է հիմնականում **Յուստինիանոսի «Դիգեստները»** մեջբերելով և մեջնարաններով:

Որոշ գիտնականներ ենթադրում են, որ արդեն XII-XIII դարերում Եվրոպայում ձևավորվել էր իրավունքի գերակյաւության կամ իրավական պետության գաղափարը: **Յ. Զ. Բերնանի** կարծիքով «դա նախ նշանակում էր, որ երկու հանրույթների՝ Եկեղեցական և աշխարհիկ դեկավարները սահմանում և պահպանում են սեփական իրավական համակարգերը, այսինքն՝ կանոնավոր ձևով իրավաբարկում են օրենքները, ստեղծում են դատական համակարգեր, կազմակերպում են կառավարման ստորաբաժանումներ և ընդհանրապես դեկավարում են իրավունքի միջոցով: **Երկրորդ**, դա նշանակում էր, որ երկու հանրույթների դեկավարներից յուրաքանչյուրը կաշկանդված է իրավունքներով, որոնք իրենք են գործողության մեջ դրել, նրանք կարող են օրինական ճանապարհով փոխել դրանք, բայց մինչ այդ պետք է ենթարկվեն դրանց, այսինքն՝ պետք է կառավարեն իրավունքն համապատասխան: Իսկ Երրորդ, դա նշանակում էր, որ յուրաքանչյուր իրավագորություն կաշկանդված է այլ իրավագորության իրավունքով այնքանով, որքանով օրինական է այդ իրավունքը, յուրաքանչ-

յուր պետություն գոյություն ուներ բազմաթիվ իրավագորությունների համակարգի շրջանակներում: Վերջին նշանակությունը հիմք էր մյուս երկուսի համար: Եթե Եկեղեցին ցանկանում էր ունենալ անկասելի օրինական իրավունքներ, պետությունը պետք է այդ իրավունքներն ընդուներ որպես սեփական գերակյաւության օրինական սահմանափակում: Նույն ձևով պետության իրավունքները հանդիսանում էին Եկեղեցու գերակյաւության օրինական սահմանափակում: Այս երկու սիրույթները կարող էին խաղաղ գոյակցել միայն իրենցից յուրաքանչյուրի նկատմամբ իրավունքի գերակյաւությունը փոխադարձ ճանաչելու շնորհիվ<sup>9</sup>: Տվյալ եզրակացության մեջ կա չափազանցության որոշակի չափարաժին, սակայն ծշմարիտ է, որ Նոր ժամանակների իրավաբանական աշխարհայացքի զարգացման պայմաններն ստեղծվել են Միջնադարում:

Նոր ժամանակներում արևմտաեվրոպական իրավահասկացությունը համալրվեց սկրունքային կարևորություն ունեցող անձի ինքնավարության գաղափարով և համապատասխանաբար սուբյեկտիվ իրավունքի գաղափարով, ինչը Արևելքում չկար: Սուբյեկտիվ իրավունքի հասկացությունը ծանոթ չէ ոչ չինացիներին, ոչ ծապունացիներին: Նոր ժամանակների մտածողները բնական իրավունք աղբյուր էին տեսնում արդեն ոչ թե բնության ունիվերսալ օրենքը կամ աստվածային բանականությունը, այլ հենց մարդու բնությունը:

Անձի ինքավարության գիտակցունը տեղի է ունեցել ֆեոդալական խավերի և կորպորացիաների փլուզման պայմաններում, որը անհատի ազատագրվում էր կուլեկտիվի խնամքից և սկսվում է ձևավորվել սուբյեկտիվ իրավունքի՝ որպես անհատի կամքի արտահայտման գաղափարը: Իրավունքի աճը ենթադրում է անձնական ազատությամբ օժտված և անձնական պատասխանատվություն կրող անհատ: Այսպիսով, իրավունքն ապահովում է ինդիվիդուալիստական կամ բաց (ըստ **Կ. Պոպերի**) հասարակության համերաշխությունը: Իդեալական առումով այն կոչված է ապահովելու անհատական և ընդհանուր շահերը:

<sup>9</sup> Տե՛ս. Գարոլդ Ջ. Բերման. Западная традиция права: эпоха формирования. М., 1998, с. 279-280.

# «ԱՌԱՏ ԻՐԱՎՈՒՆՔԻ» ՀԱՅԵԺԱԿԱՐԳԸ

## Արմեն ՌԵՑՈՒՆԻ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,  
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

**Ակտորիացի իրավագետ Եվգենի Էրիխսը (1862-1923) եական դեր կատարեց Եվրոպական սոցիոլոգիական իրավագիտության զարգացման գործում։ Իրավունքի նրա հայեցակարգը չափազանց բարդ է ու հակասական, ինչի պատճառով է ըննադատության ենթարկվեց ինչպես իր ժամանակակիցների (20-րդ դ. 20-ական թթ.), այնպես է իրավունքի սոցիոլոգիայի նորագոյն ուղղությունների ներկայացուցիչների կողմից։ Այսուհանդերձ, Էրիխսի «Իրավունքի սոցիոլոգիայի հիմունքները» գիրքը (1913) իրենից ներկայացնում է այս ուղղության հիմնական գաղափարների համակարգված շարադրանք։**

Իրավունքը՝ որպես պետության կողմից ընդունված իրավաբանական նորմերի միասնություն, չէր համապատասխանում **Ե. Էրիխսի** հայացքներին։ Նա խնդիր էր դրել բացահայտել հասարակության և իրավունքի միջև եղած կապը։ Բացի դրանց, նա անբավարար էր համարում իրավունքի պատճական դպրոցի տեսական դիրքորոշումը, որը նոր իրավունքը չէր տարածածում նախորդ ժամանակի իրավունքի տեսակներից։ **Ե. Էրիխսը** փորձում էր իրավունքի հիմքը հայտնաբերել ոչ թե ժողովրդի «ոգու», այլ իրական սոցիալական հարաբերությունների մեջ։ Դրա համար, սակայն, անհրաժեշտ էր իրավական կյանքի ենապիրիկ հետազոտում (ոչ միայն պատճական, այլև սոցիոլոգիական տեսակետից)։ Այդ նպատակով Էրիխսը կուտակեց ընդարձակ փաստական, ենապիրիկ նյութ կենդանի իրավունքի վիճակի մասին։ Նա մեծ ուշաբրություն էր դարձնում օրենսդրության, սովորական իրավունքի, դատական պրակտիկայի, իր բնակավայրի՝ Բուկովինայի, գյուղացիների տնտեսական կյանքի փաստերի հետազոտմանը, հավաքում էր նրանց կնքած պայմանագրերը, վերլուծության ենթարկում դրանք։ Բացի այդ, **Ե. Էրիխսը** հաղումներ էր անցկացնում ավստրիական Քաղաքացիական օրենսգրքի իրավական արդյունավետու-

թյան վերաբերյալ։ Ուսումնասիրելով Գերմանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի դատարանների մոտ 600 հատոր որոշումներ, նա հաճախ այն եզրակացության, որ իրավական կյանքի անբողջական պատկերը ստանալու համար միայն դատական գործերն իմանալն իրավաբանի համար դեռ բավարար չէ։ Դատարանի առջև, ըստ նրա, ներկայացվում է իրավական հարաբերությունների միայն փոքր մասը։

Գիտական հետազոտությունների նշանակալից արգասիք էր **Ե. Էրիխսի** «Իրավունքի սոցիոլոգիայի հիմունքները» աշխատությունը։ Գրքի նախաբանում նա ձևակերպում է իր դոկտորինայի առանցքային դրույթը։ **«Դաճախ պնդում են, որ գիրքը պետք է լինի այնպիսին, որ նրա իմաստը կարելի լինի ամփոփել մի քանի նախադասություններում։ Եթե սույն աշխատությունը մենք ենթարկենք նման փորձի, ապա դրա իմաստը կկայանա հետևյալում, մեր ժամանակներում, ինչպես և մյուս բոլոր ժամանակներում, իրավունքի զարգացման ժանրության կենտրոնը գտնվում է ոչ թե օրենսդրության, իրավաբանության կամ դատավարության, այլ բուն հասարակության մեջ։ Թերևս, հենց այս նախադասությունն է պարունակում իրավունքի սոցիոլոգիայի ամենայն հիմքի իմաստը»<sup>1</sup>։**

<sup>1</sup> Տե՛ս Ehrlich E. Grandigung der Sociologie des Rechts. München; Leipzig, 1913.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

**Երևիսի** ուսմունքն ստացավ «ազատ իրավունքի» հայեցակարգ անվանումը, քանի որ նրա համար բնորոշ էր «իրավունքի համեմեա ազատ մոտեցումը», որը, համաձայն Երևիսի, կարելի է հայտնաբերել դատական քննության պրակտիկայում, որտեղ առկա է դատավորական հայեցողության ազատությունը: Բուն իրավունքի հիմունքների սկզբը պետք է որոնել հասարակության, այն կազմող միությունների և դաշինքների մեջ, ինչպիսին են ընտանիքը, առևտորային ընկերությունները, համայնքը և ինքը պետությունը: «**Իրավունքի ակունքները, զարգացումն ու էռթյունը հասկանալու համար անհրաժեշտ է առաջին հերթին ուսումնասիրել հասարակական միություններում գոյություն ունեցող կարգը:** Իրավունքը պարզաբանելու նախորդ բոլոր փորձերի անհաջողությունը կայանում է նրանում, որ դրանք ենում էին իրավական հրահանգներից, այլ ոչ կարգից»: Եվ հեռավոր անցյալում, և ժամանակակից հասարակության մեջ իրավունքն այն կարգն է, որը գոյություն է ունեցել գերդաստաններում, ցեղերում, ընտանիքներում, ինչպես նաև դաշինքների ներքին կարգը որոշող նորմերում և սահմանված է այդ դաշինքների ու միությունների համաձայնագրերով, պայմանագրերով ու կանոնադրություններով: «Նման արձանագրումը պրակտիկայում հանգեցնում է այն մտքին, որ եթե քաղաքացիական և առևտորային օրենսգրքերը կոնկրետ իրահանգում չեն տալիս որևէ կոնֆլիկտի լուծման համար, ապա պետք է դիմել տվյալ միավորման կամ դաշինքի կանոնադրությանը, այսինքն դաշինքի իրավական նորմերին, որոնք ուղղակիորեն առնչում են տվյալ իրավական փաստին: Այս նորմերն ու փաստերն էլ հանդիսանում են «կենանի իրավունք»:

«Ազատ իրավունքի» ուղղության կողմնակիցների հիմնական գաղափարը (տեսական հիմնավորումների տարերություններով հանդերձ) հանգում է այն դրությին, որ օրենսդրի իրավական նորմերը չեն կարող նախատեսել կյանքում պատահող բոլոր դեպքերը: Այս կապակցությամբ նա

մեծ հետաքրքրություն էր տածում դատավորներին և պրակտիկ գործումներության բնագավառում նրանց դերակատարությանը: Իրավաբանության ու արդարադատության կառուցվածքի ամբողջ համակարգում միայն դատարանը, որ կարող է հասցնել համապատասխանել ժամանակի «մարտահրավերներին», քանի որ դատական պրակտիկան զարգանում է ավելի արագ, քան իրավունքը<sup>2</sup>:

**Ե. Երևիսը**, այնուամենայնիվ, չէր կարծում, որ «ազատ իրավունքը գտնելը» դատավորի գույտ կանային գործողություն է: **Առաջին** այն պատճառով, որ դատավորն օգտվում է դրանց միայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է վերացնել իրավունքի մեջ եղած բացը: Եվ **Երևիսը** դատավորը, շեղվելով օրենքի նորմից, սահմանափակված է սոցիալական կարգով, «կենանի իրավունքով», որը նա պետք է կատարելագործի իր մեկնության շնորհիվ:

Ըստ **Ե. Երևիսի** կարծիքի դատավորների, իրավաբանների գործունեությունը կարելի է համեմատել սոցիալական վերահսկողության մեխանիզմի գործումներության հետ, որն ապահովում է իրավական իրահանգների հետադարձ ազդեցությունը հասարակական երեսւանքների վրա: Նա նշում է, որ իրավունքի միջոցով հասարակության կառավարման ուղղությամբ իրավաբանի գործունեությունը ենթադրում է հասարակության մեջ գործող ուժերի իմացություն: Հենց այդ պատճառով իրավունքի մասին գիտությունների համակարգում մեծ և կարևոր դեր պետք է կատարի իրավունքի սոցիոլոգիան:

«Ազատ իրավունքի» իր հայեցակարգում **Ե. Երևիսը** հասուն ուշադրություն է դարձնում դատավորի անձին ու մասնագիտական պատրաստվածությունը: Խսկական դատավոր, գտնում էր նա, կլինի միայն այնպիսի մարդը, որը ոչ միայն սուր հայացք ունի հասարակական երեսւանքների եռթյան հանդեպ և բավարար չափով է ընկալում ներկայիս պահանջմունքները, այլև հասկանում է իրավունքի պատմական զարգացման եռթյունը: Ըստ Երևիսի՝ միայն նա, «**ով տիրոց պես տիրապետում է հարյուրամյակներով** փոխանցված

<sup>2</sup> Տե՛ս Կարբոնե Ժ. Юридическая социология. М., 1986, с. 110.

**իմաստությանը, կարող է կոչված լինել ընթանալու արդարության ճանապարհով»<sup>3</sup>:**

**Ե.** Երլիխն իր իրավաբանական հայեցակարգը կառուցում է ելնելով «իրավունքը բնորոշվում է սոցիալական հարաբերություններով» սկզբունքից<sup>4</sup>: Եվ քանի որ **Երլիխը** հասարակությունը դիտում է որպես մարդկանց կողմից ստեղծված զանազան դաշինքների համակցություն, ապա «**իրավունքի ակունքները, զարգացումն ու էռույնը հասկանալու համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել դաշինքներում գոյություն ունեցող կարգը:** Իրավունքը պարզաբանելու նախորդ բոլոր վարձերի անհաջողության պատճառն այն է, որ դրանք այն բխեցնում էին իրավական դրույթից և ոչ թե այդ կարգից»<sup>5</sup>: Նույն կերպ, ինչպես հեռավոր անցյալում, իրավունքն իրենից ներկայացնում էր ազգում, գերդաստանում, ընտանիքում գոյություն ունեցող կարգը, այսօր, ըստ Երլիխի, իրավունքը հարկավոր է որոնել դաշինքների ներքին կազմնությունն ու կարգը բնորոշող նորմերում, նրանց կանոնադրություններում ու պայմանագրերում:

Իր տեսական դրույթներով **Երլիխը** վերստին բորբքեց վաղեմի բանավեճն այն մասին, թե ում կամ ինչին է պատկանում առաջնությունն իրավունք ստեղծելու գործում՝ իշխանությանը, թե՝ սվորույթին: Այս բանավեճն սկսել է **Դուգո - Սավինյի - Պուհաայի** իրավունքի պատմական դպրոցը, որին վճռականորեն կողմնակից էր **Երլիխը**: «Ժողովրդի ոգու» հայեցակարգի փոխարեն, որը պատմական դպրոցի կողմից մեկնում էր անցյալի տեսակետից, նա առաջ քաշեց «կենդանի իրավունքի» գաղափարը, որը **Երլիխը** դիտում էր որպես «**բուն կյանքը բնորոշող իրավունք՝ եթե նույնիսկ այն իրահանգներում չի պարունակվում**»: Երլիխի հայեցակարգի գլխավոր առանցքն է օրենքի և սոցիալական կարգավորման այլ նորմերի տարրերությունների հնարավորինս վերացումը: Այլ

կերպ՝ համաձայն երլիխի, իրավունքն ավելի լայն հասկացություն է, քան միայն պետական իրավական կարգավորումը: Պետությունը միայն մեկն է այն դաշինք միությունների շարքում, որը ներառում է ընտանիքը, եկեղեցին, կորպորատիվ միավորումները՝ անկախ նրանից, ունեն դրանք արդյոք, իրավաբանական անձի կարգավիճակ, թե ոչ Միկնայն ժամանակ, գտնում է **Երլիխը**, գոյություն ունեն նաև տիպիկ իրավաբանական նորմեր, օրինակ, պատմելը կամ դատավճինների իրագործումը: Դարկադրման այդ յուրօրինակ միջոցները պետությունը նախատեսում է որպեսզի նախևառաջ, ապահովի իր գլխավոր ու նախատեղի նպատակները՝ ռազմական պաշտպանության կազմակերպումը, հարկահանությունը և ոստիկանական կառավարումը: Ավակյան նույնիսկ այդ յուրօրինակ պետական հարկադրման նորմերը ստեղծված են, ըստ **Երլիխի**, բուն հասարակության մեջ ձևավորված նորմերի պաշտպանության նպատակով: Վերջիններս էլ հանդիսանում են «կենդանի իրավունք»: Այն, ըստ **Երլիխի**, գտնվում է անընդհատ զարգացման վիճակում՝ նշտապես առաջացնելով կարծը և ոչ ոյուրաշարժ դրական իրավունքը:

**Երլիխը** քննադատում է նախորդ ժամանակների և իր ժամանակակից իրավագիտությունն այն բանի համար, որ ամբողջ բարդ սոցիալական իրավաբանությունը այն դիտում է բացառապես դատական պրակտիկայի տեսանկյունից, ինչը հանգեցնում է իրականության ոչ ճիշտ ու ամբողջական պատկերի ստեղծման, քանզի հասարակական կյանքի իրավական բնագավառը շատ ավելի լայն է, քան այն հատկածը, որը գտնվում է դատարանի տեսադաշտում:

Իրավունքի էռույն մասին ճիշտ ու ամբողջական պատկերացում տալու համար իրավական գիտությունը, ըստ **Երլիխի**, պետք է լինի ոչ միայն պատմական, այլն սոցիալական: Այդ իսկ պատճառով իրավաբանական գիտության մեջ և պրակտի-

<sup>3</sup> Տե՛ս Մարչук Վ. Պ. «Свободное право» в буржуазной юриспруденции. Критика концепций Е. Эрлиха. Киев, 1977, с. 119.

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 52:

## ՈՒՍՈՒՄՆԱԿՄԱՆ ԹՐՅՈՒԹՅՈՒՆ

կայում պողիստիվիզմի դեմ պայքարի նպատակով նա Չեռնովցիում ստեղծած «Կենդանի իրավունքի սեմինարում» ի մի էր բերում ու ընդհանրացնում ընդարձակ փաստական նյութը և դրա հիման վրա փորձում էր «նոր» տեսական հիմնավորում տալ գոյություն ունեցող իրավունքին:

Իրավունքի ներքո ավստրիացի գիտնականը հասկանում էր «հասարակության ինքնազործ կարգի նորմերը, որոնք բխում են կյանքի անմիջական դիտարկումներից, առևտորից, սովորույթներից, տարրեր միությունների կազմակերպչական և կանոնադրական դրույթներից՝ ինչպես օրենքում ճանաչվող, այնպես էլ նրա կողմից անտեսվող և նույնիսկ մերժվող»<sup>6</sup>: Ե. Էրլիխի մոտ իրավունքն արտահայտվում է երկակի կարգով: Կարգերից մեկը պարունակում է նորմեր, որոնք նշակվում են դատարաններում վեճեր լուծելիս, նյուու կարգը՝ նորմեր, որոնց համաձայն ընթանում է մարդկանց առօրյա գործունեությունը: Դասարակության մեջ ինքնարուևս կերպով առաջացող «կենդանի իրավունքի» գաղափարը (այս թեզի ծևակերպման առաջնությունը պատկանում է Ե. Էրլիխին) իր արտահայտությունը գտավ «կյանքի իրավունքի» «գրքի իրավունքի» հայտնի հակադրման մեջ: Դասարակական իրավունքն արտահայտվում է հասարակության, միությունների, «դաշինքների» մեջ ծևակերպված կարգերի միջոցով, իսկ իրավաբանական դրույթները ծագում են որոշումների ու օրենքի շնորհիվ: «Միայն այս երկու կարգերն իրենց մեջ պարունակող նորմերն են կազմում հասարակության փաստացի իրավունքը», նշում է Ե. Էրլիխը<sup>7</sup>:

Բնորոշելով իրավունքը որպես միությունների, «դաշինքների» կարգ, նա կարծիք է արտահայտում իրավական փաստերի որպես իրավունքի աղյուտների մասին. «Այդ փաստերը պետք է առկա լինեն նախքան մարդկանց ուղեղը կակսի ընդհանրապես ընկալել նոտքերն իրավունքի ու իրավահարաբերությունների մասին»: Այլ կերպ ասած, հասարակական իրավունքը ծագում է նախևառաջ իրավունքի փաստերից,

այլ ոչ իրավաբանորեն ամրագրված դրույթներից:

Փաստերը, որոնց հետ մարդու ուղեղը կապում է իրավական գաղափարները, ըստ Էրլիխի, բաժանվում են չորս տեսակի՝ **սովորույթ, գերիշխում, տիրում, կամքի արտահայտում:**

**Սովորույթին են** վերաբերում ամենահին և սկզբնական փաստերը, որոնք կազմակերպում ու ամրապնդում են ինքնականաշինքները: Նոր դաշինքներում սովորույթը շատ ավելի նվազ նշանակություն ունի, իսկ կարգը բնորոշվում է հիմնականում պայմանագրի, կանոնադրության, սահմանադրության միջոցով: Ընդհանուր առանձին, սովորույթից իրավունքի ծնունդը տեղի է ունենում. «ինչպես այն պահպանվում է իրավունքը՝ նորմին» սկզբունքով:

**Գերիշխումը** հանդես է գալիս որպես իրավաբանորեն կանոնակարգված հարաբերություն, երբ անձի իրավագործության ծավալը կապվում է հասարակության մեջ նրա սոցիալական դիրքի հետ:

**Տիրումը** Ե. Էրլիխի կողմից դիտվում է որպես փաստացի հնարավորություն տնօրինելու տնտեսապես արժեքավոր բարիքները: Տնտեսական կյանքը ենթադրում է ոչ միայն տնտեսական տիրում, այլև տիրողի շահերի պաշտպանություն: Կայուն տնտեսական գործունեության վարումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե իրավունքը ճանաչում է տիրումը:

**Կամքի իրավական արտահայտումը** տարբեր տեսակների պայմանագրերն են (կտակներ, նվիրատվություններ): Ե. Էրլիխը հասկանում էր, որ շուկայական տնտեսության մեջ պայմանագիրը հանդիսանում է տնտեսական հարաբերությունների ծևակերպման հիմնական միջոց: Նա ըգածում է, որ այն ամենը, ինչն իրենից ներկայացնում է հասարակական պահանջմունք, պայմանագրային հարաբերության միջոցով կարող է դառնալ իրավական պարտավորություն, և այն, ինչն ամեն կոնկրետ դեպքում դառնում է պայմանագրի բովան-

<sup>6</sup> Տիխոնրավով Յ. Վ. Օсновы философии права. М., 1997, с. 537-538.

<sup>7</sup> Մարչук Վ. Պ. «Свободное право» в буржуазной юриспруденции. Критика концепций Е. Эрлиха. Киев, 1977, с. 51.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

դակումենտում, պայմանավորված է հասարակական կապերով: Այդ պատճառով պայմանագրային իրավունքը նրա համար հասարակական և տնտեսական կարգի իրավական ձևն է:

Իրավական կյանքի լիակատար պատկերն ստանալու համար իրավագետի համար դեռ բավարար չէ ուսումնասիրել դատական գործերը և դրանց վերաբերյալ կայացրած դատավճիռները: Դատարանին, գտնում էր նա, մերկայացվում է իրավական հարաբերությունների միայն չնչին մասը: Իրավական զարգացման վճռորոշ պահը «**ընկած է ոչ թե օրենսդրության, ոչ թե իրավագիտության, ոչ թե դատական պրակտիկայում, այլ հենց բուն հասարակության մեջ»:** ընդգծում էր **Էրլիխը**<sup>8</sup>: Քենց այդ թեզը դիտելով որպես «իրավունքի սոցիոլոգիայի ցանկացած հիմքի հմաստ», դրա հիմնան վրա է կառուցում **Էրլիխն** իր ամբողջ հայեցակարգը:

Դամաձայն տեսության՝ իրավունքը հանդես է գալիս անմիջականորեն հասարակական հարաբերությունների միջոցով և քաղաքայտվում է երկակի կարգով: **Առաջին կարգը** պարունակում է նորմեր, որոնք մշակվում են վեճեր լուծելու ընթացքում, **մյուս կարգը** նորմերն են, որոնց համաձայն ընթանում է առօրյա մարդկային գործունեությունը: «**Միայն այն նորմերը, որոնք պարունակում են այս երկու կարգն էլ,- նշում է Ե. Էրլիխը,- կազմում են, փաստորեն, հասարակության լիարժեքը (ընդհանուր) իրավունքը»<sup>9</sup>:**

Արտացոլելով իր դարաշրջանում ծագած մենաշնորհային միավորումների շահերը, որոնք բխում էին լիակատար ազատության պահպանողական պետական քաղաքականությունից ու օրենսդրությունից, **Ե. Էրլիխը** պահանջում էր որոնել ու գտնել իրավունքը ոչ թե պետության կողմից իրահանգված իրավական սահմանումներում, այլ «միությունների ներքին կարգի և համաձայնագրերով հաստատ-

ված պայմանագրերի ու կանոնադրությունների մեջ»: Էրլիխն իր «սոցիոլոգիական» մոտեցման հիման վրա բնորոշում է իրավունքը որպես «հասարակության ինքնագործ կարգի» նորմեր, որոնք բխում են կյանքի, առևտի, սովորությունների ու սովորույթների անմիջական դիտարկումներից, տարբեր միությունների ու դաշինքների կազմակերպական և կանոնադրական դրույթներից ինչպես օրենքով ճանաչված, այնպես էլ դրա կողմից անտեսվող և նույնիսկ մերժվող<sup>10</sup>:

Ոչ իրավաչափորեն ընդլայնելով իրավունքի հասկացությունը, նա ջանում է դուրս բերել այն օրենքի, «գրեհիկ պետական ընկալման» շրջանակներից, դրանով իսկ ընդգծելով, որ օրենքը սրբություն չէ, և որ դրա հարկադրական, համապարտադրի բնույթը ամենակին չի հանդիսանում օրենքի անքակտելի հատկանիշ:

Իսկական իրավունքը, որով պետք է ղեկավարվի արդարադատությունը, պետք է, ըստ **Էրլիխի**, դաշնա միայն այն, ինչը դարձել է «կենդանի իրավունք»: Մնացած բոլորը, գտնում է նա, գուտ մերկապարանոց դոգմա են, ձևական գիտություն կամ սինուսնունը<sup>11</sup>:

Իրավունքի զարգացումը կապված է հասարակության հետ, և իրավունքի ուսումնասիրությունը պետք է սկսվի իրավունքի Փաստերի հետազոտումից: **Ե. Էրլիխը** նշում է իրավական նորմերի ձևակորման մի քանի աստիճան: **Առաջին աստիճանը** գրյություն ունեցող կարգի ամրապնդումն է, ինչը բնորոշ է ինքնակա դաշինքներին: **Երկրորդը** «նոր» դաշինքների ստեղծումն է, երբ բուլանում է նախկին կարգը, դատավորն արդեն չի կարող սահմանափակվել առկա նորմերով, այլ պետք է ստեղծագործաբար որոնի և գտնի նորերը: **Երրորդ աստիճանն** իրավական դրույթների հիմքերի զարգացումն է իրավաբանության միջոցով, այսինքն՝ իրավական դրույթները մշակվում են իրավաբան-

<sup>8</sup> Տե՛ս Erlich E. Grundlegung I der Sociologie des Reehls. - Munchen und Leipzic. -1913, էջ 159:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 159:

<sup>10</sup> Տե՛ս Erlich E. Grandlegung I der Sociologie des Reehls. Munchen und Leipzic. 1913. Vorrede, էջ 29-30, 399.

<sup>11</sup> Իրավաբանների իրավունքի ներքո Ե. Էրլիխը հասկանում է այն իրավունքը, որը ծագում է իրավաբանների գիտական և պրակտիկ գործունեության շնորհիվ, իսկ պետական իրավունքի ներքո՝ պետությունից բխող նորմերը:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՐՈՉՈՒԹՅՈՒՆ

ների կողմից՝ դատական որոշումների հիման վրա, իսկ իրավաբանների իրավունքի զարգացմանը մասնակցում են դատավորները, գիտնականները, փաստաբանները, նոտարները: **Որպես իրավունքի զարգացման վերջին աստիճան Ե. Էրլիխը** համարում է իրավաբանների իրավունքի օրինականացումը (լեզվացումը) պետության միջոցով: Բոլոր օրենքագրերը մեծամասմբ ծագում են Corpus juris-hg, Եզրակացնում է նաև ապելլացնում. «Իրավաբանների իրավունքն ավելի հին է, քան պետությունից բխող իրավունքը»<sup>12</sup>:

**Առաջին աստիճանի իրավունքը Ե. Էրլիխը** դիտում էր որպես հասարակական կյանքի ընթացքում տարերայնորեն-բնական եղանակով ծագող հասարակության ինքնին գործող կարգը: **Երկրորդ աստիճանի իրավունքը** ծագում և սկսում գործել այն ժամանակ, երբ խախտվում է դաշինքի, միության նախկին կարգը: Այն նախատեսված է հասարակության մեջ, դաշինքներում ծագող հիմնախնդիրների կարգավորման համար և իրագործվում է դատարանների (պետական, միջնորդ, կարգապահական) և այլ կազմակերպությունների կողմից, որոնք լուծում են վիճաբանական հարցերի կարգավորման խնդիրը: Այդպիսով, երկրորդ աստիճանի իրավունքը, ի տարբերություն առաջին աստիճանի իրավունքի, չի բխում անմիջապես հասարակությունից, այլ հանդիսանում է իրավաբանների ու պետության գործունեության արդյունք: Այսպիսի նորմերի անհրաժեշտությունը **Ե. Էրլիխը** բացատրում է նրանով, որ դաշինքների ոչ մի կարգ չի կարող հավակնել բացարձակ և սպառիչ բավարարման:

Վերջին հաշվով, իրավունքի զարգացման վրա հասարակության ազդեցության մասին **Ե. Էրլիխի** թեզը ծառայում է, ոչ այնքան իրավաբանական պողիտիվիզմին բնորոշ իրավունքի և դրա իրական սոցիալ-դասակարգային եռթյան միջև խզման բացահայտմանն ու քննադատությանը, որքան նպատակառուղված էր խարիսկել:

իրավունքի վերաբերյալ նորմատիվ պատկերացումը պետություն սահմանած և հաստատած (սանկցիավորած) իրավաբանական նորմերի ձևականորեն որոշակի համակարգի վերաբերյալ: Նա արդարացնում է իրավունքի «դատավորական ազատ հայտնաբերումը», այսպես կոչված՝ «սոցիոլոգիական մեթոդների» օգնությամբ<sup>13</sup>:

Նրա կարծիքով, իրավունքի սոցիոլոգիան պետք է իրենց կյանքն ապրած հին իրավական նորմերի մեջ ժամանակին տեսնի նոր իրավունքի ծիլերը: Այն պետք է գործի ինդուկցիայի, այսինքն՝ սոցիալական կյանքի անմիջապես դիտարկման եղանակով:

Իրավունքի սոցիոլոգիայի խնդիրը տեսնելով իրավունքի գիտական ուսումնասիրության մեջ, ինչը ենթադրում է ամբողջական պատկերի ստեղծում առ այն, թե ինչ է կատարվում և ինչ հիմքերով է կատարվում իրավական կյանքում, **Երլիխն** այնուհետեւ նշում է, որ իրավունքի սոցիոլոգիան պետք է արձանագրի փաստերը, բայց ոչ գնահատի դրանք<sup>14</sup>:

Այսպիսով, **Երլիխը** ձգտում է իրավունքի սոցիոլոգիան ներկայացնել որպես կենսական գործընթացների պահիվ, ապաքաղաքականացված դիտորդի, դրա «գիտականությունը» հանգեցնել գուտ փաստերի արձանագրման առանց դրանց գնահատական տալու<sup>15</sup>:

**Ե. Էրլիխը** համեստ է գալիս ավանդական այն կարծիքի դեմ, որ «իրավունքի դատավորական հայտնաբերման խնդիրն ըստ եռթյան կայանում է նրանում, որպեսզի օրենքի կարգագրերից տրամաբանութեն դուրս բերվեն առանձին դեպքերի լուծումները»<sup>16</sup>: Նրա կարծիքով, անհրաժեշտ է ձերբագատվել այսպես կոչված «հասկացությունների իրավագիտությունից» և օրենքի նեկանաբանման զանազան տրամաբանական եղանակներից, որոնք, իբր թե, կարողունակ են ամեն առանձին դեպքում իրավական դրույթի մեջ հայտնաբերել «օրենսդրի կամք» կոչեցյալ ֆիկցիան:

<sup>12</sup> Տե՛ս Մարչուկ Վ. Պ. «Свободное право» в буржуазной юриспруденции. Критика концепций Е. Эрлиха. Киев, 1977, с. 85.

<sup>13</sup> Տե՛ս Մարչուկ Վ. Պ. Идея «Свободного права» в концепции Е. Эрлиха и их роль в буржуазной юриспруденции. Автореф. дис. канд. юрид. наук. Киев. 1971, с. 11.

<sup>14</sup> Տե՛ս Erlich E. Sociologie des Rechts, in die Gcistcnswisscnscnchaftes. 1913, M4, էջ 202.

<sup>15</sup> Տե՛ս նշված աշխ., էջ 13:

<sup>16</sup> Տե՛ս Erlkh E. Diejurische Logik. Tübingen. 1918.

Իրականում այդ գործընթացը, նշում է **Երիխօս**, հանդիսանում է նույն «ազատ իրավունքի հայտնաբերնան» թաքնված եղանակ, և այդ իսկ պատճառով, ըստ նրա, «ազատ-իրավական» շարժման մեկ այլ կողմնակից **Ե. Ֆուքսի** կողմից արդարացիորեն կոչվել է «կրիպտոսոցիոլգիա», այսինքն ծածուկ, գաղտնի կերպով կիրավովող սոցիոլոգիա<sup>17</sup>:

Հետևաբար, հայտարարում է **Ե. Երիխօս**, ժամանակն է արդեն բացեիրաց խոսել իրավաբանների այն խստիվ պահանջող գաղտնիքի մասին, որ իրականում դատավորը ենթակա է օրենքին «միայն այնքանով, որքանով չի մեկնաբանում այն»<sup>18</sup> և որ օրենսդիրը միշտ տալիս է միայն առանձին դեպքերի կամ դեպքերի առանձին խնդիր լուծումների<sup>19</sup>:

Այսուհետև **Երիխօս** նշում է, որ իրավունքի նախնական, սկզբնական դրույթները, իրավունքի զարգացման ու եռյան ակունքները պետք է որոնել հասարակության մեջ, որն իրենից ներկայացնում է ընտանիքների, համայնքների, առևտրային միավորումների և, վերջապես, պետության զանազան գոյացությունների միասնություն: Դրանով **Երիխօս** ընդգծում է իրավունքի սոցիալական պայմանավորվածությանը: Սակայն, դիտելով հասարակական բոլոր երևույթները որպես իրավական, նա, այնուամենայնիվ, արտահայտում է ծայրահեղական տեսակետ: Այդ պատճառով նրա հայեցակարգը, ինչպես հեգնանքով նկատել է **Երիխօս** ժամանակակից **Օսոն ֆոն Դիրկեն**, կրում է «իրավական վեհության նորուցք»:

Դրա հետ մեկտեղ, **Ե. Երիխօս** բավականաչափ հստակորեն է սահմանազատում իրավական ոլորտը և իրավակարգը հա-

սարակական կյանքի այլ բնագավառներից բարոյականությունից, կրոնից և այլն, ցանկանալով ցույց տալ, որ պետությունն իր գործունեությունը իիմնում է ոչ միայն իրավական նորմերի վրա: Այդուհանդերձ, **Երիխօս** չարդարացված ընդլայնում է իրավունքի հասկացությունը: Նրա կարծիքով, պետության կողմից հաստատված (սանկցիավորված) իրավական իրահանգավորումները կազմում են սոսկ իրավունքի մի մասը: Դրա հետ մեկտեղ, գոյություն ունի նաև, այսպես կոչված՝ «կենդանի իրավունք», այսինքն ապրելակերպի ու վարքի կանոնների այն բոլոր տեսակները, որոնք ամեն րոպե ստեղծվում են մարդկանց առօրյա շեղումների ընթացքում: Զի կարելի չհամաձայնել **Երիխօսի** հետ, եթե նա պնդում է, որ պետական կազմակերպության որոշ ծներ գոյություն են ունեցել նախքան սահմանադրության ստեղծումը, ընտանիքի նախքան ընտանեկան կացութաձևը, տիրապետման նախքան սեփականության գոյացումը, և որ անցյալում գոյություն է ունեցել որոշակի «սոցիալական իրավունք», որի օբյեկտը մշտական եղել է «մարդկային համակեցությունը»: Սակայն դժվար է համաձայնել նրա այն պնդման հետ, որ դա եղել է բուն իմաստով «իրավունք», այսինքն՝ վարքի այնպիսի կանոններ, որոնք, վերջին հաշվով, հաստատված (սանկցիավորված) են պետության կողմից: Հենց սա է **Երիխօսի** «կենդանի իրավունքի» հայեցակարգի բոլոր օղակը: **Ե. Երիխօս** եզրակացնում է, որ իրավունքի ընդհանուր կենսակարպ գտնվում է հավերժ շարժման մեջ և ներկայացնում է իրենից հասարակական իրավունքի, իրավաբանների իրավունքի և պետական իրավունքի նորմերի փոխադրակցության արդյունք:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 296:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 232:

<sup>19</sup> Տե՛ս ErHch E. Die jurische Logik, էջ 288.

# Միջազգային էկոլոգիական վեճերի կարգավորման հիմնախնդիրը

Կարիք թագության  
Հայ-Ռուսական (Սլավոնական)  
պետական համալսարան

Ժամանակակից միջազգային իրավունքի առաջադիմական գարզացումը, ի թիվս այլինք, հանգեցրեց միջազնուական վեճերի խաղաղ կարգավորման բավականին արդյունավետ համակարգի ձևավորմանը, որի տարրերը կազմող գործիքակազմում, անշուշտ, կարևորագույն նշանակություն ունեն միջազգային դատարանները:

Ծրջակա միջավայրի պաշտպանության հարցում միջազգային դատական հաստատություններն իրականացնում են երկու տարրեր, սակայն փոխկապված գործառույթներ՝ այմի կողմից՝ զգայի գերակատարություն ունեն միջազգային իրավունքի նորմերի գործողության արդյունավետության բարձրացման, թիվս մյուս կողմից՝ պետությունների պատասխանատվության ինստիտուտի կատարելագործման հարցերում:

Ներկա պայմաններում իրենց խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար միջազգային դատարանները դիմող սուբյեկտների թիվը բազմապատկել է՝ ի տարերություն անցյալ դարի: Եվ դա բնական է, որքան էլ արդյունավետ լինեն միջազգային իրավահարաբերությունների կարգավորման իրավանորմերը և դրանց իրացնան վերաբերյալ կառուցակարգերը, միևնույն է դրանք չեն կարող կյանքի կոչել այն, ինչի համար ստեղծվել են, եթե պետությունները բարեխողորեն չկատարեն իրենց կողմից ստանձնած պարտավորությունները:

Ինչ խոսք, այստեղ կան և սուբյեկտիվ, և օրյեկտիվ բնույթի դժվարություններ: Սուլքյեկտիվ դժվարությունն առնչվում է այն հանրահայտ փաստին, որ պետությունները, որպես կանոն, առանձնապես մեծ ակտիվություն և բարեխողություն չեն դրսեղորում այն միջազգային իրավական պարտավորությունների կատարման հարցում, որոնք վերաբերում են իրենց տնտեսական շահերին: Օրյեկտիվ դժվարություններ կայանում է պետությունների և նրանց հանրային իշխանությունների կողմից շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդրի ոչ համարժել ըմբռնողականու-

թյանը: Որպես օրյեկտիվ դժվարություն կարող ենք նշել նաև այն փաստը, որ պետությունների պատասխանատվության ավանդական տարրերակը հնարավորություն չի տալիս համարժեք արձագանքել էկոլոգիական խնդիրներին: Այս համատեքստում, կարծում ենք, միջազգային հանրության գերխնդիրը, գերնպատակը պետք է լինի փորձել այս կամ այն պետությանը վերադարձնել միջազգային էկոլոգիական փաստաթղթերում ամրագրված դրույթների կատարման վիճակին, քան նրան **post factum** մեղադրել պարտավորությունների խախտման մեջ:

Ասվածի համատեքստում, և ելելով այն կանխարրույթից, որ շրջակա միջավայրին հասցված վնասը վերականգնել օրյեկտիվություն շատ դժվար է, հաճախ նաև անհնար, միջազգային էկոլոգիական իրավունքում մեծ կարևորություն է ստանում անդրսահմանային էկոլոգիական վնասի կանխարգելման հնատիտուտը: Անհրաժեշտ է արձանագրել, որ շրջակա միջավայրին հասցված վնասից հետո գրեթե անհնար է դառնում նաև վերականգնել այսպես կոչված **status quo ante** (նախկինում գոյություն ունեցող վիճակ), որն էլ իրենց էկոլոգիական իրավունքի ամենա-

կարևոր խնդիրն է<sup>1</sup>: Այդ իմաստով էկոլոգիական իրավունքում լայն տարածում է ստացել, այսպես կոչված չկատարման գործընթացը (**non-compliance procedure**), որը հանդես է գալիս որպես միջազգային վեճերի լուծման ավանդական տարբերակների այլընտրանք: Այն յուրօրինակ միջանկյալ դիրք է գրավում վեճերի լուծման դիվանագիտական և դատական միջոցների միջև: Չկատարման գործընթացը

կիրառվում է այն դեպքում, եթե պետությունը չի կատարում կոնկրետ միջազգային համաձայնագրում ամրագրված նորմերը կամ օրենսդրությունները կամ, որոնք հիմք են տալիս ենթարրելու, որ նմա-

նատիպ իրավիճակ կարող է ստեղծվել մոտ ապագայում: Այս առնչությամբ, հանրաճանաչ միջազգային պարտավորությունների չկատարման և պետությունների պատասխանատվության միջև տարբերությունը, եզրակացրել է, որ պետության պատասխանատվության ինստիտուտը նպատակ ունի երաշխավորել վնասի հատուցումը, մինչդեռ չկատարման գործընթացը ձգտում է ստիպել պետությանը վերադարձնալ միջազգային փաստաթթերում ամրագրված դրույթների բարեխիղ կատարմանը<sup>2</sup>: Նրա կարծիքով, չկատարման գործընթացը կիրառվում է նաև խրախուսելու համար պետություններին իրենց պայմանագրային պարտավորությունների կատարման հարցում, վերջնաերիս ստիպել օգտագործել իրենց բոլոր հնարավոր միջոցները վեճերի լուծման և

կամխարգելման համար<sup>3</sup>:

Ասվածով հանդերձ, պետք է ափսոսանքով արձանագրել, որ ժամանակակից աշխարհում ոչ միշտ է հնարավոր լինում կանխարգելման և խրախուսման մեթոդների կիրառմանը լուծել վեճերը: Ուստի, այս հարցում, մինչ օրս ստեղծված առավել արդյունավետ միջոցը միջաբետական վեճերի կարգավորման դատական գործընթացն է:

**«...Որքան էլ արդյունավետ լինեն միջազգային իրավահարաբերությունների կարգավորման իրավանորմերը և դրանց իրացման վերաբերյալ կառուցակարգերը, միևնույն է դրանք չեն կարող կյանքի կոչել այն, ինչի համար ստեղծվել են, եթե պետությունները բարեխսդարեն չկատարեն իրենց կողմից ստանձնած պարտավորությունները...»**

Միջաբետական վեճերի կարգավորման դատական միջոցի վերաբերյալ հարցի ուսումնասիրությունը նպատակահարմաք է սկսել **ՍԱԿ-ի միջազգային դատարանի** գործունեության ուսումնասիրությունից, քանի որ, ի թիվս այլնի, նրա կողմից քննվել են շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման հետ կապված և միջազգային հնչեղություն ունեցող վեճեր: Ըստ Դատարանի՝ «բնական միջավայրի պահպանությունը դա կայուն գարգանման մասն ու անհրաժեշտ պայմանն է և բնության պահպանությունը պետք է հաշվի առնվի ոչ միայն նոր ծրագրեր սկսելիս, այլ նաև ցանկացած գործունեության շարունակության դեպքում»<sup>4</sup>:

Միջազգային էկոլոգիական քվագիրատական ատյանի յուրօրինակ տարբերակ կարելի է համարել նաև **ՍԱԿ-ի փոխհատուցման համանաժողովը**, որն ստեղծվել

<sup>1</sup> <http://www.intlaw-rudn.com/science/library/publications/mezhdunarodnoe-ekologicheskoe-pravo/mezhdunarodnyi-mehanizm-soblyudeniya-gosudarstvami-obyazatelstv-po-upravleniyu-ohranyaemyimi-prirodnymi-territoriyami/view>

<sup>2</sup> Koskenniemi M. Breach of a treaty or non-compliance? Reflections on enforcement of the Montreal Protocol // Yearbook of International Environmental law. - 1992. - N3. - P. 123–162.

<sup>3</sup> [http://www.esil-en.law.cam.ac.uk/Media/Draft\\_Papers/Agora/Cardesa-Salzmann.pdf](http://www.esil-en.law.cam.ac.uk/Media/Draft_Papers/Agora/Cardesa-Salzmann.pdf)

<sup>4</sup> <http://www.icj-cij.org/docket/files/92/7375.pdf>

Է 1991թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 678 բանաձևի հիման վրա՝ որպես անվտանգության խորհրդի օժանդակ մարմին<sup>5</sup>: Վերջինիս նպատակն էր ստեղծել փոխհատուցման այնպիսի կառուցակարգ, որը կոչված կլիներ հաշվարկել և գնահատել 1990թ. օգոստոսից մինչև 1991թ. մարտն իրաքի՝ քուվեյթ ներխուժելու հետևանքով հասցված վնասները: Պարսից ժողովում բռնկված ռազմական գործողությունների արդյունքում բացի տարարնույթ հիմնախնդիրներից, տարածաշրջանի շրջակա միջավայրին էլ հասցվել էն էական վնասներ, մասնավորապես՝ մի քանի հազար բարել նավը լցվել էր Պարսից ժողովական տարածաշրջանի ֆլորուային և ֆաունային հասցնելով էական վնասներ:

### «... Միջազգային Էկոլոգիական իրավունքում մեծ կարևորություն է ստանում անդրսահմանային Էկոլոգիական վնասի կանխարգելման ինստիտուտը...»

Հանձնաժողովն իր այդ բարդագույն գործառույթների իրականացման ընթացքում էր բազմաթիվ վարչական, ֆինանսական, իրավական, ինչպես նաև քաղաքականության առնչվող հիմնահարցեր, դրոնց թվում էն նաև այդ նպատակով ստեղծված հատուկ հիմնադրամ վճարվող գումարների չափը, դրամական միջոցների բաշխումը և պահանջների բավարարումը, վնասի գնահատումը, բողոքների ցանկի կազմումը և դրամ հիմնավորվածության ստուգումը, ինչպես նաև վիճելի բողոքների կարգավորումը<sup>6</sup>: Հանձնաժողովի առաջին որոշմամբ սահմանվեցին բողոքներ ներկայացնելու հիմքերը, իսկ ավելի ուշ ուղղակիորեն սահմանվեց էկոլոգիական

վնասի և բնական ռեսուրսների քայլայնան համար բողոքների ներկայացման ընթացակարգը: Մասնավորապես, Հանձնաժողովը որոշել էր իրականացնել հետևյալ գործողությունները. էկոլոգիական վնասի մեղմումը և կանխարգելումը, ներայալ՝ նավային հրդեհները մարելու հետ կապված ծախսերի փոխհատուցումը և առափնյա և միջազգային ջրային ավագաններ նավային պաշարների արտահոսքի կանխարգելումը, շրջակա միջավայրի մաքրման և վերականգնման հետ կապված միջոցների ձեռնարկումը, մշտադիտարկում և էկոլոգիական վնասի գնահատումը՝ վնասի հաշվարկման և շրջակա միջավայրին հասցված վնասի վերականգնման նպատակով, առողջապահության մշտադիտարկում և բժշկական գննությունների անցկացում՝ էկոլոգիական վնասի արդյունքում առողջության սպառնացող ռիսկերի վերհանման և դրանց դեմ պայքարելու նպատակով<sup>7</sup>:

Նշված օրինակը

պատմության մեջ միակը չէր, սակայն հետագայում տեղի ունեցած ռազմական գործողությունների և դրանց արդյունքում շրջակա միջավայրին հասցված վնասների վերականգնման հետ կապված խնդիրները չստացան իրենց լուծումները: Օրինակ, Հարավսլավիայում ռազմական գործողությունների ժամանակ պայթյուններ էն տեղի ունեցել նավային գործարանում, վնաս էր հասցվել տարածաշրջանի ընդերքին, Դանուր գետի ֆլորային և ֆաունային: 2001թ. Աֆղանստանի ռազմական գործողությունների արդյունքում վնաս էր հասցվել Աֆղանստանի անտառային ֆոնդին: 2003թ. Հյուսիսաւանյան դաշինքի՝ իրաքի վրա կատարած ռազմական հարձա-

<sup>5</sup> <http://daccess-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/575/28/IMG/NR057528.pdf?OpenElement>

<sup>6</sup> [http://www.rau.su/observer/N7\\_2007/086\\_097.pdf](http://www.rau.su/observer/N7_2007/086_097.pdf)

Гусейнова Г. В., Солицев А. М. Компенсационная комиссия ООН и возмещение трансграничного экологического ущерба, Обозреватель - Observer. - М: РАУ-Университет, 2007, N7. - С. 86-98

<sup>7</sup> [http://www.uncc.ch/decision/dec\\_07r.pdf](http://www.uncc.ch/decision/dec_07r.pdf)

կումների արդյունքում կրկին պայթյուններ էին եղել նավահորերում, աղտոտվել էր անբողջ ջրանատակարարման հանակարգը, դեգրադացվել էկոհամակարգի մեծ մասը: Նշված դեպքերում միջազգային հանրությունը չկարողացավ հիմնախնդիրների էկոլոգիական բաղադրիչներին լուծում տալ: Բացառություն կազմեց միայն Պահեստինյան պատերազմի ժամանակ ՄԱԿ-ի փոխհատուցման հանձնաժողովի օրինակով ստեղծված Վնասի ռեստրի խորհուրդը որոն իր գործունեության արդյունքում հսրայելի Յանրապետությանը պարտավորեցրեց Պահեստինի ժողովուդին վերադարձնել հանրահայտ պատի կառուցման ժամանակ վնասած հողերը, այգիները, ծիթապտղի պուրակները, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից բռնագանձված այլ անշարժ գույքը: Դրանք վերադարձնելու ամենարինության դեպքում իրավախախտ հսրայելը պարտավորվում էր վճարել հասցված վնասի համար:

Ընդհանուր առնամբ, թեև վերը նշ-

ված ՄԱԿ-ի փոխհատուցման հանձնաժողովի ստեղծումն ուներ **ad hoc** բնույթ, սակայն, մեր կարծիքով, նրա կողմից մշակված կառուցակարգը կարող է կիրառելի լինել պատճառված էկոլոգիական անդրսահմանային վնասի գնահատման և հատուցման գործում: Այն նաև նախատիպ կարելի է համարել Միջազգային էկոլոգիական դատարանի ստեղծման համար, ինչի ուղղությամբ այսօր լուրջ քայլեր է անում համաշխարհային առաջադեմ հանրությունը:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առաջացող վեճերի խաղաղ կարգավորման միջազգային դատական մարմիններից կարելի է հիշատակել **Ծովային իրավունքի միջազգային տրիբու-**

**նալը** (այսուհետ՝ Տրիբունալ), որը գործող միջազգային դատական ատյաններից համեմատաբար ամենաերիտասարդն է: Այն ստեղծվել է 1982թ. ՄԱԿ-ի «Ծովային իրավունքի մասին» կոնվենցիայի հիման վրա՝ 1996 թվականին: Տրիբունալի իրավազորության մեջ են մտնում հիշատակված Կոնվենցիայի մեկնաբանման և կիրառության հետ կապված բոլոր վեճերը: Դրանցից բացի, Տրիբունալի իրավազորությունը կարող է տարածվել նաև այնպիսի վեճերի վրա, որոնց կազմակերումը նախատեսված է առանձին համաձայնագրերով: Մասնավորապես, ննան օրինակ կարող է ծառայել 2001թ. ՅՈՒՆԵՍԿՕՅի «Անդրծովյան մշակութային ժառանգության մասին» կոնվենցիամ<sup>8</sup>: Տրիբունալը բաց է Կոնվենցիայի բոլոր անդամ պետությունների համար,

**«...Քնական միջավայրի պահպանությունը դա կայուն գարգացման մասն ու անհրաժեշտ պայմանն է և բնության պահպանությունը պետք է հաշվի առնվի ոչ միայն նոր ծրագրեր սկսելիս, այլ նաև ցանկացած գործունեության շարունակության դեպքում...»**

այսօր դրա կազմում 162 պետություն է: Ի դեպ, Տրիբունալի կազմում կարող են ներկայացված լինել նաև այն պետությունները, միջազգային կազմակերպությունները, պետական կամ մասնավոր կազմակերպությունները, որոնք թեև անմիջապես կոնվենցիային մասնակից չեն, սակայն ճանաչել են Տրիբունալի իրավազորությունը<sup>9</sup>: Գոյություն ունեն վեճեր, որոնց վրա տարածվում է Տրիբունալի բացարկի իրավասությունը: Դա միջազգային ծովերի հատակի շրջաններում իրականացվող գործունեությունից առաջացող վեճերն են:

Շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների ուսումնասիրության առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Տրիբունալի կողմից 2011թ.

<sup>8</sup> [http://www.un.org/ru/documents/decl\\_conv/conventions/pdf/underwater\\_heritage.pdf](http://www.un.org/ru/documents/decl_conv/conventions/pdf/underwater_heritage.pdf)

<sup>9</sup> [http://www.un.org/Depts/los/convention\\_agreements/texts/unclos/annex6.htm](http://www.un.org/Depts/los/convention_agreements/texts/unclos/annex6.htm)

## ԲԱՐՊԱՇՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

«Տարածաշրջանում ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեության համար երաշխավորությամբ հանդես եկող պետությունների պատասխանատվության և պարտավորության մասին» հրապարակված խորհրդակցական եզրակացությունը<sup>10</sup>, որը միջազգային ծովային իրավունքի առաջադիմական զարգացման գործում ունեցել է անգնահատելի նշանակություն: Այն սահմանեց այսպես կոչված «պատշաճ շրջահայեցության» բարձրագույն չափորոշիչները, ընդգծեց միջազգային էկոլոգիական իրավունքում արդեն գոյություն ունեցող կանխարգելման միջոցառումների կիրառման անհրաժեշտությունը, ինչպես նաև Արևորի միջազգային կազմակերպության կողմից սահմանված «գոյություն ունեցող լավագույն տեխնոլոգիաների» կի-

պատճառված էկոլոգիական վնասի հատուցումը, էկոլոգիական տեսակետից վնասակար գործունեության արգելում՝ կասեցման կամ դադարեցման ձևով: Շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման հիմնախնդիրների հետ կապված միջազգային վեճերը էկոլոգիական արբիտրաժի և հաշտեցման միջազգային դատարանը լուծում է հետևյալ երեք ճանապարհներով. ա) կոնկրետ իրադրության իրավական վերլուծության հիման վրա՝ շահագործի կողմից խնդրանքով խորհրդատվություն ներկայացնելով, բ) վիճող կողմերի հաշտեցման միջոցով վիճելի իրադրության կապակցությամբ փոխադրումային այնպիսի որոշում ընդունելու միջոցով, որը ձեռնոտ կլիմի երկու կողմերին էլ: Այդ որոշումը կարող է ձևակերպվել համաձայնագրի ձևով՝ փոխադարձաբար բարեխոժնորեն կատարման պայմանով, գ) կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ամբողջական դատարաբիտրաժային դատավարության անցկացման միջոցով, որը կողմերը նախապես ճանաչել են պարտադիր<sup>12</sup>:

**«...Միջազգային էկոլոգիական դատարանի ստեղծման համար, ինչի ուղղությամբ այսօր լուրջ քայլեր է անում համաշխարհային առաջադեմ հանրությունը...»**

րառումը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացները<sup>11</sup>:

Միջազգային էկոլոգիական վեճերի դատական լուծման գործում էական դերակատարություն է ունեցել նաև 1994թ. ստեղծված ոչ կառավարական մի կազմակերպություն՝ **էկոլոգիական արբիտրաժի և հաշտեցման միջազգային դատարանը**, որը կարող է քննել բավականին մեծ շրջանակի վեճեր: Դրանց թվին են դասվում՝

ինապես ճանաչել են պարտադիր<sup>12</sup>: Այս դատական ատյանում դատավարությունն իրականացվում է հաշտարար դատավարության սկզբունքներով: Կողմերն ինքնուրույն են որոշում կայացնում դիմելու այս դատարանին և գործի լուծման համար որա կազմից ընտրում են երեք կամ ավելի թվով դատավորներ: Այս դատարանի առանձնահատկությունն այն է, որ դատարան դիմող սուբյեկտների թիվը սահմանափակ չէ, դրանց թվում կարող են լի-

<sup>10</sup> Advisory Opinion of the Seabed Disputes Chamber of International Tribunal for the Law of the Sea on “Responsibilities and Obligations of States Sponsoring Persons and Entities With Respect To Activities in the Area”. By David Freestone, March 9. 2011. Volume 15. Issue 7. ASIL Insight <http://www.asil.org/insights110309.cfm>

Տարածաշրջան եզրույթը կիրառելիս տվյալ դեպքում հասկացվում է «Ծովային իրավունքի մասին» 1982թ. Կոնվենցիայով սահմանված մարդկության ընդիհանուր ժառանգություն համախառող ծովերի, օվկիանոսների և նրա մասնակից պետությունների իրավասության սահմաններից դուրս գտնվող ընդերքի հատվածը:

<sup>11</sup> А. М. Солнцев, К 15-летию деятельности международного трибунала по морскому праву, Российский юридический журнал. 4/2012

<sup>12</sup> Ст. 6 Международное экологическое право: Учебник/Отв. Ред. Р.М. Валеев,-М.: Статут, 2012, т. 601:

նել ինչպես մասնավոր անձինք, այնպես էլ հասարակական կազմակերպությունները, պետական մարմինները՝ ներառյալ՝ կառավարությունները<sup>13</sup>:

**Մարդու իրավունքների եվրոպական դատարանը** նույնպես բացառություն չի կազմում շրջակա միջավայրի պահպանության և պաշտպանության դատական նախադեպերի ստեղծման գործում: Սակայն հարկ է նշել մի հանգամանք, որ «Մարդու իրավունքների և իմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. Եվրոպական կոնվենցիան անմիջականորեն չի սահմանում բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու մարդու իրավունքը: Մարդու եկոլոգիական իրավունքների պաշտպանության գործերով դատարանի վճիռներն ընդունվել են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման հիմքով: Այդ հոդվածը սահմանում է, ի թիվս այլնի, մասնաւոր և ընտանեկան կյանքի հարգման, բնակարանի անձունմիւնքի հիմքության ապահովման մարդու իրավունքը: Պետությունն իրավունք չունի միջանտելու այդ իրավունքների իրականացմանը, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի և ելենելով պետության ազգային անվտանգության պահպանության պահանջներից:

**Նախական այլնի, մասնաւոր և ընտանեկան կյանքի հարգման արդյունքում առաջանալու մարդու իրավունքի պահպանության արդյունքում, բայց որոշակի պայմանների առկայության դեպքում:** Մասնավորապես՝ խախտման արդյունք պետք է լինի հենց շրջակա միջավայրի վիճակի վատքարացումը, որին էական ազդեցություն է ունեցել դիմունատուի բնակարանի, նրա ընտանիքի կամ անձնական կյանքի վրա: Երկրորդը՝

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ շրջակա միջավայրի վատքարացող վիճակի հետ կապված վեճերում պետությունների պատասխանատվությունն առաջանում է մասնավոր տնտեսվարող հատվածի կազմական գործում թույլ տված իր թերացումների արդյունքում: Այսինքն պետությունը, ի դեմս իրավասու մարմինների, պատասխանատվություն է կրում, եթե վերջիններս համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել շրջակա միջավայրի վիճակի բարելավման ուղղությամբ<sup>14</sup>:

Ամփոփելով ավածը, կարող ենք հանգել հետևյալ եզրակացությանը: Ինչպես ցանկացած վեճի դեպքում, այնպես էլ եկոլոգիական բնույթի վեճերի լուծման ընթացքում կարող է կիրառվել միջազգային հան-

**«...Միջազգային եկոլոգիական վեճերի դատական լուծման գործում էական դերակատարություն է ունեցել 1994թ. ստեղծված եկոլոգիական արքիտրաժի և հաշտեցման միջազգային դատարանը...»**

րային իրավունքով նախատեսված վեճերի լուծման գործիքակազմի ողջ գինանոցը: Սակայն, միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ շրջակա միջավայրի պահպանության հարցերում պետությունները, որպես կանոն, դժվարությամբ են գիտում իրենց դիրքերը, եթե հատկապես դրա հիմքում ընկած է նյութական շահը: Ուստի, նկատի ունենալով շրջակա միջավայրի պաշտպանության գլոբալ նշանակությունը, հնարավոր եկոլոգիական աղետների արագ կանխարգելման հրատապությունը, մեղավոր պետությունների պատասխանատվության անխուսափելիության երաշխավորումը, կարծում ենք, եկոլոգիական վեճերի լուծման գործիքակազմում առաջնահերթությունը պետք է տրվի

<sup>13</sup> Ст.у Валеев, Р. М., Международный контроль при охране окружающей среды, Московский журнал международного права. -1998. - N1 - № 601:

<sup>14</sup> Д.С. Велиева, “Европейский суд по правам человека подтвердил обязанность государства по охране окружающей среды”, Российская юстиция в Европейском суде по правам человека, N12/2007, стр. 70.

# Արդարության կատեգորիան Միջնադարյան մտածողների իրավական հայեցակարգերում

ՎԻԼԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ասպիրանտ

Միջնադարյան դարաշրջանը միշտ առկա էր ու առկա է մեր մշակույթում<sup>1</sup>, այդ թվում նաև՝ իրավական: Այս դարաշրջանը գրավիչ է համարվում ժամանակակից հետազոտողների համար, ովքեր դիմում են այդ ժամանակաշրջանին՝ բազմաթիվ ժամանակակից միտումներ որոնելիս: Միջնադարն ուսումնասիրվում է իրեն ներկայիս Եվրոպայի Alma Mater-ը<sup>2</sup>: Ընդհանուր այս ուղղությունը բացատրում է բազմաթիվ մասնավոր որոնումներ, օրինակ, միջնադարյան հետազոտողների ու իրավագետների աշխատությունների վերլուծություն՝ արդարության տեսության առումով, ինչը, անկասկած, հանդիսանում է ուսումնասիրվող հիմնախնդրի առավել խորը գիտակցման մի նոր փորձ:

Հարկավոր է նշել, որ ընդհանուր առմամբ միջնադարում արդարության մասին ուսմունքը տարբերվում է անտիկ հայացքներից, առաջին հերթին, իրենց ուղերձներով, եկեղեցին ձանաշվում է ավելի հեղինակավոր իշխանություն, քան պետությունը, համարվում է նաև, որ մարդու եւթյունը բացահայտվում է միայն կյանքից այն կրոմ:

Կրոնն ու եկեղեցին գերիշխող դեր էին խաղում հասարակության կյանքում, այդ թվում նաև իրավունքի ոլորտում, որը եղել է կանոնիկ իրավունքի դասական նմուշը<sup>3</sup>:

«Աստված ու ամենի Արարիչ՝ Աստված մեր, ով ստեղծեց մարդուն ու արժանացրեց իրեն ինքնիշխանությամբ, տվեց իրեն ի օգնություն համաձայն մարդարեների խոսքի, օրենքը, որը սահմանեց այն, ինչը հարկավոր է անել, և այն, ինչից հարկավոր է խուսափել, ինչպես նաև այն, ինչը հարկավոր է ընտրել, իրեն ի նպաստ փրկությանը, և ինչից

հարկավոր է խուսափել իրեն պատիժ բերող»<sup>4</sup>:

Բերվող մեջբերումն ակնհայտորեն պատկերում է, թե որքան իրավունքը ներթափանցված էր եկեղեցու ոգով<sup>5</sup>:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ միջնադարյան Եվրոպայում «արդարություն» կատեգորիայի վերաբերյալ գոյություն են ունեցել իիմնականում երկու իրարամերժ և հակադիր մոտեցումներ, որոնցից մեկը արտացոլվել է միջնադարյան կաթոլիկ եկեղեցու և աստվածաբանության խոշորագույն ներկայացուցիչ Թոմաս Արքինացու

<sup>1</sup> Stęś Sikorska L. Constructing the Middle Ages in Contemporary Literature and Culture // Studia Anglicana Posnaniensia. Vol.35. Poznan 2000. P. 261.

<sup>2</sup> Stęś Wicher A. The Fourteenth Century Mystics as God's Children // Studia Anglicana Posnaniensia. Vol. 35. Poznan 2000. P. 261.

<sup>3</sup> Раянов Ф. М Юриспруденция: Курс лекций. Уфа: Изд-во БашГУ, 2001. С. 226.

<sup>4</sup> Эклога: Византийский законодательный свод VIII века. М.: Наука, 1965. С. 45.

<sup>5</sup> Stęś Garольд Дж. Берман. Вера и закон: примирение права и религии. М., 2008, էջ 43-62:

(1226-1274) ուսմունքում, մյուսը՝ աշխարհիկ դասի ներկայացուցիչ՝ **Մարտիլիուս Պաղուանցու** (մոտ 1275-1343):

**Աքվինացին** ծեռնարկեց քրիստոնեական աստվածաբանության և անտիկ փիլիսոփայության (առաջին հերթին՝ **Արիստոտելի**), հավատի ու բանականության հաշտցման, ավելի ծիշտ՝ համադրման փորձ, ինչն արտահայտվեց նաև նրա քաղաքական ուսմունքում: Նրա քաղաքական և իրավական ուսմունքում համադրվում են **Արիստոտելի**, **Կիկերոնի**, **ստոյկուների** և քրիստոնեական հեղինակությունների՝ **Օգոստինոսի**, **Ալեքս Սեծի** և այլոց գաղափարները: Նաև, մասնավորապես, հիմնվում է **Արիստոտելի** մարդու քաղաքական եռթյան, բնական և մարդու կամքով հաստատված իրավունքի, ազատ անհատների՝ քաղաքացիների իրավական հավասարության, կառավարման ձևերի մասին ուսմունքների վրա<sup>6</sup>:

Պետության և իրավունքի, ինչպես նաև արդարության մասին **Աքվինացու** ուսմունքի հիմնադրությը՝ արաշագործության գաղափարն է:

Ըստ **Աքվինացու**՝ պետության գոյությունը, մարդկանց միավորումը քաղաքական հասարակության մեջ բնական օրենք է, բանականության թելադրանք: Չետևելով **Արիստոտելին**՝ նա մարդուն համարում է «քաղաքական կենդանի», եակ: Մարդու ձգտում է իր նմանների հետ միավորման ու հաղորդակցման՝ կյանքի առավել լավ պայմաններ ապահովելու, իր կարողությունները լրիվ բացահայտելու համար: Ընտանիքը չի կարող ապահովել այդ ամենը, դրա համար անհրաժեշտ է հասարակություն: Պետության ստեղծումը մարդու հասարակական կյանքի բնական հակվածության արդյունք է, բայց դա կանխորոշված է Աստծոն կամքով և միջնորդավորված մարդու բանականությամբ: Պետությունը նաև հասարակական դաշինքի արդյունք է:

Ըստ **Աքվինացու**՝ պետությունն աստվածային հանապարփակ կարգի մասն է, որին պետք է համապատասխանեն պետու-

թյան օրենքները: Այդ օրենքները գործուն են դարձնում իշխանությունը, որի աղբյուրը նույնպես Աստվածն է: Նա յուրովի է մեկնաբանում Պողոս առաքյալի հայտնի դրույթը: «Ամեն անձը թող ինազանդէ բարձր իշխանություններին, որովհետեւ չկա իշխանութիւն, որը Աստուածանից չէ. եւ ներկա իշխանութիւններն Աստուածանից են կարգուած»: Սակայն իշխանություն հասկացության մեջ նա տարբերակում է՝ 1) իշխանություն՝ իբրև այդպիսին, որպես իշխողների և իշխվողների միջև վերացական հարաբերություն՝ անկախ դրանց կոնկրետ ձևից ու ծագումից, 2) իշխանության հաստատման կոնկրետ եղանակ, 3) իշխանության իրականացման պրակտիկա: Իշխանությունն իբրև այդպիսին, իր եռթյամբ (իշխանություն՝ առաջին իմաստով) ունի աստվածային ծագում, ուստի հավերժական է: Իսկ իշխանության այս կամ այն կոնկրետ ձևը (օրինակ՝ բռնապետությունը) կարող է նույնիսկ հակասել իշխանության աստվածային եռթյանը, չհամապատասխանել իր կոչմանը, որովհետև իշխանության կոնկրետ ձևը հաստատվում է՝ «մարդկային իրավունքով» (իշխանություն՝ երկրորդ իմաստով): Նույնը Վերաբերում է իշխանության իրականացմանը, որը լինում է արդար և անարդար: Անարդար իշխանությունը լինում է երկու տեսակի՝ անարդար ձեռքբերված իշխանություն և իշխանության չարաշահում: Աստված թույլ է տալիս դրանց գոյությունը, բայց բնավ չի օրինում: Ուստի դրանք աստվածային ծագում չունեն: Այս դրույթը ներունակարար բովանդակում է իշխանություններին դիմակայելու հնարավորությունը: Յայեցակարգային այս հարցադրումը կարևոր դեր խաղաց իրավական պետականության քրիստոնեական մոդելի ձևավորման ու զարգացման գործում<sup>7</sup>:

Պետության նպատակն ընդիանուր բարիքն է իր բոլոր անդամների համար, մարդու գոյության, նրա բարոյական ու մտավոր զարգացման համար հանապատասխան պայմանների ստեղծումը:

<sup>6</sup> Տե՛ս История политических и правовых учений. Средние века и Возрождение. М. 1986, էջ 27-28; Боргос Ю. Фома Аквинский. М., 1975; Антология мировой философии. М., 1969, т. հ., 2, էջ 823-824; The Political ideas of St. Thomas Aquinas. N 5., 1953 և այլն:

<sup>7</sup> Տե՛ս Բերնեցկий Г. Г. О природе естественного права в истории правовой мысли. Дис... док. юрид. наук. СПб, 2001, с. 101-102:

**Աքվինացին** պետական իշխանության առավել արդար ծև համարում է միապետությունը, որի նպատակահարմարությունը հիմնավորում է համանմանության մեթոդով, գոյություն ունի մեկ Աստված, մեկ հոգի մարմնում և այլն: Ինչպես նաև է ընթանում քանուն հակառակ նավապետի կամքով, ճիշտ այդպես էլ պետական նավն ընթանում է ավելի լավ, երբ ունենում է մեկ կառավարիչ՝ միապետ: Այնուամենայնիվ, արդար միապետությունը բռնակալության վերածնելու հնարավորություն ունի (Եթե չկան միապետի իշխանությունը զսպող հաստատություններ), որովհետև միապետությունն ընդգրկում է կառավարման թե՛լավագոյն, թե՛ վատագոյն նախահիմքերը: Ուստի, ենելով մարդկային գոյության իրական պայմաններից և ժամանակի քաղաքական իրավիճակից, **Աքվինացին** առավել ընդունելի է համարում կառավարման խառը ծևը (Երեք «մաքրուր» ծևի հիմքի վրա): Ընդ որում, միապետը մարմնավորում է պետության միասնությունն ու հզորությունը, կառավարում համաձայն պետության օրենքների՝ իր գործողություններում սահմանափակված լինելով գործող իրավական նորմերով: Բացի այդ, կառավարողները պետք է հաշվի առնեն «ժողովրդի կամքը», բոլոր քաղաքացիներին ներգրավեն պետության կառավարման գործում, ինչը սոցիալական խաղաղության և համաձայնության, պետական կառուցի ամրապնդման անհրաժեշտ պայմանն է ու երաշխիքը: Այսպիսով, նա նախընտրում է միապետությունը՝ սահմանափակված ոչ միայն օրենքներով, այլև արդարության և ազնվության տարրերով:

**Աքվինացին** Աստծուն դիտում է բարու, արդարության սկզբնապատճառը, և վերջնական նպատակը: Մարդու բանական ու ազատ գործողությունների վերջնական նպատակը նպատակամիվածությունն է իեպի բարին: Չար սուբստանցային չէ, քանի որ ողջ գոյք ի բնե բարի է: Մարդկային գործողություններում առկա չափուկ նա գրում է. «**Բայց կամային իրողություններում գործողության անբավարարությունը բխում է առկա անկատար կամքից այն չափով, որը անով վերջինս ակտուալ անհնագանդություն է ցուցաբերում իրե-**

**նից վեր կանգնած կանոնին:** Այդպիսի անկատարությունը դեռևս մեղք չէ, բայց դրան հետևում է մեղքը, որ բխում է այն գործողություններից, որոնք իրականանում են այդ անկատարության վիճակում»:

Չարի պատճառը մարդու՝ իբրև գործողության սուբյեկտի անկատարությունն է, մարդու ազատ կամքը, քանզի առանց կամքի ազատության, մարդը չի կարող պատասխանատվություն կրել իր գործողությունների համար:

Նշված դատողությունները լույս են սփռում նաև օրենքի և իրավունքի **Աքվինացու ընթանան** վրա. **«Օրենքը, գրում է նա, գործողությունների որոշակի կանոն է և չափանիշ, որով ինչ-որ մեկը մղվում է գործողության կամ խուսափում դրանից»:** Օրենքը՝ որպես ընդհանուր կանոն, պետք է մարմնավորի արդարությունը և հասարակության բոլոր անդամների ընդհանուր բարորությունը, հակառակ պարագայում՝ այն կորոցնի իր հեղինակությունը և իրավագորությունը հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում:

**Աքվինացին** առաջադրում է օրենքների հետևյալ դասակարգում. **1) Հավերժական օրենք (lex acterna), 2) Բնական օրենք (lex naturalis), 3) Մարդկային օրենք (lex humana), 4) Աստվածային օրենք (lex divina)**<sup>8</sup>:

**Հավերժական օրենքն** աշխարհակարգի, աշխարհի աստվածային կառավարման համընդհանուր օրենքներն են, որոնք, ընդհանուր առմանը, համընկնում են աստվածային բանականության հավերժական գաղափառներին: Այն մյուս բոլոր օրենքների աղբյուրն է: Հավերժական օրենքը անհասնելի է մարդու բանականությանը: Բայց որպեսզի մարդը կարողանա հետևել աստվածային նախասահմանմանը, նա օժտվել է հատուկ ունակությամբ՝ ճանաչելու հավերժական օրենքի առանձին դրսերումները, իմանալու, թե ինչն է հակասում, և ինչն է համապատասխանում ինքը:

**Բնական օրենքը** հավերժական օրենքի անմիջական դրսերումն է արարված աշխարհի, նաև մարդու մեջ: Մարդու մոտ բնական օրենքը դրսերվում է բարին և չա-

<sup>8</sup> St. Summa Theologica. New York. 1947, 1-2. Qa. 90, art. 4.

## ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

որ տարբերելու ունակության, նրա ազատ կամքի՝ բարու իրականացմանը միտվածության մեջ: Սակայն, մարդկանց ընդունակությունների տարբերությունները, կենսական հանգամանքների բազմազանությունը և այլն, հանգեցնում են բնական օրենքի ոչ միանշանակ ընկալման ու մեկնարանության:

Այս հանգամանքը պայմանավորված է բնական օրենքի պահանջների ոչ կոնկրետությամբ: Մրանով է բացատրվում մարդկային օրենքների մշակման անհրաժեշտությունը, որոնց խնդիրը մարդկային կյանքի, սոցիալական հարաբերությունների բազմազանությանը հանապատասխան՝ բնական օրենքի սկզբունքների ու պահանջների կոնկրետացումն է մարդկային հարաբերությունների որոշակիացման և կանոնակարգման միջոցով:

**Մարդկային օրենքը** դրական օրենք է՝ օժտված հարկադրական ուժով: Առաջինի մարդիկ դրական օրենքի կարիք չունեն, նրանց համար բավական է բնական օրենքը: Դրական օրենքն անհրաժեշտ է՝ սանձելու և պատժի վախով հարկադրելու արատավոր և խրատներին չենթարկվող մարդկանց՝ նրանց մեջ բնածին բարոյականության տարրերի ակտուալացման և զարգացման նպատակով: Դարձադրանքը ո՞չ միայն և ո՞չ այնքան պատժի ձև է, որքան մարդկանց դաստիարակության, նրանց մեջ բանականորեն (ազատ կամքին հաճապատասխան) գործելու ստվորության զարգացման անհրաժեշտ միջոց: Դրական օրենքը սոսկ այն իրավական նորմերն են, որոնք համապատասխանում են բնական օրենքի սկզբունքներին: Ենթելով դրանց՝ **Արքիմացին** տարբերում է արդար և անարդար դրական օրենքը: Մարդկային օրենքի՝ բնականին, իսկ դրա միջոցով նաև հավերժական օրենքին համապատասխանության սկզբունքը ներառում է նաև բարոյական սկիզբ:

Մարդկային օրենքի կոչումը մարդկանց համընդհանուր բարօրության ապահովումն է, որը և՝ օրինաստեղծնան ելակետն է, և մարդկային հարաբերությունները կարգավորելու ու կանոնակարգելու նպատակը: Ըստ որում, դրական օրենքը պետք է նկատի ունենա իրական մարդկանց՝ բոլոր թերություններով ու թուլություններով հանդերձ և բովանդակի միայն այնպիսի պահանջներ, որոնք հասանելի են մարդկանց մեծամասնությանը: Դրանով է բացատր-

վում (և ապահովվում) օրենքի պահանջների միատեսակությունը բոլոր մարդկանց հանդեպ, դրա հանդիպանությունը: Սա, իր հերթին, ենթադրում է բոլոր մարդկանց ձևական հավասարություն օրենքի առջև:

Բացի այդ, դրական օրենքը պետք է հաստատվի միայն իրավազոր մարդնի կողմից և պարտադիր կարգով հրապարակվի: Տակարակ դեպքում՝ ընթացակարգային նշված պահանջները խախտելու դեպքում այն կլինի անարդար օրենք, հետևաբար՝ կատարման համար ոչ պարտադիր:

**Աստվածային օրենքը** աստվածային Հայտնության մեջ՝ Աստվածաշնչում մարդկանց տրված օրենքն է: Այն լրացմում է մարդկային իրավական նորմերի անկատարությունը: **Առաջին՝** աստվածային օրենքը մատնաշնչում է մարդկային կեցության գերագույն նպատակները, որոնք հասանելի չեն մարդուն: **Երկրորդ՝** այն բարձրագույն չափանիշն ու կողմնորոշիչն է մարդկային օրենքների վերաբերյալ վեճերում: **Երրորդ՝** այն ուղղողություն է հոգու շարժումները, որոնք դուրս են մարդու լոկ արտաքին գործողությունները կարգավորող մարդկային օրենքի ազդեցության ոլորտից: **Չորրորդ՝** ծառայում է մարդու մեջ և մարդկային հարաբերություններում չարի ու մեղսավորի արմատախիլ անելուն, որոնք նույնպես ենթակա չեն մարդկային օրենքին:

Այսպիսով, հավերժական օրենքը արարչագրության օրենքն է, բնական՝ արարված աշխարհի գոյության օրինաչափությունները, որոնք արտացոլում են արարչագրության հանընդիհանուր օրենքը: Ենթևաբար՝ բնական օրենքը մարդու բանական գործունեության արդյունք չէ: Բնական օրենքը բանական է, բայց դրա բանական լինելը այլ աստվածային կարգի է, քանզի արտացոլում է հավերժական օրենքը, որը նույնական է աստվածային բանականությանը:

**Աքվիմացու** ուսմունքում իրավունք հասկացությունը սերտորեն առնչվում է «արդարություն» հասկացությանը: Իրավունքը նա սահմանում է որպես արդարության գործողություն մարդկային հաճակեցության աստվածային կարգում: Ըստ որում, արդարությունը (justitia) բարոյագիտական կատեգորիա է, որն արտահայտում է մարդու վերաբերմունքը ոչ թե իր, այլ ուրիշների նկատմամբ և դրսնորվում իրեն հասուցում յուրաքանչյուրին՝ ըստ պատ-

## ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ

շամի: Նա ընդունում է նաև արդարության երկու՝ հավասարեցնող և բաշխող ծեփ մասին Արիստոտելի հայեցակարգը: «Դրան համապատասխան՝ իրավունքը (ըմբռնված նաև իրեն բարեպաշտ և արդար) Աքվինացին բնութագրում է որպես որոշակի գործողություն՝ հավասարեցված այլ մարդու նկատմամբ, հավասարեցման որոշակի եղանակով: Իրերի բնության համաձայն հավասարեցման դեպքում՝ խոսքը բնական իրավունքի մասին է (յս ուսուցածությունը), մարդկային կանոնը հաստատվածի համաձայն հավասարեցման դեպքում՝ քաղաքացիական, դրական իրավունքի (յս սույն մասին):»

Աքվինացու հայացքները իրավունքի և արդարության, արդար և ոչ արդար օրենքների վերաբերյալ եական նշանակություն ունեցան ոչ միայն իր դարաշրջանի, այլև հետագա երկար ու ձիգ դարերի համաշխարհային իրավական մտքի զարգացման խնդրում:

Ի տարբերություն Թոմաս Աքվինացու, իրավունքի և արդարության մասին Մարսիլիոս Պադուանցու հայցքները կրում էին խիստ ընդգծված աշխարհիկ բնույթ: Այս իմաստով Մարսիլիոսը խստորեն տարանքատում է աստվածաբանությունն ու փիլիսոփայությունը: Այն, ինչ տրված է աստվածային հայտնությամբ, հնարավոր չէ ապացուցել բանական փաստարկներով: Փիլիսոփայական դիրքորոշմանը՝ նա հակված է «ճշմարտության երկակիության» տեսությանը:

Պետության վերջնական նպատակը քաղաքացիների համար «արդարացի և լավ կյանքի» ապահովումն է: Բայց այս նպատակին ծգոտում են բոլոր կենդանի եակները՝ և մարդիկ, և կենդանիները: Բայց մարդու համար այդ նպատակը երկակի է՝ ժամանակավոր (ինչպեսև կենդանիների մոտ) և հավերժական (որը բացակայում է կենդանիների մոտ): Էնակիրկ պետության ներկա, կոնկրետ նպատակը առաջինն է՝ մարդկանց կյանքի, հասարակական հարաբերությունների կարգավորումը, մարդկային կարիքների ու պահանջնունքների բավարարումը: Մարդկային պահանջնունքների բազմազանությունը պայմանավորում է աշխատանքի և պաշտոնների բաժանման անհրաժեշտությունը, որոնցից կազմավորվում են պետության համապատասխան

մասերը: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր նպատակը և կոչումը:

Մարսիլիոս Պադուանցու իրավունքի տեսությունը հիմնաված է արդարության գաղափարի վրա: Այս իմաստով նա իրավունքն ընկալում է որպես՝ ա) ուսմունք օրինաչափի կամ անօրինաչափի մասին, բ) իրահանգ՝ ուղեկցված հարկադրանքով պարզեցի կամ պատժի միջոցով: Նա հստակ սահմանազատում է իրավական և բարոյական օրենքները: Իրավական իմաստով՝ օրենքի գիշավոր նպատակը արդարությունն ու ընդհանուր բարօրությունն են: Այս առումով՝ իշխանության ամրությունն ու կայունությունը երկրորդական նշանակություն ունեն, քանզի օրենքը, իշխանությունը զապելով կանայականությունից, տգիտությունից, հակաօրինական գործողություններից, դրանով իսկ անրապես է այն: Ուստի՝ ցանկացած իշխանություն պետք է իրականացվի լոկ օրենքի հիման վրա:

Այդպիսով՝ մարդկային օրենքները, ըստ Մարսիլիուսի, մարդկային վարքը կարգավորող «կանոններ» (իրաման, արգելք, թույլտվություն) են՝ օժտված հարկադրանքով ուժով: Յենց հարկադրանքի (սանկցիայի) մեջ է նա տեսնում իշխանության օրենք՝ հարկադրանքների էռլյունը: Ընդ որում, օրենքները հիմնվում են ոչ թե բանականության, այլ առաջին հերթին՝ օրենսդրի կամքի վրա: Օրենքներով նախատեսված պատիժը պետք է լինի կոնկրետ և անհատականացված: Մարդկային իրավունքը կոչված է, մի կողմից, կարգավորելու հարաբերությունները պետության մեջ, մյուս կողմից՝ իշխանությունը զերծ պահելու կանայականությունից, այսինքն՝ հսկելու կառավարողի կողմից իշխանության իրականացումը իրավունքի և օրենքի հիման վրա:

Ըստ Մարսիլիուսի՝ դրական իրավունքի նորմերը արդարության գերագույն սկզբունքի կոնկրետացումն են: Մարդկային իրավունքի նպատակն է՝ օժանդակել մարդուն հասելու լավ կյանքի երկիր վրա, իսկ աստվածային իրավունքինը՝ հավերժական փրկությունը անդրանցական կյանքում:

Մարսիլիոս Պադուանցու հայացքները իրավունքի և արդարության մասին եական ազդեցություն են ունեցել Վերածննդի և Ռեֆորմացիայի դարաշրջանի իրավաքաղաքական գաղափարների զարգացման վրա:

# ՎԱՆԴԱԼԻԶՄ.

## ՄԵՍԱԿՆԵՐԸ, ՉԱՐԺԱԹԻԹՆԵՐԸ, ԱՇԽԱՆՁԱՊՈՒՄԸ ԱՅԼ ԻԱՆԳԱԼԱԳՄԵՐԻԾ

Զարուիի թվաշաբաթ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Հասարակական գիտակցության մեջ վանդալիզմը իրենից ներկայացնում է անիմաստ, անդրդապատճառ, աննպատակ վարք: Վանդալիզմի ի հայտ գալու մասին առաջին անգամ տեղեկատվությունն հրատարակելու պահից սկսած՝ այն դարձավ տեսարանների ուսումնասիրնան առարկան:<sup>1</sup> Այս հոդվածում կանդրադառնանք վանդալիզմը ուսումնասիրած երկու տեսարանների եզրահանգումներին:

Ուսումնասիրները Ս.Կոենի կողմից առաջարկվող վանդալիզմի գիտական դասակարգումը: Կախված ավերման գերակա դրդապատճառից՝ նա առանձնացնում է վանդալիզմի վեց տիպ՝

**1. Վանդալիզմը որպես ձեռքբերման միջոց:** Ավերման հիմնական դրդապատճառը նյութական օգուտ ստանալու է: Վանդալիզմի այս ձևը հանդիսանում է գողության տեսակ: Արհասարակ, վանդալիզմի ժամանակ օգալի վնաս է հասցվում մետաղից, հատկապես գունավոր մետաղներից պատրաստված առարկաներին, սարքավորումներին: Այս տեսակը տարածված է գերեզմանոցներում, երբ գործանում են այնտեղի ծաղիկները, պահպանը, ոսկե և պղնձայ գրույրունները ծաղերի և այլն:

**2. Գաղափարախոսական վանդալիզմ:** Այս տեսակը նման է նախորդին և դրանք հաճախ չփոխում են: Գաղափարախոսական վանդալիզմի մասին խոսում են այն ժամանակ, երբ ավերողը սոցիալական կամ քաղաքական նպատակ է հետապնդում: Ավերման օբյեկտը վառ արտահայտված սիմվոլիկ իմաստ է ունենում: Սոցիալական հեղափոխությունները և համարետները հաճախ մեծացնում են վանդալիզմի այս տեսակի դրսորումների թիվը: Ֆրանսիական Մեծ հեղափոխության ժամանակ հուշարձանների ավերումը կրում էր հակակարուիկան, հակաֆեոդալական, հակամիապետական բնույթը: Յենց այս խորհրդանշ-

ներն էին ոչնչացվում ավելի հաճախ: Յենց այսպես է ավիրվել Բաստիլը՝ թագավորական արդարադատության խորհրդանշը: Մեն-Դենի թագավորական գերեզմանոցում երեք օրվա ընթացքում ոչնչացվել են 51 հուշարձաններ: 1789-1800թթ.-ին Ֆրանսիայում ոչնչացվեցին արվեստի և ճարտարապետության 168 հուշարձաններ:

**3. Վանդալիզմը որպես վրեժխնդրության միջոց:** Ավերումը տեղի է ունենում վիրավորանքին ի պատասխան: Այս տեսակի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ գույքի ավերումը իրենից ներկայացնում է հետաձգված պատասխան մյուս կողմից գործողություններին, և սպառաբար լինում է անանուն: Վիրավորանքը կարող է լինել մտացածին, իսկ ավերման օբյեկտը կարող է անուղղակի կամ սիմվոլիկ կապ ունենա թշնամանքի աղբյուրի հետ: Բացի դրանից, վրեժխնդրության օբյեկտը ոչ միշտ է հասանելի: Որոշ ուսումնասիրողներ վանդալիզմի բոլոր տեսակները դիտում են որպես վրեժ, այսինքն՝ պատասխան ագրեսիա:

**4. Վանդալիզմը որպես խաղ:** Այս տարածված տարատեսակը, այսպես կոչված, երեխայական և դեռահասական վանդալիզմն է: Ավերումը դիտվում է որպես հասակակից խնդիր մոտ ավերողի հեղինակությունը բարձրացնելու հնարավորություն՝ ցուցադրելով ուժը, ճարպկությունը, քաջությունը: Այսպիսի ժամանցը հաճախ մրցման նման է լինում:

<sup>1</sup> Տես Սկորոհովա, ՎԱՆԴԱԼԻԶՄ:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

**5. Թշնամական վանդալիզմ:** Այս իրենից ներկայացնում է ակտ, որը առաջանում է թշնամանքից, նախանձից, չարությունից հաճույք ստանալուց: Այս դեպքում օբյեկտը այդքան ուրույն չէ, ինչպես վլեժնողի վանդալիզմի ժամանակ: Օրինակ, 1977 թ.-ին հանգավոր ծծմբական թրու ցողեց թանգարանում գտնվող կտավների վրա, որոնց մեջ էին նաև դասական նկարչության ստեղծագործությունները: Իր արարքը նա բացարձեց հետևյալ կերպ: «Ինձ պետք էր ոչնչացնել այն, ինչ թանկ է մնացածի համար».<sup>2</sup>

Վանդալիզմի դրդապատճառների հաջորդ դասակարգումը տվել է **Դ. Կանտերը:** Բացի վերը նշված վլեժի և ձեռքբերման դրդապատճառներից, **Կանտերը** առանձնացնում է նաև հետևյալ պատճառները:

■ **Զայրույթ.** ավերման գործողությունները բացատրվում են բարկության զգացումի, ինչ-որ բանի հասնելու անկարողության և ստրեսից դուրս գալու զգացումով:

■ **Զանձրույթ.** դեռահասների վանդալիզմի պատճառը հանդիսանում է զվարճանալու ցանկությունը: «Պարզ ասած, ձանձրույթը դրդապատճառ չի հանդիսանում: Ինչպես նկատում են որոշ ուսումնասիրողներ, ձանձրույթի վիճակը հոգեբանական ֆոն է հանդիսանում դեռահասների իրավախախտումների, այդ թվում նաև վանդալիզմի համար: Դրդապատճառ է հանդիսանում նոր տպավորությունների, սուր զգացողությունների որոնումը, որոնք կապված են արգելվերի և վտանգների հետ: Նման վարքի ձևավորման մեջ կարևոր դեր են խաղում ենթամշակույթային սեռական դերակատարման ստերեոտիփերը:

■ **Հետազոտություն.** Այս դեպքում ավերման նպատակը ճանաչումն է: Մեծամասնամբ երեխաների կողմից կատարվող ավերումների պատճառը լինում է նրանց հետաքրքրասիրությունը, ցանկությունը հասկանալու՝ ինչպես է աշխատում մեխանիզմը: Դա վերաբերվում է ոչ միայն ֆիզիկական օբյեկտներին, այլ նաև սոցիալականներին: Ավերումը հանդիսանում է այն հանգամանքը պարզելու միջոց, թե որքան հեռու կարող է գնալ հանցավորը, որքան ուժեղ են հասարակական նորմերը և մեծերի հեղինակությունը:

■ **Էսթետիկական ապրումներ.** Ավերման ֆիզիկական պրոցեսին հետևելը, որոնք ուղեկցվում են ձայներով, հաճելի են թվում:

■ **Էքստենզիալ հետազոտություններ.** Բացատրելով այս դրդապատճառը՝ **Կանտերը** պարզաբանում է, որ վանդալիզմը կարող է հանդես գալ որպես ինքնահաստատման, հասարակության վրա սեփական հնարավորությունների ազդեցության հետազոտման միջոց: Վանդալիզմի այս տիպի ամենահին օրինակներից է **Յերոստրատի** արարքը, որը այրեց տաճարը՝ սեփական փառքի համար: Ինչպես նշում են «վանդալիզմը՝ որպես արվեստ» ուսումնասիրողները, ուշադրության գրավման այս ձևը հաճախ դրդապատճառ է հանդիսանում մեջ հշչակալվելուց, այլ, ընդհակառակը, փորձում են այնպես անել, որ իրենց արարքը դառնա հասարական իրադարձություն: Վերջերս Ուսումնատում նկարիչ **Ա. Բրեները** դրարքի նշան է նկարել թանգարանում գտնվող **Մալեվիչի** աշխարհահռչակ «Սուպրիմատիզմը 1921-1927թթ-ին» նկարի վրա: Իր արարքը նա բացատրել է հետևյալ կերպ: «Ես մշակութային ահարեկիչ եմ: Ցանկանում եմ բոլորի ուշադրությունը հրավիրել ամբողջ աշխարհի նկարիչների վիճակի վրա և, հատկապես, իմ»:<sup>3</sup>

**Ա. Սեմաշկոն** առաջարկում է վանդալիզմի հետևյալ տեսակները:

1. **Էկոլոգիական վանդալիզմ.** սրան են վերաբերվում ծաների կեղևների, ժայռերի վրա արված գրագրությունները, որոնց արդյունքում վնաս է հասցվում շրջակա միջավայրին:

2. **Գաղափարախոսական վանդալիզմ** (տերմինը առաջին անգամ օգտագործվել է **Կունի Կողմից**): Վանդալիզմի ամենավտանգավոր տեսակներից մեկը: Այս դեպքում է արտահայտվում, օրինակ, պեսության ներքին քաղաքականությունը տարբեր, ավելի հաճախ ոչ պետական կառուցների նկատմամբ (օրինակ՝ Եկեղեցիների ավերումը՝ պարային հրապարակ կառուցելու համար):

3. **Վանդալիզմը որպես վլեժնոդրու-**

<sup>2</sup> Տե՛ս Վանդալիզմ - քայլությունը, պատճենը, գործությունը և պահպանը / Խ. Շիրոկով / Խ. Մոսկվա 2003թ. էջ 5:

<sup>3</sup> Տե՛ս Սկորոխոդova, ՎԱՆԴԱԼԻԶՄ:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

**թյան միջոց** (տերմինը առաջին անգամ օգտագործվել է **Կունիի** կողմից)։ Վերաբերվում է այն իրավիճակներին, երբ առարկաների ավերումը հանդիսանում է վրեժինողության միջոց այլ անձից։

**4. Երաժշտական և սպորտային երկրպագուների վանդալիզմ**։ այս տեսակի օրինակներ կարող են լինել համերգային սրահներում պատերը կեղտոտելը, պատուհանները ջարդելը, մարզադաշտերում նստարանները կոտրելը։

**5. Վանդալիզմ, որն ուղղված է ճարտարապետության փոքր կառույցներին**։ Դրանցից են ավտոբուսների կոտրված կանգառները, փողոցային լամպերը և այլն։ **Սեմաշկոի** կարծիքով, այս տեսակի վանդալիզմը դեռահասների միջյանց հետ մրցելու արդյունք է։

**6. Պատմության և մշակույթի հուշարձանների ավերումը**։

**7. Դիակը անարգանքի ենթարկելը<sup>4</sup>**

Զելինսկին առանձնացնում է վանդալիզմի վեց տեսակ։

**ա/ Կենցաղային վանդալիզմ**. վերջինս առաջանում է տներում, տոնավաճառներում՝ ընտանեկան կամ այլ կոնֆլիկտների արդյունքում։

**բ/ Կոնֆլիկտային վանդալիզմ**. սա հատկապես սկսում են այն մարդիկ, որոնք ցանկանում են ուշադրություն գրավել։ Նրանք ցուցադրում են լիսի վարք՝ ոտնահարելով բարոյականության և քաղաքավարության նորմերը։ Դրանց շարքին են դասկում սրբավայրերի պղծումը, հուշարձանների պատվանդանների վրա անպարկեցող գրագրություններ անելը, գերեզմանները քանդելը և այլն։

**գ/ «Քրեական» վանդալիզմ** (անվանումը պայմանական է)։ Խոսքը այլ հանցավոր գործունեության ժամանակ սեփականության ոչնչացման և վնասման մասին է, հաճախ շահադիտական, կամ դրանց հետքերը թաքցնելու և ապացույցները վերացնելու համար։

**դ/ Գաղափարախոսական վանդալիզմ**. այն առաջանում է երիկական, ռասսայական, քաղաքական հողի վրա։ Դրա օրինակներն են հրեաների և այլ ազգերի գերեզմանոցների ավերումը, խորհրդային բանակի նահացած գինվորների հուշարձանների, խաչքարերի վնասումը և այլն։

**ե/ Ահարենչական վանդալիզմ**։ Այն իրականացվում է նույն դրդապատճառով, ինչ գաղափարախոսականը, բայց զուգորդվում է ահարենչական ակտերով և վտանգ է ներկայացնում շատ մարդկանց համար։ Խոսքը գնում է հասարակական վայրերում պայթյունների, շենքերի հրդեհումների և այլնի մասին։

**զ/ Պետական-աստիճանավորների վանդալիզմ**։ Այն իրենից ներկայացնում է ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ իշխանության գլուխ կանգնած օլիգարխների կողմից իշխանության չարաշահման յուրահատուկ տեսակ։ Տեղի են ունենում եկեղեցների և այլ մշակութային կառույցների ամնախաղեա զանգվածային ավերումներ։<sup>5</sup>

Ավելացնենք, որ վանդալիզմի այս բոլոր տեսակներին միավորում է այն, որ դրանք բոլորն են նյութական և հոգեբանական վնաս են հասցնում հասարակությանը։

Սակայն անհրաժեշտ է վանդալիզմը սահմանագատել հարակից հանցակազմերից։ Նախ անդրադառնություն պատմության և մշակույթի հուշարձանները ոչնչացնելուն կամ վնասելուն։ Այսպես ՀՍՍՌ ՁՕ-ի 243 հոդվածը սահմանում էր՝ պետության կողմից պահպանվող բնության օբյեկտները կամ հուշարձանները դիտավորությամբ վնասելը կամ ոչնչացնելը՝ պատճվում է ազատազրկմանը մինչև երկու տարի ժամանակով, կամ ուղղիչ աշխատանքներով մինչև մեկ տարի ժամանակով, կամ տուգանքով մինչև մեկ հարյուր ռուբլի։

ՀՀ 2003թ ապրիլի 18-ին ընդունված ՁՕ-ի հոդված 264-ը սահմանում է՝ պետության պահպանության տակ գտնվող պատմության, մշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները կամ փաստաթղթերը ոչնչացնելը կամ վնասելը՝ պատճվում է տուգանքով՝ նվազգույնը աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսից աշխատանքներով։

**2.** Նոյն արարքները, որոնք կատարվել են առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների նկատմամբ՝ պատժ-

<sup>4</sup> Տե՛ս Ա. Սեմաշկո Վանդալիզմ - դեֆինիցիա, էտիոլոգիա, պредупրեյժմեն - В книге: Wandalizm:

<sup>5</sup> Տե՛ս Զелинский А. Ф. Криминальная психология. Киев, 1999, էջ 191-192:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

Վում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկման՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

**3.** Սույն հոդվածի առաջին մասում նշված արարքները, որոնք կատարվել են անգուշտությամբ և պատճառել են խոշոր վնաս՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկման՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

**4.** Սույն հոդվածի երրորդ մասում նշված արարքները, որոնք կատարվել են առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների նկատմամբ կամ պատճառել են առանձնապես խոշոր վնաս՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկման՝ առավելագույնը երկու տարի ժամկետով։ Հետագայում պատժամիջոցների շարքից հանվեցին ուղղիչ աշխատանքները:<sup>6</sup>

ՀՀ քր. օր.-ի **հոդված 264-ի** առաջին մասը պատասխանատվություն է սահմանում պետության պահպանության տակ գտնվող պատժության, նշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները կամ փաստաթղթերը ոչնչացնելու կամ վնասելու համար։

Այս հոդվածի նպատակը քրեակրավակամ միջոցներով թայսատամի թանրապետության ազգային արժեքների պաշտպանությունն է:

Թանցագործության առարկա են հանդիսանում պետության պահպանության տակ գտնվող պատժության, նշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները կամ փաստաթղթերը ոչնչացնելու կամ վնասելու համար։

Պատմության և մշակույթի հուշարձանները ազգի սոցիալական հիշողության, հասարակական բարոյականության, ազգային գարգաման և հնանագիտակցության համար առանձնակի նշանակություն ունեցող կառույցներն են, շինուազները, հիշարժան վայրերը, արվեստի և գրականության գործերը։

Պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաներ կամ փաստաթղթեր են համարվում պատմական իրադարձությունների, գիտության և տեխնիկայի պատմության, նշանավոր անձանց կյանքի և գործունեության հետ կապված տեղեկությունների կրիչները, հնէաբանական հետազոտությունների արդյունքում ձեռք բերված և պատմական կամ մշակութային արժեք ներկայացնող առարկաները, ինն ձեռագրերը, գրեթերը, արխիվային նյութերը, ճարտարապետական, պատմական արժեք ներկայացնող շինուազները, դրանց առանձին մասերը և պետության պահպանության տակ առնված այլ պատմական կամ կամ մշակութային նշանակություն ունեցող առարկաներն ու փաստաթղթերը։

Յանցագործության օբյեկտիվ կողմը դրսենություն է նշված առարկաների կամ փաստաթղթերի ոչնչացման կամ վնասման մեջ։ Յանցագործությունն ավարտված է համարվում հոդվածում նշված առարկաները կամ փաստաթղթերը ոչնչացնելու կամ վնասելու պահից։ Յանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ։

Յանցագործության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը։ Եթե հոդվածում նշված առարկաների ոչնչացումը կամ վնասումը իրականացվում է 14 տարին լրացած անձի կողմից, ապա, արարգում համապատասխան հատկանիշների առկայության դեպքում նա պատասխանատվության կարող է ենթարկվել քր. օր.-ի **հոդված 185-ի** (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) երկրորդ կամ երրորդ մասով։ Քր. օր.-ի **հոդված 264-ի** երկրորդ մասը պատասխանատվություն է սահմանում առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների ոչնչացման կամ վնասման համար։

«Առարկաներ» և «օբյեկտներ» հասկացությունները այստեղ նույնական են և

<sup>6</sup> Տես ՀՀ քրեական օրենսգիրը, Երևան 18.04.03թ. էջ 120։

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

չեն կարող տարբեր բովանդակություն ունենալ: Թվում է, որ օրենսդիրը նկատի է ունեցել հատուկ արժեք ունեցող օրյեկտները կամ հուշարձանները: Այդպիսին են համարվում պատճական և մշակութային այն օրյեկտներն ու հուշարձանները, որոնք համահայկական, համագոյային նշանակություն ունեն (Գարնու, Գեղարդի, Զվարթնոցի տաճարները, Էջմիածին եկեղեցին և. այլն):

Հոդվածի երրորդ մասում պատասխանատվություն է սահմանված հոդվածի առաջին մասում նախատեսված արարքներն անզգուշությամբ կատարելու համար, որը խոշոր վնաս է պատճառել: Խոշոր վնասի չափը այստեղ պետք է նույնացվի գույքը դիտավորությամբ վնասելու կամ ոչնչացնելու հանցակազմում նախատեսված զգալի չափի հետ, որովհետև քննարկվող հանցագործության հանրային վտանգավորությունն ավելի մեծ է և ստվորական գույքը անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար նախատեսված խոշոր չափը այս դեպքում չի կարող արտահայտել քննարկվող հանցագործության վտանգավորության իրական աստիճանը:

Թր. օր.-ի **հոդված 264-ի** չորրորդ մասում նախատեսված է հոդվածի երրորդ մասում նախատեսված հանցակազմի ծանրացնող հանգամանքը, եթե կատարվել է առանձնակի արժեք ունեցող օրյեկտների կամ հուշարձանների նկատմամբ կամ պատճառել է առանձնապես խոշոր վնաս: Առանձնապես խոշոր վնասի չափն այս դեպքում պետք է նույնացվի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմի ծանրացնող հանգամանք հանդիսացող խոշոր վնասի չափին (նվազագույն աշխատավարձի հնգապատճելք):<sup>7</sup>

Այս հոդվածը նույնապես պարունակում է «ոչնչացնել» և «վնասել» հասկացությունները, ինչը 264 հոդ.-ը նմանեցնում է **260 հոդ.-ին**: Այս հոդվածի առարկաները նույնը չեն, բայց միաժամանակ պետք է նշել, որ վանդալիզմի հոդվածում նշված «հասարակական վայրեր» հասկացությունը երկատանքի տեղիք է տալիս: Չէ՞ որ պատմության և մշակույթի հուշարձանները համարյա միշտ գտնվում են այդպիսի վայրերում:

Բոլորովին վերջերս հասարակությունը

տեղեկացավ նախիքանում աղբեքանցիների կողմից տեղի ունեցած հայկական պատմական հուշարձանների ոչնչացման մասին: Հասարակությունը այն որակեց որպես վանդալիզմ, այլ ոչ թե պատճության և մշակույթի հուշարձանները ոչնչացնել կամ վնասել, այն պարզ պատճառով, որ այդ հուշարձանները պետության հսկողության տակ չեն գտնվել:

Անդրադառնալով խուլիգանությանը պետք է փաստել, որ հասարակության զարգացման տվյալ փուլում պետությունը ընդունում է մարդու արժանապատվությունը, նրա իրավունքները և ազատությունները որպես բարձրագույն արժեքները: Անձի իրավունքների առաջնայնությունը մարդկանց միջև բարյացկամ վերաբերնունքի, աճող սերմնի հանդեպ հոգատար վերաբերմունքի, ազգի առողջության պահպանման պայմանների ծևավորման անհրաժեշտություն է ստեղծում: Այդ ամենը իր հերթին նախատեսում է հասարակական վարքի կանոնների և անվտանգության պահպանում:<sup>8</sup>

Խուլիգանները «քունավորում են» օրինապահ քաղաքացիների կյանքը, խանգարում են նրանց նորմալ աշխատանքը և հանգստությունը, խախտում են մարդու կարևորագույն իրավունքները և ազատությունները: Խուլիգանության վտանքը բաքնված է նրա արտահայտման բազմազանության մեջ, և շատ հաճախ խուլիգանությունը դառնում է ելակետային՝ հետագայում ավելի ծանր հանցագործություններ կատարելու համար: Խուլիգանությունը, ինչպես և շատ ուրիշ հակահասարակական երևույթներ, ժամանակի ընթացքում ենթարկվում է փոփոխությունների:

2003 թ-ի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ ՔՕ-ն **258 հոդվածում** խուլիգանությունը բնորոշել էր հետևյալ կերպ՝ **խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը**, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով և գուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով:

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք Հատուկ մաս Ա. Գարուզյան, Ս. Առաքելյան, Յ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան, Վ. Քոչարյան, Երևան 2007թ., էջ 645:

<sup>8</sup> Տե՛ս [www.lawlibrary.ru/poisk.php](http://www.lawlibrary.ru/poisk.php) nazvanie:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

Իսկ 2005թ.-ի դեկտեմբերի 16-ին այս հովածը ձևակերպվեց հետևյալ կերպ՝ **խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝**

Նույն արարքը, որը գուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով նախատեսվեց որպես **ժամանակագիր հանգամանը:**

Խուլիգանության ամենաբռնորոշ հատկանիշն այն է, որ այն հասարակության համար վտանգավոր կամ ինչպես ասում են, հանրութեն վտանգավոր արարք է:

Հիմնական անմիջական օբյեկտը հասարակական կարգն է: Լրացրած օբյեկտ են հանդիսանում անձի անձեռնմխելիությունը, պատիվն ու արժանապատվությունը, առողջությունը, քաղաքացիների և կազմակերպությունների գույքային շահերը:

Հանցակազմի օբյեկտիկ կողմը դրսորվում է հասարակական կարգի կոպիտ խախտում և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը:

Խուլիգանության հանցակազմի եռթյունը բացահայտելու համար անհրաժեշտ է բացահայտել հասարակական կարգի կոպիտ խախտում և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը հասկացությունների բովանդակությունը:

Հասարակական կարգի կոպիտ խախտում պետք է համարել այնպիսի գործողությունները, որոնք սպառնալիք են ստեղծում կազմակերպությունների, հիմնարկների նորմալ գործունեության, անձի առողջության, քարոյականության համար, ինչպես նաև քաղաքացիների մեջ տագնապ են առաջացնում իրենց իրավունքների ու շահերի պաշտպանության կապակցությամբ: Հասարակական կարգի կոպիտ խախտումը դրսորվում է մարդուն վիրավորելով, հասարակության մեջ ընդունված բարոյական նորմերը ոտնահարելով: Հաճախ հասարակ խուլիգանության օբյեկտիկ կողմը հստակ սահմանազատվում է մյուս հանցագործությունների օբյեկտիկ կողմից: Օրինակ, հասարակ խուլիգանությունը կարող է դրսորվել գիշերային ժամերին բնակիչների անդորրը խախտելով և այլն:

Ծառ դեպքերում խուլիգանական գործո-

ղությունները արտաքրնապես նմանվում են այլ հանցագործությունների ժամանակ կատարվող գործողություններին՝ վիրավորանք, գլուխ ոչնչացում կամ վնասում, անձի նկատմամբ բռնություն, սպառնալիք: Դրա համար էլ անչափ կարևոր է խուլիգանության հանցակազմի մյուս հատկանիշի՝ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը դրսորվում է նրանում, որ հանցավորը իր և հասարակության անդամների համար ակնհայտորեն խախտում է վարքագիրի համընդիմանուր ճանաչում ստացած նորմերը, բացահայտորեն ցույց է տալիս իր արհամարիական վերաբերմունքը հասարակության, դրանուն ընդունված բարոյական և իրավական նորմերի նկատմամբ: Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը արտահայտվում է նաև նրանով, որ խուլիգանությունը հրապարակյանորեն է կատարվում: Դարկ է նշել, սակայն, որ խուլիգանական գործողությունների հրապարակային բնույթը չի նշանակում, թե խուլիգանությունը պետք է անպայման հասարակական վայրերում կատարվի և անպայման հասարակության անդամների ներկայությամբ: Խուլիգանությունների կատարումը այլ մարդկանց բացակայության պայմաններում: Նման դեպքերում, սակայն, անհրաժեշտ է, որ կատարված խուլիգանական գործողությունների փաստը վար թե ուշ հայտնի դարձնա հասարակությանը: Այսինքն՝ ակատեների ներկայությունը խուլիգանության պարտադիր հատկանիշ չէ:

Հասարակ խուլիգանության հանցակազմը ձևական է, հանցագործությունն ավարտված է համարվում հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող գործողությունները կատարելու պահից:

ՀՀ ք. օր.-ի **հոդված 258-ի** երկրորդ մասը խուլիգանության կատարումը՝ գուգորդված անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, նախատեսում է որպես խուլիգանության ժամանակող հանգամանը:

Անձի նկատմամբ բռնության գործադրումը դրսորվում է հարվածելով, ծեծով, առող-

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

ջուրյանը վնաս հասցնելով։ Եթե անձի առողջությանը պատճառվում է ծանր վնաս, արարոր պետք է որակել հանցագործությունների համակցությամբ որպես խուլիգանություն և առողջությանը ծանր վնասի պատճառում (քր.օր.-ի **հոդված 258 և հոդված 112-ի** համապատասխան մաս)։ Խուլիգանական գործողությունների ընթացքում սպանությունը որակվում է որպես խուլիգանական դրդումներով սպանություն։ Անձի նկատմամբ բռնության գործադրման սպառնալիքը կարող է դրսնորվել ինչպես ծեծի կամ առողջությանը վնաս հասցնելու, այնպես էլ սպանության սպառնալիքի ձևով։<sup>9</sup>

Գույքը ոչնչացնել՝ նշանակում է գույքի վրա ներազելով այնպիսի վիճակի հասցնել, որ այն լիովին դառնում է անպետք և չի կարող ծառայել իր նպատակային նշանակությանը։ Գույքը կարող է ֆիզիկապես լիովին ոչնչանալ, օրինակ՝ այրվել, ջրի մեջ լուծվել և այլն, կամ մասնակիորեն ֆիզիկապես գոյություն ունենալ, բայց լիովին կորցնել իր որակական որոշակիությունն ու օգտակար հատկությունները։ Գույքի ոչնչացման առանձնահատկությունն այն է, որ ոչ մի միջոցով այլևս հնարավոր չի լինում վերականգնել նրա նախկին վիճակը և օգտագործել այն նպատակային նշանակությամբ (օրինակ վառելու փայտ դարձրած կահույքը, կտրված ծառը, սատկած կենդանին կամ ձուկը և այլն)։

Գույքը վնասել՝ նշանակում է գույքի հատկանիշների այնպիսի փոփոխություն, որի դեպքում գույքի վիճակը եականորեն վատրարանում է, դրա օգտակար հատկությունները կամ դրանց զգայի մասը կորսվում են, և գույքը լրիվ կամ մասնակի դառնում է անպետք՝ նպատակային կամ տնտեսական նշանակությամբ օգտագործելու համար։ Ի տարբերություն ոչնչացման՝ վնասման դեպքում որոշակի ծախսումներով հնարավոր է լինում վերականգնել գույքի որակական հատկանիշները, դրա հետ միասին՝ տնտեսական նշանակությունը։ Օրինակ՝ վերանորոգվում է վնասված ավտոմեքենան,

տեսանկարահանող սարքը, շարվում է քանդված պատը և այլն։<sup>10</sup>

Քննարկվող հանցակազմը նյութական-ձևական է. **բռնություն գործադրելով սպառնալիքով կամ բռնություն գործադրելով սպառնական դրդումներով սպանությունը ավարտված է համարվում նշված գործողությունները կատարելու պահից՝ անկախ հետևանքներից և պարտադիր չէ, որ բռնության հետևանքով անձին իրական վնաս պատճառվի, իսկ գույքը ոչնչացնելով կամ վնասելով զուգորդված խուլիգանությունը ավարտված է համարվում գույքը ոչնչացնելու կամ վնասելու պահից։**

Խուլիգանությունն այլ հանցագործություններից սահմանազատելու համար էական նշանակություն ունի հանցակազմի սուբյեկտիվ կողմը։ Խուլիգանության սուբյեկտիվ կողմը բռնութագրվում է դիտավորությամբ։ հանցավոր գիտակցում է, որ իր արարքները կոպիտ կերպով խախտում են հասարակական կարգը և որ դրանք բացահայտ անհարգալից վերաբերմունք են դրսնորուն հասարակության նկատմամբ և ցանկանում են կատարել այդ արարքները։ Ընդ որում, հասարակ խուլիգանությունը, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ բռնություն գործադրելով զուգորդված խուլիգանությունը կարող են կատարվել ուղղակի դիտավորությամբ, իսկ գույքը ոչնչացնելով կամ վնասելով զուգորդված խուլիգանությունը՝ ինչպես ուղղակի այնպես ել անուղղակի դիտավորությամբ։ Քանի որ խուլիգանության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսնորումը հասարակության նկատմամբ, ինչը խուլիգանության իմաստն է, ապա անձնական դրդումներով նույնիսկ հասարակական վայրերում ծեծկության ու վիճաբանաբարունը միշտ չէ, որ կարող են որակվել որպես խուլիգանություն։ Նման իրավիճակներում խուլիգանության հանցակազմը կարող է առկա լինել միայն այն դեպքերում, եթե նշված արարքները գուգորդվում են հասարակության նկատմամբ

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք. Դատուկ մաս Ա. Գաբրիելյան, Ս. Առաքելյան, Յ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Ա. Մարգարյան, Տ. Միմոնյան, Վ. Քոչարյան, Երևան 2007թ., էջ 624-625:

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք. Դատուկ մաս Ա. Գաբրիելյան, Ս. Առաքելյան, Յ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Ա. Մարգարյան, Տ. Միմոնյան, Վ. Քոչարյան, Երևան 2007թ., էջ 421:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

բացահայտ անհարգալից վերաբերմունքով։ Հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքը այդ դեպքերում կարող է դրսենորվել կատարվող արարժեների տևականությամբ և այլն։

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ խուլիզանության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է նաև յուրահատուկ շարժառիթով, որը օրենքում ձևակերպված է որպես խուլիզանական դրդում։ Ուստի այն կարծիքը, թե խուլիզանությունը առանց շարժառիթի կատարվող հանցագործություն է, չի արտացոլում իրականությունը։ Մարդկային արարժն առանց շարժառիթի չի կարող լինել։ Խուլիզանական շարժառիթները (դրդումները) մարդու իմմնարար պահանջմունքներից մեկի՝ ինքնահաստատման պահանջմունքի խեղաթյուրված դրսենորմն են, մարդու ներքին կոնֆլիկտների արտացոլումը։ Յուրաքանչյուր մարդ ունի ինքնահաստատվելու, շրջապատի կողմից ընդունվելու, իր գերազանցությունը ցույց տալու ցանկություն։

Ինչպես արդեն նշել ենք, որոշ դեպքում խուլիզանությունը կարող է կատարվել նաև առանց խուլիզանական շարժառիթների (դրդումների), եթե գրքողությունները սկսվում են անձնական դրդումներով (խանդիքի և այլն), սակայն հետագայում վեր են ածվում խուլիզանության։ Բայց նույնիսկ այդ դեպքերում հանցավորը ցուցադրում է իր արհամարհական վերաբերմունքը հասարակության նկատմամբ և ներքուստ պատրաստ է լինում նման վարքագիր։

Խուլիզանության նպատակը շատ և շատ հասարակ է՝ իրեն շրջապատող մարդկաց ցնցել հանդուգն, կոպիտ բռնությամբ, վախի զգացմունք առաջացնել և այդ ամենով նրանց, թեկուզ մի քանի վայրկանով ենթարկել սեփական կամքին։ Խուլիզանության սուբյեկտ կարող է լինել 14 տարին լրացած մեջսունակ ֆիզիկական անձը։

Խուլիզանությունը շատ նման է վանդալիզմին, ինչի պատճառով շատ հեղինակներ վանդալիզմը համարում են նկատմամբ և ներքուստ պատրաստ է լինում նման վարքագիր։

գանության ժամանակ հասարակական կարգի խախտումն իրականացվում է հասարակության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելով, նրանց պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, այն առարկաների ոչնչացմանը կամ վնասմանը, որոնք հանցավորի հանարակացի համար հասարակության խորհրդանշ են, և որի միջոցով հանցավորը ցանկանում է ցույց տալ իր բացահայտ անհարգալից վերաբերմունքը հասարակության նկատմամբ։<sup>11</sup> Եվ այս տեսակետից վանդալիզմը խուլիզանության յուրուինակ դրսենորմն է։ Վանդալիզմի, ինչպես և խուլիզանության նոտիվացիան, կապված է ֆրուստրացիայի և տեղակալման ագրեսիայի հոգեբանական երևույթների հետ։ Դրա համար էլ վանդալիզմը ինստրումենտալ ագրեսիայի տիպիկ օրինակ է։ Վանդալիզմի առավել վտանգավոր դրսենորմները նախատեսված են գործող քրեական օրենսգրքում։ Դրանց թվին են դասվում գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, հաղորդակցության ճանապարհները և տրանսպորտի միջոցները վնասելը, գույքի ոչնչացման կամ վնասման հետ գուգորդված զանգվածային անկարգությունները, խուլիզանությունը, գերեզմանը կամ հուշարձանը անարգանքի ենթարկելը, բնության օբյեկտները կամ պատմության և մշակույթի հուշարձանները ոչնչացնելը կամ վնասելը։<sup>12</sup>

ՀՀ ՔՕ 260 հոդվածը, մեր կարծիքով, իր մեջ ավելի լայն հասարակական հարաբերություններ է ներառում, որոնք, սակայն, հաճախ համընկնում են այլ հոդվածներում նախատեսված հասարակական հարաբերությունների հետ։

Այսպիսի համընկնումներից է նաև գույքը վնասելը կամ ոչնչացնելը։ Մենք նույնպես համամիտ ենք «ՀՀ Քրեական իրավունք» դասագրքի այն հեղինակների հետ, որոնք անհմաստ են գտնում վանդալիզմի հոդվածում նշված գույքի վնասումը առանձնացնել գույքի վնասման կամ ոչնչացման հետ գուգորդված խուլիզանությունից, այն էլ այն դեպքերում, եթե դրանց սահմանազատումը գրեթե անհնար է։

<sup>11</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք. Հատուկ մաս Ա. Գաբրիջյան, Ս. Ալաքեյյան, Յ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Ա. Մարգարյան, Տ. Միմոնյան, Վ. Քոչարյան, Երևան 2007թ., էջ 636։

<sup>12</sup> Տե՛ս Զелиնский А. Ф. Криминальная психология. Киев, 1999, с. 191։

# Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների իրավական արժեքը՝ ՀՀ Ներպետական իրավական համակարգում

Մարինե ԳՅՈՒՐՋՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

**Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետև՝ ՄիԵԴ) որոշումների համակողմանի ուսումնափրությունը բերում է այն համոզման, որ դրանք առանձնանում են մի շարք հատկանիշներով, որոնք ոչ միայն կանխորոշում են այդ դատական ակտերի իրավաբանական ուժն ու կատարման եղանակները, այլև կոնկրետ երկրի ներպետական իրավական համակարգում դրանց կիրառման ընթացակարգերն ու եղանակները: Ստորև մենք դեռ կանդրադառնանք կիրառման բովանդակությանն ու սահմաններին, իսկ մինչ այդ, համակարգված տեսքով ներկայացնենք նշված դատական ակտերի առանձնահատկությունները.**

1. ՄիԵԴ-ի վճիռները, որպես կանոն, ունեն նախադեպային բնույթ, այսինքն՝ կոնկրետ գործը լուծելիս ՄիԵԴ-ը հաճախ անհրաժեշտաբար և անխուսափելիորեն դիմում է Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների մասին 1950թ. Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետև՝ Եվրոպական կոնվենցիայի) դրույթների մեկնաբանությանը, որոնք ՄիԵԴ-ի վճիռներին հաղորդում են նորմատիվային բնույթ:

2. Թեպետ, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ճնշող մեծամասնությունը հարում է ռոմանագերմանական իրավական համակարգին, այդուհանդերձ, Ստրասբուրգի դատարանի վճիռներն իրենց բովանդակությամբ ավելի հաճահունչ են ընդհանուր իրավունքի համակարգին: Մասնավորապես, վճիռներում ՄիԵԴ-ը, որպես կանոն, հղումներ է կատարում միևնույն փաստական հանգամանքների ու իրավական իիմքերի առնչությամբ իր նախորդ որոշումներին: Եթե նախկինում ՄիԵԴ-ը որոշում է կայացրել քննվող գործին փաստական հանգամանքներով նմանվող այլ գործով և նոր որոշմանը այլ հետևությունների է հանգում, ապա բացահայտվում են գործերը միմյանցից տարբերող եական հատկանիշները:

Այսպիսով, ՄիԵԴ-ի որոշումները նախադեպային նշանակություն ունեն հետագայում

քննվող գործերի համար, թեև Եվրոպական կոնվենցիան ինքնին ՄիԵԴ-ին չի կաշկանդում իր նախորդ վճիռներով: Եվրոպական կոնվենցիան ՄիԵԴ-ին ընձեռել է ոչ միայն Եվրոպական կոնվենցիայի դրույթները կիրառելու, այլև դրանք մեկնաբանելու իրավասությամբ (Կոնվենցիայի 32-րդ հոդված): Այդպիսով, Եվրոպայի խորհրդի շրջանակներում Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման իրավասությամբ օժտված է բացառապես ՄիԵԴ-ը: Վճիռների ընդունման դեպքերում ՄիԵԴ-ի կողմից կիրավում են իր կողմից նախկինում կայացված դատական ակտերում արտօհայտված իրավական դիրքորոշումները: Նախքան Եվրոպական կոնվենցիայում տեղ գտած այս կամ այն դրույթը կիրառելը, ՄիԵԴ-ը մեկնաբանում է միջազգային իրավունքի համապատասխան նորմը, մասնավորապես՝ դրա իմաստը, ոգին և նորմատիվ բովանդակությունը:

Որոշ հեղինակներ, մերժելով ՄիԵԴ-ի նախադեպային իրավունքը որպես ներպետական իրավունքի աղբյուր ճանաչելը, միաժամանակ փորձում են այն ներկայացնել որպես յուրահատուկ «իրավական կարգավորիչ»: Միջազգային նորմերի, այդ թվում՝ ՄիԵԴ-ի պրակտիկայում ծևակորված իրավական նորմերի կիրառելիությունը թույլ է տալիս դրանք որակել որպես իրավական կարգավո-

## ՄԻՋԱՉՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

դիշներ, և ոչ որպես իրավունքի իմքնուրույն աղբյուր: Տեսական աղբյուրներում քննարկվում է նաև այն մոտեցումը, որ ներպետական իրավունքի աղբյուր դիտարկվող վճիռների շրջանակը սահմանափակվում է միայն տվյալ մասնակից պետության առնչությամբ կայացված վճիռներով<sup>1</sup>: Այլ կերպ ասած, այս դեպքում վիճարկվում է նշված վճիռների համընդիմությունը:

Կարծում ենք, ՄիԵԴ-ը Եվրոպական կոնվենցիային մասնակից պետությունների ստանձնած պարտավորությունների կատարումը երաշխավորելու նպատակով մշակում և ամրագրում է իրավական դիրքորոշումներ, որոնցում ձևավորված մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչներն ընդհանուր են բոլոր մասնակից պետությունների համար, ուստի ՄիԵԴ-ի այս կամ այն մասնակից պետության առնչությամբ կայացված վճռում արտահայտած իրավական դիրքորոշումը հավաքարավես, առանց երկակի չափորոշիչների, կիրառելի է ցանկացած այլ պետության առնչությամբ կայացվող վճռում: Այն, որ դեռևս նշված դատական ակտերի համընդիմությունը իրավական բնույթը վիճարկելի է և բազմաթիվ տեսաբաններ ու ներպետական կառույցներ փորձում են հիմնավորել այն մոտեցումը, ըստ որի դրանք պարտադիր ուժ ունեն բացառապես որպես պատասխանող հանդես եկած պետությունների համար, պայմանավորված է նաև ՄիԵԴ-ի դատական ակտերի կատարման նկատմամբ վերահսկողության, մեր կարծիքով, իշխան խոցելի համակարգով ու ընթացակարգերով, որոնք մեծամասնամբ թելադրված են ոչ այնքան հնորին համահունչ պրակտիկա ձևավորելու մղումով, որքան ավանդույթներով: Մասնավորապես, նկատի ունենք այն, որ վերահսկողության ողջ ընթացակարգը սահմանափակվում է միայն պատասխանող պետության կողմից ներկայացված հաշվետվություններով: Մինչեւ, իրավունքի խախտումների կամխարգելման առաջնահերթ պահանջներից է, որպեսզի նվազագույնը վերանայվեն Եվրոպական կոնվենցիային հակասող այն նույնական օրենսդրական ակտերը, որոնք շարունակում են գործել այլ պետություններում:

րում և ուժի մեջ են մնում սույ այն պատահականությամբ, որ դեռևս չեն դարձել ՄիԵԴ-ում վիճարկման առարկա:

Վերջին հաշվով, դատական ակտերի կատարման նկատմանը վերահսկողությունը պետք է, մեր համոզմամբ, հանահունչ լինի միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման խնդիրներին:

ՄիԵԴ-ի կողմից կոնվենցիոն եզրույթների ու հասկացությունների մեկնաբանության արդյունքում ձևավորվում են իրավական դիրքորոշումներ, որոնք հետազոյն օգնում են ՄիԵԴ-ին առավել արդյունավետ և օպերատիվ բննել կոնկրետ գործերը, ինչը, մեր կարծիքով, նպաստում է նաև արդարադատության մատչելիության սկզբունքի առվել հետևողական ապահովմանը:

ՄիԵԴ-ի նախադեպային իրավունքի իրավաբանական ուժի վերաբերյալ կարծիքների համաձայն՝ ՄիԵԴ-ի նախադեպային իրավունքը դասական հմաստով օժտված չէ պարտադիր իրավաբանական ուժով, հետևաբար ներպետական իրավակիրար սուբյեկտներին ազատ են դրան հետևելու և դրանով առաջնորդվելու հարցում: Ներպետական դատարանի դատավորն ազատ է որոշելու՝ առաջնորդվել այդ նախադեպով, թե՝ ոչ<sup>2</sup>: Չնայած ներպետական մակարդակում ՄիԵԴ-ի նախադեպային իրավունքն օժտված չէ պարտադիր իրավաբանական ուժով, սակայն որոշակի հանգամանքներում ներպետական իրավակիրար սուբյեկտները, մասնավորապես դատարանները, պարտավոր են հաշվի առնել ՄիԵԴ-ի նախադեպային իրավունքը: Գոյություն ունի նաև այն տեսակետը, որ ՄիԵԴ-ի նախադեպերը երկրի ներպետական համակարգում կրում են պարտադիր իրավաբանական բնույթը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եվրոպական կոնվենցիայի անդամ են տարրեր ժողովրդավարական արժեքներ և մոտեցումներ ունեցող պետություններ, որոնք դրան են միացել տարրեր պատմական ժամանակաշրջաններում՝ ՄիԵԴ-ը որդեգրել է մասնակից պետությունների հայեցողության շրջանակի դոկտրինը, որով և իմանավորվում է ՄիԵԴ-ի նախադեպային իրավունքի իրավաբանա-

<sup>1</sup> Sté. B. A. Канашевский, Прецедентная практика Европейского суда по правам человека как регулятор гражданских отношений в Российской Федерации // «Журнал российского права», 2003, 4(76), էջ 126:

<sup>2</sup> Sté. Georg Ress. The European Convention of Human Rights and States Parties: The Legal Effect of the Judgments of the European Court on Human Rights on the Internal law and before Domestic Courts of the Contracting States // Protection of Human Rights in Europe. Limits and Effects, էջ 240:

## ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կան ուժի պարտադիրության անհնարինությունը: Այն բխում է Միե՞ղ-ի համակարգի հիմքում ընկած հավասարության սկզբունքից, որը Ենթադրում է, որ Միե՞ղ-ը մասնակից պետություններուն ճարդու իրավունքների պաշտպանությանը միջամտում է միայն այն ժամանակ, եթե տվյալ մասնակից պետությունը ենթադրաբար թերառում է Եվրոպական կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները կատարելու հարցում:

Հավելենք, որ մասնակից պետություններն ազատ են կոնվենցիոն իրավունքներն ու ազատությունները իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց երաշխավորելու համար միջոցների ընտրության հարցում: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության «Դատական օրենսգրքի» 15-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է: «**Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով ...Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, եթե Վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմանը հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»: Այս և նմանաբնույթ օրենդրական դրույթների համակողմանի Վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրահանգումների՝**

■ օրենսդիրը որպես ներպետական իրավունքի աղբյուր է դիտարկում ոչ թե Միե՞ղ-ի նախադեպային իրավունքը, այլ նրա կոնկրետ վճիռը,

■ դատարանի համար պարտադիր են Միե՞ղ-ի վճիռի հիմնավորումները և ոչ թե դրառում արտացոլված իրավական դիրքորոշումները,

■ տվյալ գործի քննության ժամանակ պարտադիր են համարվում Միե՞ղ-ի այն վճիռի հիմնավորումները, որոնք կայացվել են նույնանման փաստական հանգամանքներով գործի առնչությամբ:

Այնուամենայինվ, եթե հաշվի առնենք այն

հանգամանքը, որ Եվրոպական կոնվենցիան հանդիսանում է ՀՀ ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մաս և ունի գերակայություն ներպետական օրենսդրության նկատմանք, ապա հարկ կլինի ընդունել, որ Միե՞ղ-ը նույնապես ունի գերակայություն ներպետական դատարանների նկատմամբ: Ավելին, մեկնաբանելով «նույնանման փաստական հանգամանքներով գործ» հասկացությունը Միե՞ղ-ի դատական ակտի կիրառելիության համատեքստում՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը Ս. Այվազյանի վերաբերյալ գործով 2008թ. մայիսի 23-ի որոշմամբ նշել է: «... ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի հիմնա վրա Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատական ակտը ոչ կիրառելի ճանաչելիս դատարանները չեն կարող բավարարվել կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները պարզ համադրմամբ: Ցուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքների համակցությամբ եղակի է, ուստի դատարանը պետք է յուրաքանչյուր դեպքում պարզի, թե կիրառման ենթակա և քննության առարկա գործերի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական: Հակառակ դեպքում, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասում... ամրագրված իրավանորմը կդառնա անկիրառելի»:

Դատական նախադեպի կիրառման շրջանակներն առաջմ իիմնականում սահմանափակվում են արդարատության շրջանակներով, ինչին նպաստել են հենց վերը նշված իրավական կարգավորումները: Գործնական վերլուծությունները միաժամանակ, ցույց են տալիս, որ աստիճանաբար Միե՞ղ-ի նախադեպային դատական ակտերը կիրառական նշանակություն են ծեռք բերում նաև օրինատեղի գործադիր իշխանության ոլորտներում: Մասնավորապես, միայն 2012թ. Ազգային ժողովում քննարկման ներկայացված օրինագծերից վեցում, իիմնավորումների հատվածում արտացոլված են եղել նշված դատական ակտերը: Այս հանգամանքը հաշվի առնելով, ինչպես նաև նկատի ունենալով Միե՞ղ-ի նախադեպային դատական ակտերի կիրառման շրջանակների ընդլայնման միջոցով միջազգային իրավական չափանիշներին առավել համահունչ իրավական համակարգ ձևակություն կարող է առաջանալ ենթադրությունը, կարծիքը ենթադրությունը, նպատակահարմար է այդ ակտերի կիրառման, դրանցով դեկավարվելու

## ՄԻՋԱՉՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

իրավական հիմքեր նախատեսել նաև օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործառույթների բնականոն իրականացման համար:

Մեր կողմից, միաժամանակ, հանգանանորեն ոստումնափրկել է ՄիԵԴ-ի նախադեպային որոշումներին և Եվրոպական կոնվենցիային հղումների առնչությամբ վիճակագրությունը՝ դատական համակարգում: Այսպես, քրեական գործերով վճռաբեկ դատարանի որոշումների 48%-ում առկա է հղում նախադեպային որոշումների վրա, իսկ քաղաքացիական գործերով՝ որոշումների 65%-ում: Ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով որոշումների 60%-ը պարունակում է հղումներ՝ Եվրոպական կոնվենցիայի նորմերի վրա: Այս ցուցանիշները գորեք կիսով չափ զիջում են առաջին ատյանի դատարանի կայացրած որոշումների պարագայում, և էլ ավելի են զիջում վերաբնիշ դատարանների որոշումների առնչությամբ:

Մեր կողմից իրականացված վերլուծությունների արդյունքներով պարզվել է, որ քրեական գործերով կայացված դատական ակտերում ակնհայտ է վերաբնիշ դատարանի «քացասական» ցուցանիշը՝ ՄիԵԴ-ի նախադեպային որոշմանը կամ Եվրոպական կոնվենցիայի համապատասխան հոդվածին արված հղումներին հնարավորինս սակավաթիվ դեպքերում չանդրադարձնալու միտումը: Եթե առաջին ատյանի պարագայում այս ցուցանիշը գրոյական է, Վճռաբեկ դատարանի դեպքում՝ 6 դատական ակտ, ապա Վերաբնիշ ատյանի դեպքում դատարանը չի անդրադարձ կողմի ներկայացված հղումներին 10 դատական ակտերի (2 դեպքում անտեսվել է նախադեպային, 8 դեպքում՝ Եվրոպական կոնվենցիային արված հղումը) շրջանակներում: Եթե հաշվի առնենք Վերաբնիշ դատարանի որոշումների փոքր թվաքանակը, ապա ստացվում է, որ Վերաբնիշ ատյանի դեպքում կողմի ներկայացված հղումների «անտեսումը» տեղ ունի որոշումների 77%-ում, մինչդեռ Վճռաբեկ ատյանի դեպքում՝ միայն 21%-ում:

Վերաբնիշ դատարանի և մեկ «քացասական» ցուցանիշ է դատական ակտերում բացի Եվրոպական կոնվենցիայից, նաև այլ միջազգային ակտերի կիրառման գործներացն ուսումնասիրենք իր ողջ զարգացման փուլերով: Խնդիրն այն է, որ վերը նշված հղումների սակավաթիվ լինելու մասին դատողություններ ամելիս ամերածեցին են կատդի ունենալ նաև այն, որ մեր երկրում դատարանների իրավակիրառ պարակտիկայում հիշյալ իրավական գործներացները դեռևս ծևավորման փուլում են, որ ընդամենը 10-15 տարի առաջ ընդիանաբես դժվար էր գտնել որևէ դատական ակտ, որուն լիներ հղում հիշյալ միջազգային իրավական փաստարթերին:

Բացի այդ, մենք հակված չենք կարծելու,

Վերաբնիշ դատարանի դատական ակտերում Եվրոպական կոնվենցիայի և նախադեպային իրավունքի կիրառումն առավել քիչ է արտահայտված (20 դատական ակտերից միայն մեկում):

Քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերում և «քացասական» է Վերաբնիշ դատարանի՝ ՄիԵԴ-ի նախադեպային որոշմանը կամ Եվրոպական կոնվենցիայի համապատասխան հոդվածին արված հղումներին անդրադարձնալու միտումը: Վերաբնիշ ատյանի դեպքում կողմի հղումների «անտեսումը» արձանագրվել է որոշումների 67%-ում, առաջին ատյանի դատարանի դեպքում՝ 45%-ում, իսկ Վճռաբեկ ատյանի դեպքում՝ միայն 9%-ում:

Վճռաբեկ դատարան առաջատար է Եվրոպական կոնվենցիային և նախադեպային արված հղումների մեկնաբանության առումով. մեկնաբանվել են համապատասխան որոշումների 85%-ը, մինչդեռ առաջին ատյանի դատարանի և Վերաբնիշ դատարանի պարագայում համապատասխան ցուցանիշները կազմնական են 24% և 27%:

Ինչպես և քրեական գործերով դատական ակտերի պարագայում, քաղաքացիական գործերով որոշումներում և Վերաբնիշ դատարանը հակված չէ բացի Եվրոպական կոնվենցիայից, նաև այլ միջազգային ակտեր կիրառել: Եթե առաջին ատյանի դատարանի պարագայում առկա է այդպիսի 2, իսկ Վճռաբեկ դատարանի պարագայում՝ 1 դատական ակտ, ապա Վերաբնիշ դատարանի և ոչ մի այդպիսի որոշում չի կայացվել<sup>3</sup>:

Իհարկե, մենք այս ցուցանիշների առնչությամբ կարող ենք սպառիչ եզրահանգումներ ամել, եթե միջազգային իրավունքի նորմերի կիրառման գործներացն ուսումնասիրենք իր ողջ զարգացման փուլերով: Խնդիրն այն է, որ վերը նշված հղումների սակավաթիվ լինելու մասին դատողություններ ամելիս ամերածեցին են կատդի ունենալ նաև այն, որ մեր երկրում դատարանների իրավակիրառ պարակտիկայում հիշյալ իրավական գործներացները դեռևս ծևավորման փուլում են, որ ընդամենը 10-15 տարի առաջ ընդիանաբես դժվար էր գտնել որևէ դատական ակտ, որուն լիներ հղում հիշյալ միջազգային իրավական փաստարթերին:

Բացի այդ, մենք հակված չենք կարծելու,

<sup>3</sup> Տե՛ս. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ - «Սարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային կիրառումը ՀՀ դատարանների կողմից». 2011թ:

որ միջազգային դատական ատյանների նախադեպային դատական ակտերի կիրառման վերոհիշյալ փորձն ինքնըստինքյան կարող է խստ խրախուսելի համարվել: Խնդիրն այն է, որ հաճախ իրենց ակնհայտ անհիմն, սխալ իրավական դիրքորոշումներին օրինական տեսք տալու մղումով դատական ատյանները, գուտ ծևական նկատառումով են կիրառում դրանք՝ յուրովի մեկնաբանելով իիշյալ նախադեպային իրավունքի աղբյուրները: Թերևս, ասվածի համար իմանավորում կարող է հանդիսանալ այն, որ այդպիսի հղումներ պարունակող դատական ակտերի շուրջ 17 տոկոսը բեկանվել է վերադաս դատական ատյանների կողմից:

Կարծում ենք, սա չափազանց վտանգավոր երևույթ է, քանզի այսպիսի զարգացումները, ի վերջո, կարող են հանգեցնել միջազգային նախադեպային իրավունքի նկատմամբ անհրաժեշտ վստահության ու իրավունքի այդ աղբյուրների հեղինակության նվազման, մինչեւ՝ հենց վճռաբեկ դատարանի ներկայացուցիչներն են բազմիցս պաշտոնական հայուներ, որ իրենք հետապնդում են նախադեպային իրավունքի կիրառման

գործընացի բարելավման ամնահանց նպատակ:

Անկոփելով, ՄիԵԴ-ի վճիռների կիրառման իմանախնդիրների վերաբերյալ նյութը, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ միջազգային դատական ատյանների դատական ակտերի կատարման, ինչպես նաև կիրառման իմբռում դրվում են ոչ թե դասական իմաստով համապարտադիր նորմատիվ պահանջները, այլ տասնամյակների ընթացքում ծևակորված իրավական ավանդույթները, իրավական մշակույթը, որոնք գործնականում ավելի առանցքային նշանակություն ու արժեք ունեն, քան բազմաթիվ նորմատիվ իրավական ակտերում ամրագրված նորմերը: Սակայն, մյուս կողմից, եթե արդի որոշ մարտահրավերները միտված են արդեն իսկ ծևակորված իրավական մշակույթը խիստ վիճահարուց ու անընդունելի որակելու, կարծում ենք, հարկ է ՄիԵԴ-ի դատական ակտերի կիրառմանն առնչվող հարաբերությունները հնարավորինս սեղմ ժամկետներում դարձնել հստակ կանոնակարգման առարկա:

### ПРАВОВАЯ ЦЕННОСТЬ РЕШЕНИЙ ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА В ВНУТРИГОСУДАРСТВЕННОЙ ПРАВОВОЙ СИСТЕМЕ

Европейский суд по правам человека часто по необходимости и неизбежно комментирует положения Европейской конвенции по правам и основным свободам человека, что придает решению Европейского суда нормативную сущность.. Перед тем как использовать то или иное положение Европейской конвенции, Европейский суд по правам человека должен комментировать соответствующую норму международного права, в частности ее смысл, дух и нормативное содержание. Необходимо принимать во внимание, что для того чтобы гарантировать выполнение обязательств, взятых на себя государствами членами Европейской конвенции, Европейский суд по правам человека прорабатывает и закрепляет правовые стратегии, в которых сформированы общие для всех член-государств параметры защиты прав человека. Несмотря на то, что прецедентное право Европейского суда по правам человека на внутригосударственном уровне не наделен обязательной юридической силой, в некоторых случаях субъекты внутригосударственного правопримениительного права, в частности суды, обязаны принять во внимание прецедентное право Европейского суда по правам человека.

### LEGAL VALUE OF THE DECISIONS EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS IN THE DOMESTIC LEGAL SYSTEM

In accordance to European Convention the European Court of Human Rights is competent not only to use, but also to comment on the provisions of the European Convention. Before using a provision of the European Convention, the European Court of Human Rights should comment on relevant rules of international law, in particular its meaning, spirit and normative content. In order to ensure fulfillment of the obligations assumed by Member States of the European Convention, the European Court of Human Rights establishes the legal strategy, which forms parameters of human rights common to all Member States. Despite the fact that the case law of the European Court of Human Rights at the national level does not possess binding, in some cases, the subjects of domestic law, in particular the courts must take into account the case law of the European Court of Human Rights.

# ՊԵՏԱԿԱՆ ԻՉԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԱհմանագատման ԻիՄԱԽԱԽՆԴԻՐՆԵՐԸ\*

Գուրգեն ԱՅՎԱՋՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

«Կառավարության նորմաստեղծ գործունեության մեջ հսկողության տակ երբեմն հասկացվում է գործադիր իշխանության համապատասխան սուբյեկտների կողմից հաշվետվությունների ստացումը, ուստիև առաջնահրումը և վերլուծումը: Այդ մասին է վկայում, օրինակ «Կառավարության 10.05.2008 թ. N 503 որոշումով հաստատված Ֆինանսների նախարարության կանոնադրության 8-րդ կետի, 11-րդ ենթակետի «ա» պարբերությունը այն մասին, որ վերջինս հսկողությունը է իրականացնում պետական կառավարչական հիմնարկների կողմից պետական բյուջեով նախատեսված ծախսերի կատարման իսկության, նպատականության և արդյունավետության նկատմամբ նշված մարմիններից հաշվետվությունների ստացման ուսումնահրության, վերլուծության միջոցով:»

Յայաստանի Յանրապետության հարկային օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ գործադիր իշխանությունը այս բնագավառում հիմնականում իրականացնում է հսկողության լիազորություններ: Այսպես՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ հարկերի հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ հսկողությունը է իրականացնում հարկային տեսչությունը, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ մաքսային մարմինը: Այս դրույթը իր արտացոլումն է ստացել նաև Հարկային ծառայության մասին ՀՀ օրենքում (օրենքի 4-րդ, 5.1-րդ հոդվածներ, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ, 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ և այլն): Այստեղ օրենսդիրն օգտագործել է նաև «Վերահսկվող եկամուտներ» հասկացությունը (տերմինը) (4-րդ հոդվածի նախավերջին պարբերություն, 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ), որի տակ հասկանում է պետական և հանայնքային բյուջեներ վճարվող հարկե-

րի, տուրքերի և այլ պարտադիր վճարների, դրանց նկատմամբ հաշվարկվող տույժերի և տուգանքների վճարման նկատմամբ հսկողությունը: Քննարկվող օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն հարկային մարմինը իրավունք ունի հարկ վճարողներից պահանջել հայտնաբերված հարկային օրենսդրության խախտումների վերացում և վերահսկել (ընդգծումը մերն է՝ Գ. Ա.) առաջադրված պահանջի կատարումը: Սա նշանակում է, որքանով մեզ է թվում, որ հարկային մարմինը հսկողության իրականացնումով դրա արդյունքում երբեմն կարող է կատարել նաև վերահսկողությանը յուրահատուկ գործառույթ:

Այլ կերպ ասած՝ օրենսդրությամբ սահմանված հարկային մարմնի առաջին և հիմնական լիազորությունը՝ հսկողությունը այստեղ համեստ է գալիս որպես ավելի լայնամասշտաբ հասկացություն (տերմին), քան երկրորդը՝ վերահսկողությունը, որը

\* Ակիզբը՝ N 65-ում:

չեն ընդունում վարչական և ֆինանսական իրավունքների առանձին մասնագետներ:

Մեր կարծիքով՝ օրենսդիրը նշված դեպքերում «վերահսկում» տերմինի փոխարեն կարող էր օգտագործել գիտական շրջանառության մեջ առկա «կատարման ստուգում» բառակապակցությունը, որով և կրացառվեր միևնույն տերմինի կիրառումը պետական իշխանության տարրեր մարմինների հանրային ֆինանսների կառավարման գժով լիազորությունները սահմանելիս: Այստեղ «վերահսկվող եկամուտներ», «վերահսկում» համարությունները միևնույն նշանակությունն ունեն, նույնական են «հսկողության» հետ և բոլորն էլ իրացվում են ստուգումների, վերլուծությունների և հետազոտությունների միջոցով:

Ֆինանսական վերահսկողություն և հսկողություն տերմինների (համարությունների) սահմանագատման բացակայության ևս մի օրինակ է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-րդ հոդվածի հետևյալ դրույթը, «Դամայնքի ավագանու և համայնքի դեկավարի կողմից իրականացվող բյուջետային կամ ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացվում է ֆինանսական հսկողություն «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»: Սակայն, հարկ է նշել, որ «Բյուջետային համակարգի մասին» օրենքում «ֆինանսական հսկողություն» տերմինը ընդհանրապես չի օգտագործվել, իսկ 34-րդ հոդվածը սահմանում է, որ համայնքների բյուջեների կատարման նկատմամբ հանրային իշխանության համապատասխան մարմինները իրականացնում են վերահսկողություն, հետևաբար «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի քննարկվող հոդվածում նույնպես պետք է գրվեր «ֆինանսական վերահսկողություն» տերմինը, ինչպես այն օգտագործվել է նույն օրենքի 68.1-րդ և 77-րդ հոդվածներում: Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ օրենսդիրը տարբերություն չի դնում վերլուծվող երկու հասկացությունների միջև և մյուս կողմից, չի ապահովում նոյն հարա-

բերությունը կարգավորող, իր կողմից հրապարակած նորմատիվ իրավական ակտերի միջանց համապատասխանությունը:

Վերահսկիչ պալատը ՀՀ Սահմանադրության համաձայն վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Ինչպես նշել ենք սույն հոդվածի սկզբնամասում նման մարմնի կազմավորման և կարգավիճակի իրավական որոշման հարցերը պետությունների գերակշռող մեծամասնությունում տրված են երկրի բարձրագույն օրենսդիր իշխանությանը, որը համարվում է պարագանետի կամ նրան կից մարմին և վերահսկողական գործառույթներ իրականացնելիս հանդես է գալիս վերջինիս անունցից:

Դայաստանի Հանրապետության վե-

**«...«Հարկերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ հարկերի հաշվարկման և վճարման կարգի նկատմամբ հսկողություն է իրականացնում հարկային տեսչությունը, իսկ օրենքով սահմանված դեպքերում մարսային մարմինը...»**

րահսկիչ պալատի ֆինանսական վերահսկողության լիազորությունները առավել մանրամասն կանոնակարգված են նրա մասին օրենքում, համաձայն որի այն համարվում է արտաքին վերահսկողություն իրականացնող պետական մարմին: Վերահսկիչ պալատի մասին օրենքում, մեր կարծիքով, պետք է լինեին նաև դրույթներ այն մասին, որ այն համարվում է պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմին (ինչպես ճիշտ սահմանված էր նրա մասին նախկին օրենքի 1-ին հոդվածում) և համակարգում է ֆինանսական վերահսկողության մյուս մարմինների գործունեությունը: Դամակարգման գործառույթի մասին, այն էլ ոչ հստակ և ոչ ընդգծված, նշված է Օրենքի 26-րդ հոդվածում: Ընդ որում, տեսական գրականության մեջ և տարրեր պետությունների օրենսդրական ակտերում կա դրույթ այն մասին, որ այս կառույցը հանրավում է ֆինանսական վերահսկողության բարձրա-

բերությունը կարգավորող, իր կողմից հրապարակած նորմատիվ իրավական ակտերի միջանց համապատասխանությունը:

Վերահսկիչ պալատը ՀՀ Սահմանադրության համաձայն վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Ինչպես նշել ենք սույն հոդվածի սկզբնամասում նման մարմնի կազմավորման և կարգավիճակի իրավական որոշման հարցերը պետությունների գերակշռող մեծամասնությունում տրված են երկրի բարձրագույն օրենքի իշխանությանը, որը համարվում է պարագանետի կամ նրան կից մարմին և վերահսկողական գործառույթներ իրականացնելիս հանդես է գալիս վերջինիս անունցից:

Դայաստանի Հանրապետության վե-

## ՖԻՆԱՆՍԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

գոյսն մարմին: Մինչդեռ ՀՀ Ազգային ժողովը, անտեսել է նշված հանգամանքը և Սահմանադրության 83.4 հոդվածի բովանդակությունը այն նասին, որ նշված ծառայությունը վերահսկողություն է իրականացնում բաշխության միջոցների և պետական ու հանայնքային սեփականության օգտագործման նկատմամբ՝ գործառույթ, որն անվիճելի կարգով իրավաբանական գիտական գրականության մեջ ընդունվում է որպես պետական ֆինանսական վերահսկողություն: Այս կարծիքը հիմնավորում է նաև ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, համաձայն որի Ազ-

**«...Հարկային մարմինը  
հսկողության իրականացումով  
դրա արդյունքում երբեմն  
կարող է կատարել նաև  
վերահսկողությանը  
յուրահատով գործառույթ...»**

գային ժողովը վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում և հաստատում է պետության գլխավոր ֆինանսական ծրագրի՝ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը: Գործնականում նշված հետևողունը պնդում են նաև վերահսկիչ պալատի աշխատանքների արդյունքների ամենամյա հաշվետվությունները՝ ներկայացրած Ազգային ժողովին և մեր կողմից նախկինում կատարված դրանց վերլուծությունները:<sup>1</sup>

Սակայն ներկայումս գործող «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքում միայն մեկ անգամ է օգտագործվել «ֆինանսական վերահսկողություն» տերմինը (18-րդ հոդվածի 2-րդ կետ), որտեղ պետական վերահսկողության տեսակների շարքում

նշում է նաև ֆինանսական վերահսկողությունը՝ այն չձևակերպելով որպես այս մարմնի հիմնական և առանցքային գործառույթ:

Համապետական ֆինանսական վերահսկողության գործունեության մեջ առանձին մարմնների լիազորությունների հստակ սահմանագատման և կրկնությունները բացառելու համար մի շարք իրավագետ գիտնականներ առաջարկում են ունենալ օրենք պետական ֆինանսական վերահսկողության վերաբերյալ՝ ընդգծելով և հիմնվորելով դրա անհրաժեշտությունը և կարևորությունը՝ պայմանակրությալ հետևյալ հանգանքներով՝

1. Փինանսական վերահսկողության մասին օրենքը կդառնա նորմատիվ իրավական բազա պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար.

2. այս ակտով կվերանա իրավական անորոշությունը, որ գոյություն ունի ֆինանսական վերահսկողության բնագավառում իրավական նորմերի կարգավորման և կատարելագործման հարցում.

3. նշված օրենքի ընդունումով կհամակարգվի ֆինանսական վերահսկողության մարմինների գործունեությունը, կրացառվի կրկնությունները, զուգահեռականությունը և կոլիզիայի երևույթները:<sup>2</sup>

Պետական վերահսկողության տարր համարվող տեսչական ստուգումը, ինչպես նշված է ՀՀ Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1135-ն որոշման մեջ, կարգավորող օրենսդրությունը դնդիանուր առմանք աչքի է ընկնում բազմա-

<sup>1</sup>Տե՛ս. Այվազյան Գ.Յ. ՀՀ Ազգային ժողովի վերահսկողությունը գործադիր իշխանության ոլորտում օրինականության և կարգապահության ապահովման գործում: /Հումանիտար գիտությունների արդի զարգացման հիմնախնդիրները Հայաստանում/ Երևանի «Գլանը» համալսարանի պրֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների երկրորդ գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու/ Երևան, 2005, էջ 37-47/:

<sup>2</sup>Տե՛ս. Կոնюхова Т. В. Вопросы о концепции проекта федерального закона, “О финансовой контроле”, Журнал Российского права, М. 2006 г., № 6; էջ 23, И. В. Демидов. Парламентский Контроль в Российской Федерации. Современное состояние и проблемы реализации. // Государство и право М. 2009г., № 4, էջ 91 ևայլն:

թիվ թերություններով, պարունակում է պետական մարմինների գործառույթների կրկնությունների (ընդգծումը մերն է - Գ. Ա.) գործընթացների կարգավորման բացեր և կարգավորման թերի նեխանիզմներ:<sup>3</sup> Ինչպես վկայում են ներ ուսումնասիրություններն ու վերլուծությունները, նշված թերությունները առկա են նաև պետական ֆինանսկան վերահսկողության հարաբերությունները կարգավորող օրենսդրության մեջ:

Ֆինանսական վերահսկողության մարմինների հրավասությունը կարգավորող նորմատիվ ակտերի մեջ լիազորությունների, գործառությունների և վերահսկման օրենքների կրկնության (կոլիզայի) երևույթներ առկա են «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ Կառավարության 15.05.2008թ. N 503 որոշումով հաստատված ֆինանսների նախարարության կանոնադրության մեջ, որոնք մեր վերլուծությունների արդյունքներով հիմնավորվում են ներքոհիշյալ եզրահանգումներով:

1. Բովանդակության տեսակետից համընկնում են Վերահսկիչ պալատի մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները Ֆինանսների նախարարության կանոնադրության 8-րդ կետի, 11-րդ ենթակետի, «Գ» պարբերության հետ: Այսպես, ըստ նշված Օրենքի բյուջետային ելքերի և պետական ու համայնքային սեփականության օգտագործման վերահսկողության նպատակով վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ներառյալ՝ դրանց աշխատակազմերը, ենթակա հիմնարկներում, իսկ Ֆինանսների նախարարությունը հսկողություն է իրականացնում պետական և տարածքային կառավարման մարմինների ու համայնքների կողմից պետական բյուջեի կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների

ճշտության և օրինականության նկատմանք:<sup>4</sup> Այլ կերպ ասած՝ երկու դեպքում էլ նշված մարմինների վերահսկողության օբյեկտը նույնն է՝ պետական և համայնքային բյուջետային միջոցների և գույքի օգտագործումը, միայն այն տարրերությամբ, որ ըննարկվող նորմատիվ իրավական ակտերում վերահսկիչ պալատի պարագայում օգտագործվում է «Վերահսկողություն», իսկ ֆինանսների նախարարության դեպքում՝ «հսկողություն» տերմինը և եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ ՀՀ իրավաստեղծ մարմինները գրեթե տարբերություն չեն տեսնում այդ հասկացությունների:

**«...Վերահսկիչ պալատի մասին օրենքում, մեր կարծիքով, պետք է լինեին նաև դրույթներ այն մասին, որ այն համարվում է պետական ֆինանսական վերահսկողության բարձրագույն մարմին...»**

Ի նիշն, հետևաբար բարի փոփոխությունը բովանդակության և իմաստի փոփոխություն չի առաջացնում:

2. Վերահսկիչ պալատի մասին օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է դրույթ այն մասին, որ նա իրավասու է վերահսկողություն իրականացնել միայն բյուջեի մուտքերն ապահովող լիազոր մարմինների (պետական մարմիններ) կողմից կատարվող գործառույթների նկատմամբ փաստաթղթային ստուգման միջոցով՝ առանց հարկ, տուրք, պարտադիր վճար, վարչական տուգանք, այլ վճար վճարողի մոտ ստուգում անցկացնելու: Ըստ նշված Կանոնադրության 8-րդ կետի, 11-րդ ենթակետի «Բ» պարբերության ֆինանսների նախարարությունը իրականացնում է հսկողություն բյուջետային գումարներ հավաքագրող կամ բյուջետային եկամուտների գանձման նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմինների ու լիազորված իրավաբանական անձանց կողմից նշված եկամուտների հավա-

<sup>3</sup> Տե՛ս. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N 51, 2009 թ.:

<sup>4</sup> Տե՛ս. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N 36, 2008 թ., N 3, 2007 թ.:

## ՖԻՆԱՆՍԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

քագուման գործառությի կատարման նկատմամբ՝ բացառելով դրա շրջանակներում հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարների ու վարչական տուգանքներ վճարողների և հարկային գործակալների նոտս ստուգումները:<sup>5</sup> Առաջին կետում կատարած մեկնարանան եղրակացությունը կիրարելի է նաև այստեղ, քանի որ առկա է գործառույթների կրկնում, զուգահեռականություն՝ ուղղված վերահսկողության նույն օրեկտին:

3. Վերահսկիչ պալատի մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում կա դրույթ նաև այն մասին, որ այս ծառայությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ֆինանսական վերահսկողությունից բացի գնահատում է դրանց

թյան համաձայն՝ այս մարմինը հսկողություն է իրականացնում պետական կառավարչական իիմնարկների արտաքյուժետային միջոցների օգտագործման նկատմամբ:<sup>7</sup>

Այս համեմատությունը ևս վկայում է, որ միևնույն օրեկտի նկատմամբ վերահսկողության լիազորությունների և գործառությունների ոչ հստակ սահմանազատում, կրկնում և զուգահեռականություն:

5. Լիազորությունների (գործառույթների) կրկնություն առկա է նաև վերահսկիչ պալատի մասին օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետում և ֆինանսների նախարարության կանոնադրության 7-րդ կետի 8-րդ ենթակետում: Երկու դեպքում էլ վերահսկողության օրեկտը նույնն է՝ արտաքին վարկային միջոցների օգտագործումը:

Պետական ֆինանսական վերահսկողության գործում կոլիգայի երևույթներ, մեր կարծիքով, առկա են

ներքին վերահսկողության համակարգը (ընդգծումը մերն է - Գ. Ա.): Բովանդակության և իմաստի առումով այս դրույթին համընկնում է ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 8-րդ կետի, 11-րդ ենթակետի «ե» պարբերությունը, որի համաձայն այս մարմինը հսկողություն է իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներքին առուղիտի նկատմամբ՝ գնահատման միջոցով (ընդգծումը մերն է - Գ. Ա.):<sup>6</sup> Այս կապակցությամբ նաև նշենք, որ ՀՀ իրավանեղո՞ս մարմինները իմաստի տեսանկյունից տարբերություն չեն դնում «ներքին վերահսկողություն» և «ներքին առուղիտ» տերմինների միջև։

4. Վերահսկիչ պալատի մասին օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» պարբերությունը սահմանում է դրույթ, որ այն իրականացնում է վերահսկողություն պետական արտաքյուժետային միջոցների օգտագործման նկատմամբ։ Ֆինանսների նախարարության կանոնադրության 8-րդ կետի, 11-րդ ենթակետի «գ» պարբերու-

նաև այլ նորմատիվ իրավական ակտերում։ Այսպես՝ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով (2007թ. հոկտեմբերի 24-ի խմբագրությամբ) համայնքի բյուջեի կատարման, համայնքային սեփականության և բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն են իրականացնում համայնքի պալագանին և վերահսկիչ պալատը (օրենքի 68-րդ, 68.1-րդ հոդվածներ)։ Այստեղ դրույթը չկա այն մասին, որ համայնքի բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը և Կառավարությունը, ինչպես նշված է «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2.1 մասերում։ Ընդ որում, նշված հոդվածի 2.1-րդ մասում սահմանված են Կառավարության վերահսկողության օրեկտները, ինչպիսիք են սուբվենցիաների, պետական գույքի մասնավորեցումից համայնքի բյուջե մասհանված գումարների, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրակա-

<sup>5</sup> Տե՛ս. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր N 36, 2008 թ., N 3, 2007 թ.:

<sup>6</sup> Տե՛ս. Նույն տեղում։

<sup>7</sup> Տե՛ս. Նույն տեղում։

նացման ծախսերի ֆինանսավորման նպատակով տրված միջոցների, պետական բյուջեից և այլ աղբյուրներից ներդրավված փոխառու միջոցների օգտագործումը և դրանց մարման ծրագրի կատարումը: Նման իրավիճակը, մեր կարծիքով, ունի հետևյալ բացատրություն: Ազգային ժողովի պարագայում դա հասկանալի է, քանի որ նրա այդ իրավասությունը, մասնաբ անցել է վերահսկիչ պալատին, որի վերաբերյալ փոփոխություն պետք է կատարվեր «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածում՝ Ելեկով բարեփոխված ՀՀ Սահմանադրության 83.4. հոդվածի և վերահսկիչ պալատի մասին օրենքի դրույթներից: Կառավարության տրված նշանը գործառությունը իրենց լրացուցիչ զարգացումը և արտացոլումն են ստացել ֆինանսների նախարարության կանոնադրության մեջ: Այս դեպքում դարձյալ առկա է վերահսկման գործառույթների կրկնություն վերահսկիչ պալատի և Ֆինանսների նախարարության մոտ համայնքային բյուջեի կատարման նկատմամբ: Այնուհետեւ, օրենսդիրը Տեղական ինքնակառավարման մասին օրենքում ավելի է հստակեցնում և կոնկրետացնում վերահսկիչ պալատի լիազորությունը՝ անդագրելով դրույթ այն մասին, որ վերջինս տարին մեկ անգամ ստուգում է (ընդգծում մերն է - Գ. Ա.) պետական բյուջեից համայնքներին տրամադրված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը: Այս հանգամանքը ևս վկայում է, որ գործնականում համայնքային բյուջեների նկատմամբ վերահսկողության գործառույթը իրականացնում են վերահսկիչ պալատը և համայնքի պավագանին: Քննարկվող օրենքում, որն ընդունվել է «Բյուջետային համակարգի մասին» օրենքից ավելի ուշ, հա-

մայնքի բյուջեի նկատմամբ կառավարությանը վերահսկողական գործառույթ չի նախատեսված: Եթևաբար օրենսդրը պետք է միմյանց համապատասխանեցնի նշանը օրենքները:

Վերոհիշյալ վերլուծությունները վկայում են պետական իշխանության երկու մարմինների իրավասության սահմանման ժամանակ չհամաձայնեցված գործողությունների, թույլ տրված խախտումների և այլ բացասական երևույթների մասին, որը կարելի է մեկնարանել որպես իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքից շեղվելու դրսեղություն:<sup>8</sup>

Այս կարծիքը որոշակի վերապահումով կիրառելի է Ազգային ժողով – Վերահսկիչ պալատ - Կառավարություն հարաբերության նկատմամբ: Այսպես, Վերահսկիչ պա-

**«...Համապետական ֆինանսական վերահսկողության գործունեության մեջ առանձին մարմինների լիազորությունների բացառությունները բացառելու համար միշտ իրավագեն գիտնականներ առաջարկում են ունենալ օրենք պետական ֆինանսական վերահսկողության վերաբերյալ...»**

լատը կազմակերպահրավական տեսակետից սերտ կապի մեջ է Ազգային ժողովի հետ և, ինչպես նշել ենք, պետությունների ճնշող մեծամասնությունում այս մարմինը համարվում է պառանձնութի կամ նրան կից մարմին, ինչպիսին էր Հայաստանի Հանրապետությունում մինչև 2006 թվականը՝ անվանվելով Ազգային ժողովի վերահսկիչ պալատ: Եթևաբար, սրանց իրավասությունների համընկնումը պետական ֆինանսական վերահսկողության ոլորտում կարող ենք համարել ինչ-որ կերպ արդարացված, իրավաչափ, իսկ Կառավարություն (նաև վերահսկող օրենքում) և Վերահսկիչ պալատ հա-

<sup>8</sup> Տե՛ս. Ю. Ա. Տիխոմիրով, Կոլլիզիոնու պարագաներ, Մ., 2005 թ., էջ 220:

րաբերություններում վերահսկողական լի-ազորությունների որոշակի սահմանազա-տումը անհրաժեշտ է:

Ինչպես ճիշտ նկատում է Յու. Տիխոնի-ռովը, տարբեր մարմինների անկարողու-թյունը կամ չցանկանալը, որոնք կոչված են համատեղ ներգործել ընդհանուր կամ միջայուղային կառավարման օրենսդրի (քննարկվող թենայում հանրային ֆինանսների) վրա և դրանց մասնակցության բաժ-նի ոչ ճիշտ որոշումներ առաջ է բերում գոր-ծառույթների կրկնություն, գուգահեռակա-նություն, ինչպես նաև, մեկ պետական

բար նշված լիազորությունը գործադրի մարմնին վերագրելը հակասում է Սահմա-նադրությանը:

Մյուս կողմից՝ միմյանց չհամապատաս-խանելու, երբեմն էլ հակասելու, այլ կերպ ասած, կոլիզիայի երևույթները դրսնորվում են ՀՀ Սահմանադրության և վերլուծված օրենքների միջև, վերջիններիս և Կառա-վարության նշված որոշումների միջև, որոնք կարգավորում են պետական ֆի-նանսական վերահսկողության հարաբե-րությունները:

Վերահսկիչ պալատի մասին օրենքի և Ֆինանսների նախարա-րության կանոնադրու-թյան մեջ առանձին դրույթների կրկնության արդյունքում առաջացած հակասությունը և այս նա-խարարությանը վերահս-կիչ պալատին վերապահ-ված առանձին լիազորու-թյուններով օժտելը ի թիվս այլ պատճառների,

մեր կարծիքով, պայմանավորված է նաև նեղ գերատեսչական շահերով, նշված ակ-տերի պատրաստման ընթացքում օրենս-դրության պահանջները չպահպանելու, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված նորմատիվ ակտերի նա-խագծերի համաձայնեցնան գործընթաց-ները անտեսելու, ոչ պատշաճ պետական իրավական փորձաքննություն կատարելու և օրենսդրական տեխնիկայի կանոնները չպահպանելու հանգամանքով։ Դամամիտ ենք արտահայտված այն մտքի հետ, որ նորմատիվ իրավական ակտերի մշակման ընթացքում երեսմ դրսնորվում են «կոնկ-րետ իրավական դիրքորոշումներ»՝ ելե-լով գերատեսչական շահերից և շրջանցե-լով ավելի բարձր իրավաբանական ուժ ու-նեցող ակտերը, առանձին սուբյեկտների «իրավական դերերը» ծագում են (որոշ-վում) ըստ նրանց հայեցողության։<sup>10</sup>

Բացի այդ՝ իշխանության մարմինները սուբյեկտիվ գործոնների ուժով (նրանցում աշխատում են կենդանի մարդիկ) յուրա-քանչյուրը ձգտում է առավելագույն չա-

### «...ՀՀ իրավանտեղծ մարմինները իմաստի տեսանկյունից տարբերություն չեն դնում «ներքին վերահսկողություն» և «ներքին առողջիություն» տերմինների միջև...»

մարմնի կողմից մյուսի լիազորությունների փաստացի յուրացում։<sup>9</sup>

Այսպիսով, վերևում կատարած երկու պետական մարմինների իրավասությունների վերլուծումը և համադրումը վկայում է, որ պետական ֆինանսական վերահսկո-ղության ոլորտում ՀՀ կառավարությունը ֆինանսների նախարարությանը օժտել է առանձին լիազորություններով, որոնք ըստ Սահմանադրության և վերլուծված օրենք-ների պատկանում են՝ Վերահսկիչ պալա-տին։ Նման իրավիճակը, մեր կարծիքով, հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի դրույթին, համաձայն որի կառավարության իրավասությանն են են-թակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական մարմինների։ Մինչդեռ բյշետային միջոցների և պետական ու հա-մայնքային սեփականության օգտագոր-ձման նկատմամբ վերահսկողության իրա-վասությունը ՀՀ Սահմանադրությունը վե-րապահել է Վերահսկիչ պալատին (Սահ-մանադրության 83.4.-րդ հոդված)։ Դետա-

<sup>9</sup> Տե՛ս. Ю. Ա. Տիխոմիրով, Կոլլիզիոնное право., Մ., 2005 թ., էջ 220.

<sup>10</sup> Տե՛ս. Ю. Ա. Տիխոմիրով, Կոլլիզիոնное право., Մ., 2005 թ., էջ 73.

փով իրեն վերագրել, ավելի ճիշտ «գրավել» մյուս մարմինների գործառույթները:<sup>11</sup> Այս համատեքստում չենք կարող անտեսել և. Սատուրացվի կարծիքը, համաձայն որի կոլիզիայի սուբեկտիվ պատճառներին են վերաբերություն որենքների ցածր որակը, իրավական նյութի կանոնակարգված չլինելը, վրիհպունքները իրավունքի մեջ, իրավաստեղծ գործունեության թույլ համակարգումը, լորիզմի դրսևորումները, տեղեկատվության պակասը, իրավական ակտերի սոցիալ-տնտեսական հետևանքների ցածր որակով կանխատեսումները:<sup>12</sup>

Կոլիզիայի առաջացմանը նպաստում են նաև սահմանադրական կարևորագույն սկզբունքները, հասկացությունները, չափանիշները և տերմինները անտեսելը, դրանց չարտացոլելը կամ ոչ միշտ կիրառելը իրավաստեղծ գործունեության մեջ:

Մեկ անգամ ևս հիշենք, որ նորմաստեղծ գործունեության կարևորագույն չափանիշ է համապատասխան հարցում համապատասխան սկզբունքը և ապահովումը: Առաջին հերթին սա նշանակում է, որ ՀՀ Կառավարությունը պարտավոր է գործել Սահմանադրությամբ և գործող օրենքներով իր համար սահմանված շրջանակներում և նրա նորմատիվ ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրության ու օրենքներին:

Գործադիր մարմնի նորմաստեղծ գործունեության նկատմամբ տարածվում են օրենքի գերակայության, իրավական կարգավորման որոշակիության և չհակասելու սկզբունքները: Այլ կերպ ասած՝ Կառավարության Սահմանադրությունը և օրենսդիրը հանձնարարում է այն ծավալի լիազորություններ, որպեսզի դրանց իրականացնան ընթացքում չլինեն կամային դրսևորումներ և չխախտվի հշխանությունների բաժանման սկզբունքը:<sup>13</sup>

Այս կապակցությամբ անհրաժեշտ է վկայակոչել ՀՀ Սահմանադրության այն դրույթները, որ պետական իշխանությունը իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այն պիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով: Սահմանադրությունը ունի բարձրագույն իրավաբանական ուժ, օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությամբ և օրենքներին: Պետական ֆինանսական վերահսկությունը մարմինների իրավասության որոշման հարցում սահմանադրական այս սկզբունքը, մեր կարծիքով, ոչ միշտ է հետևողականորեն իրագործվել օրենսդիր և գործադիր մարմինների կողմից, և տեղիք տվել իրավական անորոշությունների: Իսկ օրենսդրական կարգավորման գործում առանձին դեպքերում դրսևորվող անդրոշությունը հնարավորություն է տալիս անսահմանափակ հայեցողության համար իրավակիրառական գործընթացում, հանգեցնում է կամայականությունների և վերջին հաշվով՝ օրենքի գերակայության խախտմանը:<sup>14</sup>

Մյուս կողմից՝ «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը (հոդված 24), հիմք ընդունելով Սահմանադրության վերոհիշյալ դրույթները, կատարում է նորմատիվ ակտերի ստորադասում (դասակարգում՝ նշելով, որ դրանք գործում են Սահմանադրության և այդ օրենքով սահմանված՝ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերի գերակայության սկզբունքի հիման վրա: Պետական իշխանության մարմինները պարտավոր են պահպանել այդ սկզբունքը իրավաստեղծ և իրավակիրառիչ գործունեության ընթացքում:

<sup>11</sup>Տես. Разделение властей, Отр. Ред., М. Н. Марченко, М., 2004 г., էջ 69.

<sup>12</sup>Տես. Матузов Н. И., Актуальные проблемы теории права, М., 2003 г., էջ 208-209.

<sup>13</sup>Տես. Комментарий к Конституции Российской Федерации. Под. Ред. В. Зоркина, Л. Лазарева, М., 2009 г., էջ 880.

<sup>14</sup>Տես. Матейкович М. С., Дефекты Конституционного правового регулирования в Российской Федерации. // Государство и право 2007г., № 12, էջ 16.



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

76, 2013

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ Նախագահի երդմնակալությունը.....	2
Օրենսդրական բարեփոխումներ.....	3
Միջազգային կապեր.....	3
Նախագահը ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմին ներկայացրել է նոր պետին.....	8
Հոբելյան.....	9
Սեծարման երեկո.....	9

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Դավիթ ԹօնսսազըԱն Ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների անձի ուսումնասիրություն ու դատապարտյալների ուղղումը.....	10
---	----

### ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Յուրի ՂՈՒԿԱՍՅԱՆ Իրավունքի հասկացության շուրջ.....	19
---	----

### ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅՈՒՆ

Կրմեն ՌՃՏՈՒՆԻ Ազատ իրավունքի հայեցակարգը.....	25
---	----

### ԲՆԱՊԱՇԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կարիմե ՋԱԿՈԲՅԱՆ Միջազգային էկոլոգիական վեճերի կարգավորման հիմնախնդիրները.....	32
--	----

### ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆԵՐՆԵՐ

Վիլիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Արդարության կատեգորիան միջնադարյան մտածողների իրավական հայեցակարգերում.....	38
---	----

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

Զարուհի ԹԱՍԱԶՅԱՆ Վանդալիզմ.....	43
---------------------------------	----

### ՄԻԶԱԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սարիմե ԳՅՈՒՐՋՅԱՆ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների իրավական արժեքը.....	51
---	----

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գուրգեն ԱՅՎԱԶՅԱՆ Պետական իշխանության նարմինների ֆինանսական վերհսկողության գործառույթների իրավական սահմանագատման հիմնախնդիրները.....	56
---	----